[ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ]

Մ. Խ. ԴԱՎԹՅԱՆ
Հ. Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ.

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մ. ԴԱՎԹՅԱՆ, Հ . ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 070(091)
ԳՄԴ 76.0
Դ 234

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Մ. Խ. Դավթյան, Հ. Գ. Մանուչարյան
Դ 234 Մովսես Բաղրամյան. Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբնավորումը/Մ. Խ. Դավթյան, Հ. Գ. Մանուչարյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2015, 136 էջ:

Աշխատությունը նվիրված է հայ քաղաքական հրապարակախոսության հիմնադիր Մովսես Բաղրամյանի տեսական ժառանգության ուսումնասիրությանը:

Առաջին անգամ ներկայացվում է Մադրասի հասարակական-քաղաքական խմբակի գործունեությունը, վերլուծվում քաղաքական հրապարակախոսության առանձնահատկությունները, ի հայտ բերվում Մ. Բաղրամյանի ազգակերտման և ազգային գաղափարախոսության ուշագրավ դրույթները:

Աշխատությունը նախատեսված է հայ հասարակական-քաղաքական մտքի պատմությամբ, հայ քաղաքական հրապարակախոսության և ազգային-ազատագրական շարժումների պատմության ու տեսության հարցերով զբաղվողների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանների համար:

ՀՏԴ 070(091)
ԳՄԴ 76.0

ISBN 978-5-8084-2006-9

© ԵՊՀ հրատ., 2015
© Մ. Դավթյան, Հ. Մանուչարյան, 2015

ԱՌԱՋԱԲԱՆ

Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ»[1] երկը հայ քաղաքական հրապարակախոսության անդրանիկ նմուշներից է: Հայ քաղաքական հրապարակախոսության պատմությունը՝ որպես հայ ազգի քաղաքական հավաքական մտածողության զարգացման ընթացքն ու օրինաչափություններն ուսումնասիրող գիտություն, նոր սկզբնավորվող ուղղություն է մեզանում: Սակայն այն ընդհանրացումները, որոնք այժմ հնարավոր է կատարել *քաղաքական մտքի* ներկա ձեռքբերումների հիման վրա, կարող է ընդհանուր պատկերացում տալ հայ քաղաքական մտածողության անցած ճանապարհի նվաճումների մասին ընդհանրապես, Մովսես Բաղրամյանի մասին՝ մասնավորապես:

Քաղաքական մտածողության պատմությունը՝ որպես պատմության քաղաքական ընկալման եղանակ, սկիզբ է առել հեռավոր անցյալի քաղաքական ուսմունքներում և անցել իր զարգացման շրջադարձային փուլերը: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվել են՝ 1) անտիկ շրջանը, 2) միջին դարերը, 3) վերածննդի ու ռեֆորմացիայի դարաշրջանը, 4) վաղ բուրժուական հեղափոխությունների, 5) ազատ մրցակցության, 6) մոնոպոլիստական կապիտալիզմի, սոցիալական հեղափոխությունների, «ռեալ սոցիալիզմի» ճգնաժամի և «սոցիալական պետությունների» ձևավորման դարաշրջանները[2]:

Հայ քաղաքական մտքի պատմությունը ևս ներկայանում է հաջորդականության այնպիսի փուլերով, ինչպիսիք են մարդկության զարգացման սահմանազատված փուլերը: Անցումային այս դարաշրջաններում փոխվում են աշխարհայացքներն ու հավատալիքները, քաղաքական կառույցները, վերահիմաստավորվում բարոյական ու իրավական օրենքները, կերտվում մշակույթի համազգային ու համամարդկային գլուխգործոցներ, ինչպես նաև քաղաքական մտքի

---

[1] Տես Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, Մադրաս 1772: Տես նաև Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, աշխարհաբար թարգմանությունը Պ. Խաչատրյանի, Եր., 1991: Մեջբերումներն ու վկայությունները կատարված են աշխարհաբար թարգմանությունից:

[2] Տես История политических учении, М., 2002, էջ 4:

կոթողային հուշարձաններ: Նշված շրջադարձային փուլերից մեկի՝ վաղ բուրժուական հեղափոխությունների դարաշրջանի նշանավոր հուշարձան է Մովսես Բաղրամյանի քննարկվող աշխատությունը: Բաղրամյանի կյանքը և գործունեությունը համընկնում է Եվրոպայում ծավալված վաղ բուրժուական հեղափոխությունների և ազգային-ազատագրական շարժումների վերելքի դարաշրջանին, դարաշրջան, որի հիմնական բովանդակությունը և առանձնահատկությունները իրենց արտահայտությունը գտան նաև հայ իրականության մեջ և հատկապես՝ հնդկահայ գաղթօջախներում:

Հնդկաստանում հաստատվելուց հետո կարճ ժամանակամիջոցում հայ վաճառականները հսկայական հարստության տեր դարձան, գնեցին ու կառուցեցին սեփական առևտրանավեր, որոնց առաջ բաց էին Ասիայի և Եվրոպայի բազմաթիվ նավահանգիստների դռները:

Սկզբնական շրջանում անգլիական, ֆրանսիական ու հոլանդական գաղութարարները բարյացակամ վերաբերմունք ունեին հայերի նկատմամբ և համագործակցում էին նրանց հետ: Սակայն եվրոպացիների՝ Հնդկաստանում վերջնականապես հաստատվելուց հետո, սկսվեց մեծ մրցակցություն նախ եվրոպացիների, ապա՝ եվրոպացի և հայ վաճառականների միջև: Հայերի վիճակն էլ ավելի ծանրացավ հնդիկ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը Բենգալիայում անգլիացիների կողմից ճնշելուց հետո: Վերջիններս սկսեցին հաշվեհարդար տեսնել ոչ միայն պարտված հնդիկ ժողովրդի, այլև նրանց սատար կանգնած հնդկահայերի հետ: Հայերը զրկվեցին Արևելյան հնդկական ընկերության պայմանագրով նախկինում հայ վաճառականներին շնորհված բոլոր առանձնաշնորհումներից: Անգլիական, հոլանդական ու ֆրանսիական առևտրականների թիկունքում կանգնած պետությունները տարբեր միջոցներ էին գործադրում անպաշտպան հայ վաճառականներին ունեզրկելու և շահութաբեր շուկաներից դուրս մղելու համար: Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար հայ վաճառականներն ուղիներ էին փնտրում: Համաեվրոպական ազգային-ազատագրական շարժումները և վաղբուրժուական հեղափոխություններն իրենց շրջապտույտի մեջ են առնում նաև գաղթաշխարհի հայ զանգվածին: Հետզհետե ձևավորվում է ազգային միասնության ու ինքնահամախմբման գիտակցությունը: Եվրոպացիների նման նրանք էլ են առևտրական

ընկերություններ ու միություններ ստեղծում, ազգային ազատագրության ուղիներ փնտրում ու ծրագրեր մշակում:

Ահա այս մթնոլորտում ու հատուկ առաքելությամբ ծնունդ առավ հայ առաջին քաղաքական խմբակը Մադրասում:

Մադրասահայ համայնքի սոցիալ-տնտեսական տեղաշարժերի ծնունդն էր Մադրասի քաղաքական խմբակը, որն արդյունքն էր՝ Շ. Շահամիրյանի և Մ. Բաղրամյանի անսպառ եռանդի ու տաղանդի:

Խոսելով XVIII դարի հնդկահայ համայնքի տնտեսական ու գիտամշակութային գործունեության մեծ շրջադարձի մասին՝ Թ. Ավդալբեգյանը իրավացիորեն գտնում է, որ «...հակառակ այն համատարած մոլար կարծիքի, թե հայ նոր գրականությունն առաջ է եկել XIX դարում, ...պետք է պնդել, կրկնել ու երեքկնել, թե հայ նոր գրականության, այսինքն՝ բուրժուական-դեմոկրատական գրականության հիմնադրումը հարկավոր է հաշվել հնդկահայ հայտնի գրքերից ու հեղինակներից, որոնք ֆրանսիական մեծ հեղափոխությունից էլ առաջ արտահայտել են և ջատագովել «երրորդ դասի» մտքերն ու իդեալները՝ գրելով հայ հանրային նշանավոր հարցերի մասին ընդհանրապես և մեր երկրային-պետական ու քաղաքային-համայնական կազմակերպությունների էության ու ձևերի մասին առանձնապես»[3]:

XVIII դարի մասին նույն կարծիքն է արտահայտել նաև ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը՝ գրելով. «Գոցվում է հին մի դար և բացվում նորը»[4]:

Թեև Հայաստանը XVIII դարում շարունակում էր մնալ թուրքպարսկական ծանր լծի տակ, այնուամենայնիվ հնդկահայ գաղթաջախներում ձևավորվում են հասարակական-քաղաքական կենտրոններ, որտեղ հետզհետե ձևավորվում էր ազգային միասնության գիտակցությունը: Հայ քաղաքական կյանքի աշխուժացման վերելքի այս նոր փուլում պատմականորեն առաջադրված քաղաքական խնդիրների լուծման ճանապարհին ասպարեզ են իջնում հայ ժողովրդի պատմության նոր դարաշրջանի քաղաքական միտքը կերտողներ Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրա-

---

[3] **Թադ. Ավդալբեգյան**, Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 255:

[4] **Աշ. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Եր., 1959, էջ 415:

մյանը, այլ գործիչներ, որոնք Հայաստանը օտարների տիրապետությունից ազատագրելու և սեփական պետություն ստեղծելու ուղիներ էին որոնում: Այսուհանդերձ թե՛ Մադրասի քաղաքական խմբակի և թե նշված գործիչների մասին քիչ ուսումնասիրություններ են կատարվել[5]:

Մովսես Բաղրամյանը XVIII դարում տիրող խավարի ու տգիտության առաջին ու ամենախոշոր քննադատն էր, հայ երիտասարդությանը կրթության և լուսավորության մղող մեծ լուսավորիչը, նրանց հայրենասիրության ոգով դաստիարակող ուսուցչապետը, Հայաստանի ազատագրության տեսական ուղի հարթողն ու անխոնջ ջատագովը: Ապրելով միջնադարի ու նոր դարի սահմանագլխին՝ Բաղրամյանը դարձավ նախընթաց դարաշրջանների հայոց մոռացված արժեքների հայտնագործողն ու հայ ժողովրդի սեփականությունը դարձնողը, ազգին համախմբող ու ազգի ապագան ուղենշող, նախորդ դարերն անջրպետող ու նաև այն հաջորդ դարերին կապող հզոր կամուրջը, մեծ քաղաքացին ու մեծ քաղաքագետ-հրապարակախոսը:

Նրա տեսական ժառանգությունը ընդհանրապես և «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ»[6] երկը մասնավորապես, բավարար ուսումնասիրության ու ըստ արժանվույն գնահատման չեն արժանացել, իսկ հայ քաղաքական հրապարակախոսության առումով, որ-

---

[5] Իսրայել Օրու մասին տես **Эзов Г. А.**, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, **Աշոտ Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Եր., 1959: **Լեո**, Երկերի ժողովածու, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Եր., 1973:
Հ. Էմինի մասին տես "Life and Adventures of Joseph Emin an Armenian", London, 1792, վերահրատարակությունը՝ Կալկաթա, 1918: Հայերեն թարգմանությունը՝ «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները», Բեյրութ, 1958: **Լեո**, Երկերի Ժողովածու, երրորդ հատոր, գիրք երկրորդ, Եր., 1973, Иоаннисян А., Иосиф Эмин, Ер., 1945:
Շ. Շահամիրյանի մասին տես **Յարութիւն Տէր-Յովհաննեանց**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. 1, Նոր-Ջուղա, 1880: Դիվան հայոց պատմության, գիրք թ., Թիֆլիս 1911, **Թադ. Ավդալբեգյան**, «Առաջին բանավեճը հայ մամուլի մեջ», «Շահամիր Շահամիրյանն ու հնդկահայ համայնական ինքնավարությունը XVIII դարում», Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջք 236-239, 255-274:

[6] Տես Նոր տետրակ...:

տեղ նա բացառիկ ներդրում ունի, գրեթե չի ուսումնասիրվել:

Անցյալի արժեքների նկատմամբ գիտական վերաբերմունքը քաղաքական ժամանակակից ակտիվ կենսակերպ մշակելու կարևորագույն գործոններից է: Այս համակարգում գիտագործնական և պատմաճանաչողական ուրույն տեղ է գրավում XVIII դարի հայ քաղաքական մտածողության առանձնահատկությունների իմացությունը: Հայ քաղաքական մտքի պատմությունը գնահատել արևմտյան դասական ու ստանդարտ մոտեցումներով ու մոդելներով՝ անհնար է: Օրինակ, Բաղրամյանի տեսական ժառանգությունը և առաջադրած գաղափարներն ըմբռնելու համար նախ պետք է ուսումնասիրել XVIII դարի հայագիտության ձեռքբերումները, ապա ժամանակակից քաղաքական հրապարակախոսության ընձեռած ընդհանուր նյութերը և այդ երկուսի համադրությամբ ուսումնասիրել հիմնախնդիրը:

Հայագիտությունը սահմանվում է որպես տեսություն գիտական իմացության տարբեր բնագավառներում դրսևորվող հայ իրականությանը բնորոշ ուսումնասիրությունների մասին, որոնք հետազոտվում են համապատասխան գիտությունների՝ պատմության, գրականության, փիլիսոփայության, աղբյուրագիտության, աշխարհագրության, հրապարակախոսության և այլնի կողմից՝ վերջիններիս ներհատուկ սկզբունքներով:

Մ. Բաղրամյանի քննարկվող աշխատությունում արծարծված քաղաքական հիմնախնդիրները շատ են՝ քաղաքական հայագիտություն, հայոց ազգային-ազատագրական շարժման տեսություն ու գաղափարախոսություն, այդ պայքարի մարտավարություն ու ռազմավարություն: Այս հիմնահարցերի՝ առանց ժամանակակից քաղաքագիտական համապատասխան բնագավառների ուսումնասիրության անհնար է հասկանալ, գնահատել ու մեկնաբանել այդ մեծ քաղաքացուն ու ստեղծագործողին: Այսինքն՝ սույն ուսումնասիրությունը կյանքի կոչելու համար օգտագործվել են հայեցակարգային մոտեցումներ բովանդակող հայագիտական ու քաղաքական-տեսական, մեթոդաբանական նշանակություն ունեցող հիմնարար աշխատություններ:

Այսպիսով, Մադրասի քաղաքական խմբակի գործունեության և Բաղրամյան-հրապարակախոսի ստեղծագործությունների համակողմանի ուսումնասիրության բացը լրացնելու նպատակ ենք հետապնդել:

Բաղրամյանի ժամանակակիցներից Հովսեփ Էմինը նշում է, որ Բաղրամյանը իր ազգականն է, 1762 թվականին իրենք հանդիպել են և մինչև 1767 թվականը շրջագայել միասին, որի ընթացքում Բաղրամյանն աջակցել է Հայաստանի ազատագրության՝ Էմինի նախաձեռնած գործին, սակայն հուսալքվելով վերջինիս անիրագործելի ծրագրից՝ Մցխեթում բաժանվել է նրանից և գնացել Հնդկաստան: Այս կապակցությամբ Հովսեփ Էմինը գրում է. «Խեթայում (Մցխեթ), որ գտնվում է Քուռ գետի ափին, կեսօրից հետո, Մովսեսը, որ հետիոտն էր, հոգնեց և հուսահատ տրտմեց: Նա ավելի լավ էր հասկանում քան Էմինը, թե անիմաստ է հետևել Հերակլին, և թեպետ ի բնե համեստ, հանկարծ բաժանումի թույլտվություն խնդրեց Էմինից: Խեղճ մարդը մի քանի խեղճ ու կրակ պատճառաբանություն արեց, թե մոռացել է ճերմակեղենը և ուրիշ հարկավոր բաներ, հետևաբար ցանկանում էր Թիֆլիս վերադառնալ դրանք վերցնելու: Էմինը թափանցելով նրա դիտավորությանը, դիտողություն չարեց: Այսպես Մովսեսը մեկնեց և Էմինը հաջորդ առավոտ միայնակ հեռացավ իշխանից ու հասավ Գորի քաղաք»[7]:

Հնգամյա այս դեգերումները Հայաստանում և հարակից երկրներում Հ. Էմինին և նրա զինակից Մ. Բաղրամյանին տվեցին հսկայական այն փաստական նյութերն ու տվյալները, որոնց հիման վրա նրանք կատարեցին նախադեպը չունեցող ընդհանրացումներ հայոց պատմության, պատմության փիլիսոփայության, քաղաքական ու տնտեսական աշխարհագրության և Հայաստանի ազատագրության տեսության մշակման ասպարեզում:

Հետագայում՝ 1783 թվականին, գնալով Հնդկաստան՝ Էմինը նորից է հանդիպում Բաղրամյանին և որոշ կենսագրական մանրամասներ հաղորդում նրա մասին. «Մովսեսը բավական ծանոթ լինելով հայ քերականությանը,– նշում է Էմինը,– ներկայացել էր պարոն Չամիրին (Շ. Շահամիրյանին) և կարգվել ուսուցիչ նրա որդիների: Երկու-երեք տարի հետո Չամիրը պաշտոն է հանձնել Մովսեսին ապրանք տանելու Սուեզ և այնտեղից Եգիպտոս: Վերադառնալով այդ ուղևորությունից որոշ շահով և այսպես հավատ ներշնչելով պարոն Չամիրին իր ձեռնարկության մասին, նրանից ստացել է մեծ քանակությամբ վաճառք և նաև դեպի Բուշիր գնալու, ինչպես նաև՝ հնդկա-

[7] Հովսեփ Էմին, նշվ. աշխ., էջ 406:

կան թանկագին ապրանքներ և չինական հախճապակիներ Շիրազ տանելու իբրև նվեր Քերիմ խանին, որպեսզի նա թույլ տար գործարան բացել Շիրազում և այնտեղ ծախել ապրանքներ»[8]:

Թեև այս և մի քանի այլ ակնարկներից երևում է, որ Բաղրամյանը ծավալել է նաև առևտրական գործունեություն, այնուամենայնիվ, նրա գրական հարուստ ժառանգությունից իմանում ենք, որ նա ծավալել է հատկապես գրական-հրապարակախոսական բուռն գործունեություն[9]:

Մովսես Բաղրամյանի ստեղծագործությանն առաջինն անդրադարձել ու խիստ քննադատության է ենթարկել Սիմեոն Ա. Երևանցի (1710–1780) կաթողիկոսը: Նախ նա նշում է, որ Բաղրամյանը ծնվել է Արցախում, բայց մանկության տարիներին ապրել ու կրթություն է ստացել Ջուղայում՝ Գևորգ վարդապետի մոտ[10]: Այնուհետև Մադրասի քաղաքական խմբակին խիստ հանդիմանական նամակ է հղում և բողոքում այնտեղ տպագրված երկու գրքերի՝ «Նոր տետրակի» և «Որոգայթ փառացի»[11] դեմ, դրանց անվանելով «դիվաշունչ»: Կաթողիկոսը իր զայրույթը թափում է հատկապես Մովսես Բաղրամյանի վրա, որին նա համարում էր միակ դրդիչ և հեղինակ այդ գրքում արտահայտված վտանգավոր մտքերի: Շահամիր Շահամիրյանի և Գրիգոր Խոջաջանյանի առջև կաթողիկոսը պայման է դնում. «Նախ՝ զի զգիրքն զայն այրեսցե իսպառ, և զորս ցրուեալ է աստ և անդ՝ ջանասցէ և հնարեսցէ զայնս ևս այրել: Երկրորդ՝ զի տպագրատունն զայն խափանեսցէ իսպառ: …Իսկ այդ իմաստակդ (Մ. Բաղրամյանը- հեղ.) որ իբր արհեստագէտ ձևացուցանէ զինքն, ոչ գիտէ զինչ առնելն: Ուստի՝ թարց արհեստի և խոկացման տպեցեալն ձեր, բաց ի յամօթոյ և ի վնասուց զոչինչ օգուտ բերէ ազգիս: …Հինգերորդ՝ զի զխաբեբայ Մովսեսն այն կամ վտարեսցեն ի միջոյ իւրեանց, և կամ ի տեղի ոչնչի համարելով՝ մի մերձեցուսցեն առ ինքեանս, զի ամօթ մեծ է ձեզ, ասէ, այդպիսւոյ մտաթափի մոլեկան խելացն հետևիլ և անկանիլ ի բերան ազգի: Վերջապես բանադրանք այն չիք Մովսի-

---

[8] **Հ. Էմին**, նշվ. աշխ., էջ 481:

[9] Տես **Թադ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջք 236-245:

[10] Տես Դիվան հայոց պատմության, հատ. Ը, Թիֆլիս, 1908, էջ 11:

[11] Տես **Շ. Շահամիրյան**, Որոգայթ փառաց, Մադրաս, 1773, տես **Պ. Խաչատրյանի** աշխարհաբար թարգմանությունը, Եր., 2002:

սին և պատուէր՝ զի մի ոք հաղորդեսցի նմա բանիւ կամ գործով և կցորդեսցի անիծից և դատապարտութեանց նորին»[12]:

Իսկ Գրիգոր Խոջաջանյանին գրած առանձին թղթում կաթողիկոսը Բաղրամյանի մասին գրում է. «Անիծեալ լիցի, ասէ, ծնունդն դորա, որ խայտառակ արար զմեզ և զազգս մեր ի մէջ ազգաց, և քակեաց իսպառ զտունս Հայոց: Զորոյ զդժնեայ պտուղն յետոյ էք, ասէ, տեսանելոց օրըստօրէ: ...Այս թօհմաթս քեզ չէ, սիրելիդ իմ. գիտեմ միամիտ ես դու: Այլ որովհետև դու ևս էիր ձեռն եդեալ ի վերայ այդ խելառական գրոյն, վասն այսորիկ ի վերա երկուցդ գրեցի: Եթե այն դիւաբախ շարադրողն ի ձեռս անկաներ, ձեզ ամենևին ոչինչ գրէի, զինչ օգուտ՝ որ ի ձեռս ոչ անկանի»[13]:

Կաթողիկոսը իր մտահոգությունը պատճառաբանում է Հայաստանում տիրող աղետալի իրավիճակով: Դուք հեռու և ապահով եք,- դիմում է նա հնդկահայ մեծահարուստներին,– ձեզ թվում է թե մենք Եվրոպայում ենք ապրում, եթե նրանց պայմանները մերը լինեն, մերը՝ նրանցը, նոր կերևա, թե ով է իմաստուն: Եթե միայն մեկ ամիս թուրքերի իշխանության տակ ընկնեն նրանք, բանականությունն անգամ կկորցնեն:

Ժամանակակիցներից Մ Բաղրամյանի մասին արմատապես այլ կարծիք են հայտնել Լազարյանները: 1777 թվականի նոյեմբերի 6-ին Շահամիրյանին հղած նամակում Աղազար Լազարյանը նշում է, որ Հայաստանի ազատագրության գործում արցախցիների վրա հենվելու համար նախ պետք է կրթել ու լուսավորել նրանց, ինչպես կարևորում է հանճարամիտ Մովսեսը... «Նախ պետք է ազգին մերո, մանավանդ ի Սղնախ և ի Ղարաբաղ եղելոցն, ունիլ լուսաւորութիւն մտաց, և թողեալ զսնոտի ունայնահաւատութիւն իւրեանց և գոռոզութիւն, կրթիլ և վաստակիլ ի մրցմունս գիտութեան, պատմութեան և աշխարհածանօթութեան և լինիլ հասու մտօք այնմ նիւթոյ և բանից, զորոց ճառէ բարեհիշատակ որդին քոյ Յակոբ ընդ դաստիարակին իւրո հանճարամիտ Մովսեսի»[14]:

Լազարյաններին և Ռուսաստանի հայ առաջավոր գործիչներին

---

[12] Դիվան հայոց պատմության, հ. Ը, էջ 577-580:

[13] Նույն տեղը;

[14] Մեջբերումն ըստ Վ. Դիլոյանի «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից» աշխատության, Եր., 1966, էջ 173:

այնքան է դուր եկել «Նոր տետրակը», որ նրա հինգերորդ և վեցերորդ գլուխները, որոնք ընդգրկում են հայոց պատմությունը և Հայաստանի պատմական աշխարհագրության հատվածները, 1780-ական թվականներին թարգմանել են տվել ռուսերեն և 1786 թվականին Պետերբուրգում հրատարակել: Այն թարգմանել է ռուսական բանակի սպա Վառլամ Վահանովը (Բարաղամ Վահանյան): Գիրքը նվիրվել է իշխան Գրիգորի Պոտյոմկինին, որի գիտությամբ էլ, ինչպես դա երևում է 1786 թվականին Հովսեփ Արղությանի՝ Շահամիր Շահամիրյանին հղած նամակից, կատարվել է թարգմանությունը[15]:

Ահա սակավաթիվ այն անդրադարձները, որ կատարել են Բաղրամյանի ժամանակակիցները նրա մասին: Հայագետներից Մովսես Բաղրամյանին առաջինն անդրադարձել է պրոֆ. Լեոն: XVIII դարի հայոց ազգային-ազատագրական շարժման պատմությունը շարադրելու ժամանակ «Նոր տետրակը» նա օգտագործել է որպես ճշմարտապատում ու արժեքավոր սկզբնաղբյուր: Նույն դարի հայոց մշակույթի պատմության բաժնում մեծ պատմաբանը Բաղրամյանին ներկայացրել է որպես *հայ քաղաքական հրապարակախոսության փաղանդավոր հիմնադիր*: «Մովսես Բաղրամյանը գուցե առաջին հայն է Մովսես Խորենացուց հետո, – գրում է Լեոն, – որ վերցնում է հայությունն իբրև մի ազգություն և քննադատում է այդ ազգության իրական դրությունը, ցույց է տալիս նրա պակասությունները, մըտրակում նրա տգիտությունը, որ անկում է բերել ընդհանրության համար: Նա պահանջում է, որ հինավուրց ստրուկը սրբի իր կեղտերը, ոտքի կանգնի իբրև վերածնվող մի մարմին և ազատություն, կատարյալ անկախություն ձեռք բերի: Որովհետև առանց քաղաքական անկախության, չկա փրկություն, չկա ազգային պատիվ, առաջադիմություն և երջանկություն»[16]:

Բաղրամյանի այս նոր ու վեհ գաղափարների աղբյուրը Լեոն կապում է եվրոպական լուսավորիչների տեսական ժառանգության, Խորենացու Հայոց պատմության և Աստվածաշնչի խոր իմացության հետ: Այնուհետև համառոտ ներկայացնելով «Նոր տետրակի» բովանդակությունը՝ նա կատարում է մի շարք կարևոր ընդհանրացումներ: Այս գիրքը, գրում է Լեոն. «Վաղ առավոտի ավետողն էր, որ

[15] Տե՛ս Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, էջ 188:

[16] **Լեո**, Երկեր, հ. երրորդ, գիրք երկրորդ, Եր., 1973, էջ 527:

գալիս էր ասելու, թե հայ ժողովուրդն այլևս կրոնական մի համայնք չէ, աստվածաբանական մի աղանդ չէ, այլ մի քաղաքական ազգ, որ քաղաքաղաքական միտք է դարբնում, քաղաքական իդեալներ է սնուցանում և քաղաքական գրականություն ունի»[17]:

Բնականաբար մեծ պատմաբանը իր առջև խնդիր չէր դրել «Հայոց պատմություն» աշխատության էջերում Բաղրամյանի առաջադրած քաղաքական հայեցակետերը առանձին-առանձին քննարկել: Նրա ներդրումները մնացին որպես հիմնարար ընդհանրացումներ և արժեքավոր ցուցումներ ապագա հետազոտողների համար:

Ի դեպ, մինչև 1908 թվականը՝ մինչև Սիմեոն կաթողիկոսի «Յիշատակարանի» հրատարակումը «Դիվան հայոց պատմության» 8-րդ հատորում, Լեոն ևս հետևում էր տիրապետող այն կարծիքին, թե այդ երկի հեղինակը Շ. Շահամիրյանի վաղամեռիկ որդի Հակոբ Շահամիրյանն է: Այդ հրատարակությունից հետո է, որ այս անմահ գործը գտավ իր ստեղծողին: «Նորք» ամսագրի 1924 թվականին հրատարակված 4-րդ գրքում Թադևոս Ավդալբեգյանը նույնպես անդրադարձավ այս խնդրին և նոր փաստերով հիմնավորեց որ «Նոր տետրակի» հեղինակը Մովսես Բաղրամյանն է[18]:

Թադ. Ավդալբեգյանն է առաջադրել այն կարծիքը, որ Մ. Բաղրամյանը նաև «Ազդարարում» «Հայի որդի հայ» ծածկանունով 1795 թվականին հրատարակված երկու հոդվածների, ինչպես նաև Աբրահամ Կրետացու «Պատմություն Նադիր շահին պարսից» աշխատության առաջին տպագրության «Ներածություն» վերնագրով ընդարձակ հավելվածի հեղինակն է՝ «Ոմն բանասեր» ծածկանունով[19]: Մ. Բաղրամյանը աշխատակցել է նաև «Պատմութիւն մնացորդաց հայոց և վրաց...» երկի՝ 1775 թվականի մադրասյան հրատարակությանը[20]:

Մ. Բաղրամյանի կյանքին և գրական ստեղծագործությանը նվիրված առանձին փոքրածավալ ուսումնասիրություններ են հրատարա-

---

[17] **Լեո**, նշվ. աշխ., էջ 534:

[18] Տես **Թադ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջք 236-242, 259:

[19] Տես նշվ. աշխ., էջ 245:

[20] Տես նշվ. աշխ., էջ 261:

կել Առ. Առաքելյանը[21], Ս. Պողոսյանը[22], Մ. Թելունցը[23], Գ. Գրիգորյանը[24], Հ. Գաբրիելյանը[25], Գ. Մելքումյանը[26]:

Այս ուսումնասիրություններում տրվում են «Նոր տետրակի» համառոտ բովանդակությունը և որոշ կենսագրական հայտնի տեղեկություններ: Լինելով ճանաչողական-տեղեկատվական բնույթի աշխատություններ, դրանցում վերլուծական, բանավիճային և մասնավոր հարցեր չեն քննարկվում: Նշված հետազոտողներից բացառություն է կազմում Գ. Մելքումյանը, որն առանձին քննության է առնում Մ. Բաղրամյանի մարդաբանական և պատմափիլիսոփայական հայացքները, և կատարում այն կարևոր եզրակացությունը, որ ազգային-ազատագրական պայքարի արժեքները միաժամանակ գերակայող դեր են զբաղեցնում ժամանակաշրջանի մարդկանց նպատակների համակարգում:

Գ. Մելքումյանի կարծիքով, Բաղրամյանի առաջադրած ազգային խառնվածքի առանձնահատկությունները երկրի բնական պայմանների և պատմական ճակատագրի հետ կապելու դրույթները բխում են արևմտաեվրոպական լուսավորիչների, հատկապես Շ. Լ. Մոնտեսքյոյի տեսությունից[27]:

«Նոր տետրակը» արդիական մեծ հնչեղություն ստացավ, նրա առաջադրած հայրենասիրական ու ազատասիրական գաղափարներին ժամանակակից ընթերցողը հաղորդակցվեց Պողոս Խաչատրյանի աշխարհաբար թարգմանության շնորհիվ: Իրոք, Շ. Շահամիրյանի «Որոգայթի» և Մ. Բաղրամյանի «Նոր տետրակի»

---

[21] Տես **Առ. Առաքելյան**, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, XIV-XIX դդ. առաջին կես, հ. 2-րդ, Եր., 1964, էջք 350-370:

[22] Տես **Ս. Պողոսյան**, «Մովսես Բաղրամյան», Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դդ., Եր., 1976, էջք 550-556:

[23] Տես **Մ. Թելունց**, Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը, Եր., 1995, էջք 108-122:

[24] Տես **Գ. Գրիգորյան**, Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, Եր., 1975:

[25] Տես **Հ. Գաբրիելյան**, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Եր., 1958:

[26] Տես **Գ. Մելքումյան**, Մ. Բաղրամյանի մարդաբանական և պատմափիլիսոփայական հայացքները, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1998, թիվ 3:

[27] Տես **Գ. Մելքումյան**, նշվ. աշխ., «Բանբեր Երևանի Համալսարանի», էջ 137:

խաչատրյանական թարգմանությունը նոր էջ բացեց XVIII դարի՝ քաղաքական հրապարակախոսության այս մեծարժեք ստեղծագործությունները նորովի լուսաբանելու և գնահատելու առումով: Ոչ միայն կատարյալ թարգմանությամբ ժամանակակից հայերենի վերածվեց այդ արժեքավոր գիրքը, այլև շատ հարուստ ծանոթագրություններով լուսաբանվեց XVIII դարին բնորոշ շատ անըմբռնելի հիմնահարցեր, որոնցով ժամանակակից ընթերցողը պատկերացում կազմեց բազում անհասկանալի տերմինների ու հասկացությունների մասին: Թարգմանիչը նաև հայտնաբերել և մատնանշել է այն աղբյուրներն ու երկերը, որոնք օգտագործել է Մ. Բաղրամյանը: «Հորդորակը, – ինչպես նշում է թարգմանության գրախոս Վ. Դիլոյանը,– գտնվում է իր ժամանակի հայագիտության նվաճումների մակարդակի վրա, որը դեռ իր առաջին քայլերն է կատարում այդ ասպարեզում»[28]:

Մ. Բաղրամյանի այս արժեքավոր երկի քաղաքագիտական ուսումնասիրության առաջին փորձը կատարել են սույն մենագրության հեղինակները: «Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության» աշխատության մեջ նշվում է, որ «Նոր տետրակում» շոշափվում են մարդու, քաղաքական գործչի, պետության, մայր հայրենիքի, ազգային ազատագրության ուղիների որոնման, ազգային ներուժի բացահայտման, ազգային միասնության և քաղաքական մտքի պատմության համար կարևոր այլ հարցեր»[29]:

Առաջին անգամ հիմնավորվում է, որ Բաղրամյանի աշխատության հինգերորդ գլուխը ոչ թե սոսկ հայոց պատմության համառոտագրումն է, ինչպես կարծում են նախորդ ուսումնասիրողները, այլ հայոց պետականության համառոտ պատմությունը: Պատմության այսպիսի շարադրանքը նախատեսված է զանգվածային քարոզչության համար, և շատ հզոր է նրա ապացուցողական ուժը: Իսկ «Նոր տետրակի» վեցերորդ գլուխը ոչ թե սովորական աշխարհագրական ակնարկ է, այլ հայրենագիտական ու քաղաքական աշխարհագրության առաջին արժեքավոր ստեղծագործությունը հայ իրականու-

---

[28] **Վ. Դիլոյան**, «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ» թարգմանությունը բնագրից և ծանոթագրությունները՝ Պ. Խաչատրյանի, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1993, թիվ 1, էջ 214:

[29] **Հ. Մանուչարյան**, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Եր., 2002, էջ 147:

թյան մեջ[30]:

Մի քանի հրապարակումներում հեղինակները անդրադարձել են հիմնախնդրի տարբեր կողմերի՝ «Քաղաքական հրապարակախոսության»[31], «Հաղթահարելով ազգային թերարժեքության բարդույթը»[32], «Քաղաքական հրապարակախոսության դասակարգային ու ազգային հայեցակարգերը»[33], «Մովսես Բաղրամյանի ազգակերտման ծրագիրը»[34], «Հայաստանի ազատագրության Մովսես Բաղրամյանի ծրագիրը»[35], «Քաղաքական հրապարակախոսություն և քաղաքական գաղափարախոսություն»[36] լուսաբանմանը:

Ծանոթանալով Բաղրամյանի՝ քննարկվող աշխատությունում արծարծված քաղաքական հիմնախնդիրներին, եկել ենք այն համոզման, որ առանց քաղաքագիտական մտքի ժամանակակից ձեռքբերումների հատուկ ուսումնասիրության՝ չենք կարող մեկնաբանել ու արժևորել Բաղրամյանի՝ XVIII դարում առաջադրած հիմնադրույթները: Օրինակ, բոլոր ուսումնասիրողները նշում են, որ Բաղրամյանի երկը *առաջին քաղաքական հրապարակախոսության ժանրի ստեղծագործությունն է* հայ իրականության մեջ: Սակայն այդ ժանրի վերլուծությունը առանց *հրապարակախոսության տեսության* ճա-

---

[30] **Հ. Մանուչարյան**, նշվ. աշխ., էջ 152: Տես նաև Հայ քաղաքական մտքի պատմություն, գիրք Ա, 5-18-րդ դ. Եր., 2013, էջ 249-274:

[31] Տես **Մ. Դավթյան**, Քաղաքական հրապարակախոսություն, «Օրենք և իշխանություն», գիտատեսական ամսագիր, 1998 թ. մարտ-ապրիլ, թիվ 23-24, էջ 45:

[32] Տես Հաղթահարելով ազգային թերարժեքության բարդույթը, «Օրենք և իշխանություն», 2000 թ., թիվ 2(31), էջ 28:

[33] Տես Քաղաքական հրապարակախոսության դասակարգային ու ազգային հայեցակետերը, «Հանդես», Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2004 թ., էջ 187:

[34] Տես Մովսես Բաղրամյանի ազգակերտման ծրագիրը, «Քաղաքագիտություն», բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, 2007 թ., էջ 69:

[35] Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, 2008 թ., էջ 188:

[36] Տես Քաղաքական հրապարակախոսություն և քաղաքական գաղափարախոսություն, «Հանդես», Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2008 թ., էջ 201:

նաչված մասնագետների, հատկապես Մ. Չերեպախովի[37], Ե. Պրոխորովի[38], և Վ. Ուչյենովայի[39] աշխատությունների մանրակրկիտ ուսումնասիրության, մենք չէինք կարող մեկնաբանել Բաղրամյանի տեսակետները որպես հայ հրապարակախոսության հիմնադրի:

Այս հեղինակներն են լուսաբանում հրապարակախոսության ժանրի, դրա առջև դրված խնդիրների, գործառույթների, մեթոդների հիմնահարցերը: Այսուհանդերձ, հրապարակախոսության խընդիրներին նվիրված այս ստեղծագործությունները մենք օգտագործել ենք ոչ թե զուտ հրապարակախոսական ժանրի համեմատական վերլուծությամբ, այլ այնքանով և այն նպատակով, որքանով պահանջվում էր մեկնաբանել Բաղրամյան հրապարակախոսին: Բաղրամյանի առաջադրած այլ հիմնահարցերի քննարկման ժամանակ նույնպես մեզ համար տեսական գիտելիքների աղբյուր ծառայած քաղաքագիտական գրականությունը ևս հիմնախնդրի շրջանակներում բազմակողմանի վերլուծության չենք ենթարկել, այլ միայն դրանց անդրադարձել ենք այն չափով, ինչ չափով անհրաժեշտություն է առաջացրել մեր թեման:

Բաղրամյանի աշխատության մեջ ընդգծվում է միջնադարյան նիրհի մեջ գտնվող հայ զանգվածից քաղաքական ազգի վերածվելու գաղափարը: Նրա մտքի ներքին հանգույցները բացելու համար օգտագործել ենք ազգի տեսության հիմնախնդրին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ: Իշխող արևմտյան տեսություններում[40] ազգերի կազմավորումը պայմանավորում են Եվրոպայում ազգային պետությունների կազմավորմամբ ու զարգացմամբ: Բայց նույն տեսություններում քննադատվում են հայ ազգի առաջացման և հայ ազատագրական գաղափարախոսության իրողությունը: Օրինակ՝

---

[37] Տես Մ. **С. Черепахов**, Проблемы теории публицистики, М., 1973:

[38] Տես **Е. П. Прохоров**, Публицистика в жизни общество, М., 1968:

[39] Տես **В. В. Ученова**, Публицистика и политика, М., 1973:

[40] Տես **Էռնեստ Գելներ**, Ազգերը և ազգայնականությունը, Եր., 2003:
E. J. Hobsbauwm, Nations and nationalism since 1870. Cambridge Univ., Press, 1993:
A. J. Tojnbee, A study of history, vol. 8, L-n. 4, Toronto, 1955:
Политическая культура: теория и национальние модели, М., 1994:
Ernest Renan. “What is a nation” The Nationalism Readered by Omar Dahbour and Micheline R.Ishay, Humanities Rress, New Jersey, 1995:
“Нации и национализм” Новая наука политики, М., 2002:

Բենեդիկտ Անդերսոնը ազգերն անվանում է «երևակայական հորինված հանրույթներ»[41]: Բնական է, որ հայ ազգի ձևավորման պատմությունը ներկայացնելիս պետք է քննադատաբար ուսումնասիրել արևմտյան պատմափիլիսոփայական տեսությունները, սակայն փաստ է, որ մեր ազգի դեպքում անհրաժեշտ է հիմնահարցը քննել կոնկրետ պատմական մոտեցմամբ: *Բաղրամյանի ազգակերտման ծրագիրը բացահայտել ենք վերջին տարիներին ազգի սահմանման մասին առաջադրված այն մոտեցումով, ըստ որի՝ ազգը դիտվում է որպես պատմականորեն ձևավորված կայուն ընդհանրություն, որն ունի տարածքի, ծագման, լեզվի և հոգեկան կերտվածքի ընդհանրության և ազգային հանրույթի մակարդակին բնորոշ տնտեսական կյանքի, սոցիալական կառուցվածքի, քաղաքական համակարգի և գաղափարախոսության ընդհանրություն*[42]:

Մ. Բաղրամյանը ոչ միայն հայ ժողովրդին միջնադարյան ամբոխից քաղաքական ազգ կերտելու տեսության հիմնադիրն է, այլև ձևավորվող հայ ազգի ազգային գաղափարախոսության՝ հայոց ազգայնականության հիմնադրույթների առաջին բացահայտողը:

Ազգայնականությունը միայն XVIII դարի վերջին սկսեց դառնալ համընդհանուր ճանաչում ստացած հայեցակարգ, որը կաղապարեց ազգային և մասնավոր կյանքը, և դարձավ ազգերի պատմությունը իմաստավորող ամենամեծ գործոններից մեկը:

Ազգայնականության հիմնախնդրին անդրադարձել են շատ ճանաչված հասարակագետներ: Ուշագրավ են Առնոլդ Թոյնբիի[43], Էրիկ Հոբսբաումի[44], Հանս Կոնի[45], Էռնեստ Ռենանի[46] և ուրիշների իրարամերժ տեսակետները:

---

[41] Տես **B. Anderson**, Imagined Communities. Reflection on the Origin and spread of Nationalism, London, Verso, 1983:

[42] Տես **Հ. Մանուչարյան**, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Եր., 1988, էջ 31:

[43] **A. J. Tojnbee**, A study of history, vol. 8, L-n. 4, Toronto, 1955.

[44] **E. J. Hobsbauwm**, Nations and nationalism since 1870, Cambridge Univ., Press, 1993.

[45] **Kohn, Hans**, The idea of nationalism, Macmillan, New York, 1945.

[46] **Ernest Renan**, “What is a nation” The Nationalism Readered by Omar Dahbour and Micheline R.Ishay. Humanities Rress, New Jersey, 1995.

Քննարկվող աշխատության տրամաբանական շարունակությունը Մ. Բաղրամյանին հանգեցնում է ազգային-ազատագրական պայքարի տեսության ստեղծմանը: Դարեր շարունակ օտարի լծի տակ հեծող հայ ժողովրդի ազատագրության համար մղած պատերազմները հանդիսացել են նրա պատմությանն ուղեկցող, այդ պատմությունն ամբողջացնող խնդիրներից մեկը: V դարի ազատագրական շարժումներից մինչև նորօրյա արցախյան պատերազմների պատմության և տեսության հարցերի մշակումը մշտապես գտնվել է հայ հասարակագետների, պատմաբանների ուշադրության կենտրոնում: Կոնկրետ XVIII դարի ազատագրության տեսության և Բաղրամյանի հայացքների վերլուծության համար կարևորվում են հատկապես ակադեմիկոսներ Աբգար Հովհաննիսյանի[47] և Աշոտ Հովհաննիսյանի[48] աշխատությունները:

Ահա տեսական այն հինական բազան, որի օգնությամբ փորձել ենք քաղաքագիտական վերլուծության ենթարկել Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ» երկը:

Մովսես Բաղրամյանը ապրել և ստեղծագործել է պատմական մի այնպիսի շրջադարձային ժամանակահատվածում, որում իր նախադեպը չունեցող հսկայական քայլերով աշխարհը վերափոխվում էր: Աշխարհի առաջավոր մտածողները, նրանց հետ նաև Մովսես Բաղրամյանը, ձգտում էին բացատրել այդ նոր ու սովորական աչքով անտեսանելի երևույթները, նոր հասարակական հարաբերությունների ձևավորման ու նրան բնորոշ հանրույթի՝ ժողովրդից ազգի անցման հասարակական քաղաքական օրինաչափությունները: Մեր հետազոտության նպատակն է համաեվրոպական այդ մեծ տեղաշարժերի ֆոնի վրա լուսաբանել Մ. Բաղրամյանի՝ որպես իր դարի նոր մտածողության կրողի ու կերտողի քաղաքական հայացքները: Հրապարակախոսական ժանրի առաջին այդ մեծարժեք երկում *Բաղրամյանը մշակում է ոչ թե իմացաբանական-տեսական հարցեր, քաղաքական հրապարակախոսության կամ զուտ քաղաքագիտական տեսական դրույթներ, այլ առաջադրում է ընդհանուր հասարակագիտական*

---

[47] **Иоаннисян А.**, Иосиф Эмин, Ер., 1946. одно и т-ж, Россия и армянское освободительное движение в 80-х г. 18-ое столетия, Ер., 1947.

[48] **Աշ. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2-րդ, Եր., 1959:

հիմնադրույթներ և որոնում հայ ազգի ազատագրության արդյունավետ ուղիներ:

Յուրաքանչյուր ազգի անցած պատմական ճանապարհը տվյալ ազգի հասարակական մտքի պատմության ուսումնասիրության օբյեկտն է: Մեր հետազոտության օբյեկտը XVIII դարի հայ իրականությունն է իր բազմատեսակ դրսևորումներով՝ թուրք-պարսկական լծի տակ հեծող Հայաստանով և հայրենիքի ազատագրության տենչանքով ապրող սփյուռքով:

Հայ քաղաքական հրապարակախոսության պատմությունը որպես քաղաքական իրականության գիտակցում ձգտում է հայտնագործել ընդհանրական օրինաչափություններ և հասնել հասարակական-քաղաքական երևույթների օբյեկտիվ գնահատման:

Նմանատիպ աշխատությունների սակավության պատճառով, սույն հետազոտության ստեղծման համար տարբեր մեթոդներ ենք կիրառել:

XX դարի նշանավոր մտածող Կ. Մանհեյմը իր «Մեր ժամանակի ախտորոշումը» աշխատության մեջ նշում է, թե գոյություն ունի գաղափարների պատմության շարադրման երկու եղանակ: Դրանցից մեկը անվանել է «պատմողական», երբ հիմնականում ցույց է տրվում թե ինչպես են գաղափարները մեկ մտածողից «փոխանցվում» մյուսին: Երկրորդը՝ մտածողության տարբեր ոճերի, ձևերի վերլուծության եղանակ: Այս դեպքում, որպես մտքի փոփոխման ըմբռնման բանալի է ծառայում փոփոխվող «հասարակական ֆոնը», առաջին հերթին դասակարգերի, սոցիալական խմբերի ճակատագրերը[49]:

Պատմողական և վերլուծական մոտեցումներից բացի, սույն հետազոտության համար որպես մեթոդաբանական հիմք են հանդիսացել նաև պատմական, պատմահամեմատական, տրամաբանական, նկարագրական ու վերլուծական մեթոդները, ինչպես հայագիտական ոլորտի, այնպես էլ քաղաքագիտական ու հրապարակախոսական ոլորտների մեթոդները: Այսինքն, առաջնորդվել ենք հիմնահարցի պատմության ու տեսության հետազոտության նաև հարակից բաղադրատարերի տիրույթներին վերաբերող փորձված ու քննություն բռնած մեթոդներով:

Հետազոտության թեմա դարձնելով XVIII դարի հայ հրապա-

[49] **Манхейм К.**, Диагноз нашего времени, М., 1994, էջ 572:

ռակախոսության ժանրի մի ուշագրավ ստեղծագործություն, որում արծարծվում են հայ ժողովրդին թմրության քնից հանելու և քաղաքական ազգ դարձնելու, նրան պարսկա-թուրքական լծից ազատագրելու, ազգային-ազատագրական պայքարի տեսության, մարտավարության, ռազմավարության և այլ հարցեր, որոնց առարկայական տիրույթն անմիջականորեն առնչվում է ժամանակակից քաղաքագիտության հետ, փորձել ենք քաղաքական վերլուծության դաշտ դուրս բերել հայ ժողովրդին մտահոգող բազում խնդիրներ, առաջարկել քաղաքական լուծումներ և տրամաբանական ավարտին հասցնել հայագիտության կողմից արդեն առաջադրված հիմնախնդիրներ, որով, փաստորեն *սկզբնավորել ենք մի կարևոր ուղղություն, այն է՝ քաղաքական հայագիտություն*:

Ի տարբերություն սովորական խմբակների, Մադրասի քաղաքական խմբակի երևան գալը պայմանավորված է եղել որոշակի հասարակական-տնտեսական գործոնների առկայությամբ: Դրանք Մադրասի սոցիալ-տնտեսական զարգացման և քաղաքական որոշակի իրավիճակի ծնունդն են: Մադրասի քաղաքական խմբակը՝ որպես քաղաքական ռեալություն, հանդես է եկել այն ժամանակ, երբ մադրասահայ համայնքը ձեռք էր բերել որոշակի քաղաքական հասունություն: Այդ մակարդակը հնդկահայ համայնքը ձեռք էր բերել արևմտաեվրոպական բուրժուազիայի ազդեցությամբ և նրանց հետ սերտ շփումների ու մրցակցության շնորհիվ:

Մադրասի քաղաքական խմբակի ձեռքբերումները՝ տպագրության, քաղաքական հրապարակախոսության, պարբերական մամուլի և այլն ոչ թե առանձին-առանձին գործիչների, այլ ստեղծագործական մի առողջ կոլեկտիվի, անխոնջ աշխատանքի արդյունքն էր: Այդ խմբակի թողարկած «Նոր տետրակը», «Որոգայթ փառացը», «Նշավակը», և «Հայ-ռուսական դաշնագրի» նախագծերը հայ հանրային մտքի պատմության ամենանշանավոր ստեղծագործություններն են:

Անդրադառնալով «Ազդարար» ամսագրի էջերում գրական ծածկանուններով հանդես եկող հրապարակախոս-թղթակիցներին՝ «Հայի որդի Հային» և «Ազգակցին», մեզ հաջողվեց հիմնավոր փաստերով ապացուցել, որ «Հայի որդի Հայը» Մովսես Բաղրամյանն է իսկ «Ազգակիցը» Թ. Սոգինյանը, ով հանդես է եկել նաև «Ուրախակից» և «Ուրախակից բարեկամ» ծածկանուններով:

Հավաստի փաստերով հիմնավորել ենք, որ ժամանակակից իմաստով քաղաքական հրապարակախոսության ժանրը մեզանում սկզբնավորվել է XVIII դարում, և դրա առաջին նշանավոր նմուշը, «Նոր տետրակն» է, որտեղ Բաղրամյան-հրապարակախոսը հանդես է եկել որպես հետազոտող, և, օգտվելով հրապարակախոսությանը ներհատուկ մեթոդներից, ժամանակի հայ հասարակությանը համախմբել է մի մեծ գաղափարի շուրջ, նրան արթնացրել նիհրից, մղել պրակտիկ գործունեության, ստեղծել համոզիչ գիտելիք արդիականության և իր հետապնդած նպատակների մասին:

Հայ ժողովրդի ազգային կոնսոլիդացիայի գործընթացը և նրա մասին որոշ տեսության ստեղծումը ընթացել է երեք կարևոր փուլերով:

Առաջին փուլը համընկնում է Մխիթարյանների գործունեության հետ, որում մայրենի լեզվի, մշակույթի, ազգային պատմության ու էթնիկական առանձնահատկությունների մասին հետազոտությունների միջոցով ինքնաճանաչ դարձրին հայ ժողովրդին:

Երկրորդ փուլը համընկնում է Մադրասի քաղաքական խմբակի գործունեության հետ, որում լայնամասշտաբ քարոզչության ճանապարհով նոր աստիճանի բարձրացրին հայոց ազգային ինքնագիտակցությունը:

Երրորդ փուլում, XIX դարի II կեսին, հայ հասարակական-քաղաքական ուժերը, կուսակցությունները, գրողներն ու հրապարակախոսները ավարտին հասցրին հայ ազգի կազմավորման գործընթացը: Բաղրամյանի աշխատությունը այս միասնական շղթայի երկրորդ կարևորագույն օղակն է հանդիսանում:

Հայ ազգային զարթոնքի հետ ծնունդ առավ նաև ազգային գաղափարախոսությունը: Այն ձևավորվեց որպես մշակութային երևույթ, որի խնդիրն էր վերականգնել ու պահպանել ազգային մշակութային արժեքները և հող նախապատրաստել քաղաքական ազգայնականության համար: Մեր ուսումնասիրությունները հանգեցրին այն մտքին, որ Մովսես Բաղրամյանը նաև հայոց ազգային գաղափարախոսության՝ ազգայնականության հիմնադրույթները ի հայտ բերող մեծ մտավորական էր: Փաստորեն «Նոր տետրակը» հանդիսանում է նաև հայոց ազգային գաղափարախոսության առաջին մանիֆեստը, որում մշակվում են ազգային ինքնության, ինքնահամախմբման և ինքնազատագրման գաղափարները:

Բաղրամյանը գիտակցում էր, որ հայ ժողովրդի ազատագրական շարժումը ծավալվելու է ոչ թե մեկուսի, լոկալ միջավայրում, այլ այնպիսի բարդ տարածաշրջանում, որտեղ խաչաձևվում էին մի քանի տերությունների, քաղաքակրթությունների ու քաղաքական խմբավորումների շահերը: Շահագրգիռ տերությունները բացահայտ կամ քողարկված ձգտում էին հայ ժողովրդի շահերն անտեսելով, իրադարձությունների ընթացքը զարգացնել իրենց օգտին: Ահա այս ըմբռնումով է Բաղրամյանը մշակում ազգային ազատագրական շարժման կուռ տեսություն, մարտավարություն ու ռազմավարություն:

Այս գիտակցումով մեծ մտածողը հայ ժողովրդի ազատագրության խնդիրը կապեց հենց հայ ժողովրդի հետ, նրա ներուժի ի հայտ բերման ու համախմբման հետ:

Մեզ հաջողվեց հիմնավորել, որ Բաղրամյանը առաջադրում է նաև ազատագրական շարժման դրոշ բարձրացնելու պահի ընտրության գաղափարը: Այդ պահը օբյեկտիվ իրողությունների այն միագումարն է, ըստ որի նախ տիրող պետության համար պետք է աննպաստ պահ ստեղծվի, իսկ ճնշված հայ ժողովրդի համար միջազգային նպաստավոր պայմաններ:

Ի հայտ ենք բերել, որ ազգային ազատագրության հաջողության համար Բաղրամյանը կարևորում է նաև սուբյեկտիվ գործոնը: Այստեղ մեծ մտածողը կարևորում է ժողովրդին իր ետևից տանելու ընդունակ էլիտայի և ազգային շարժման շարժիչ ուժերի դերը: Ազատագրական շարժման շարժիչ ուժը՝ ըստ Բաղրամյանի, հայ երիտասարդությունն է:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՄԱԴՐԱՍԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Մադրասի քաղաքական խմբակը

Հայկական մշակույթը եվրոպական մշակույթի հետևողականությամբ զարգանալու բնորոշ օրինակ է մադրասահայ գաղութի գործունեությունը: Սա ուշագրավ այն իրողությունն է, որով հայ կյանքը ասիական արևելքում տարբերվում է շրջապատող ժողովուրդների կյանքից: Մադրասցիների բուրժուա-լուսավորական գործունեությունը ազդարարում է միջնադարի ավարտը և նոր դարաշրջանի սկզբնավորումը հայ իրականության մեջ: Մադրասի քաղաքական խմբակի հիմնադրումը և նրա բուռն գործունեությունը համընկնում է Արևմուտքում ծագած բուրժուական հեղափոխությունների և ազգային-ազատագրական շարժումների աննախադեպ վերելքի դարաշրջանին: Հայ իրականության մեջ ևս այս դարում ծլարձակված լուսավորականությունը դրսևորվեց իբրև ֆեոդալիզմից կապիտալիզմին անցման դարաշրջանի գաղափարական հոսանք: Այն մեզանում անհրաժեշտ փուլ էր ագրարային հարաբերություններին հրաժեշտ տալու և արդյունաբերականին թևակոխելու համար, որը ներկայանում է որպես անցման մի մեծ պատմաշրջանի գաղափարախոսություն և քաղաքական պրակտիկա:

Կար նաև հայ հանրային միտքը խթանող մեկ այլ կարևոր գործոն ևս: Հայտնի է, որ 1768-1774 թթ. տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմների ժամանակ և հաջորդ տարիներին նոր թափով ծավալվեց թուրք-պարսկական լծից, Ռուսաստանի օգնությամբ, Հայաստանը ազատագրելու գործընթացը, որը նշանավորվեց ազգային-ազատագրական շարժման նոր վերելքով: Շ. Շահամիրյանը առաջինն էր, որ փորձեց համադրել այդ շարժման տեսական ու պրակտիկ կողմերը:

Նա քաջ գիտեր, որ իր առաջադրած նոր հարաբերությունների անցման և Հայաստանի ազատագրության գաղափարները XVIII դարի հայ հասարակության համար անհավատալի ու անըմբռնելի կլինեն: Այդ հավատը ստեղծելու և գաղափարները ընկալելի դարձ-

նելու նպատակով Շահամիրյանը համառ ու տևական գործունեություն ծավալեց: Նա նաև գիտակցում էր, որ ոչ միայն թուրք-պարսկական ռազմաֆեոդալական իրավակարգում ապրող հայության, այլև ցանկացած հատվածի ժողովրդի ամեն մի նորույթ պետք է մատուցվի մատչելի և ընկալելի մեթոդներով ու ձևերով: Իր աշխատության ներածական մասում այս կապակցությամբ գրում է. «Ինչպես սովորություն է, ամեն մի նորագյուտ բան ով որ կամենում է ցույց տալ որևէ մեկին, հատկապես հասարակ ժողովրդին, պետք է դիմի երկու եղանակի. մեկ՝ որ անհրաժեշտ է պարզամիտներին ցույց տալ՝ աչքին տեսանելի դարձնելով, և մյուս՝ որ խոհական մարդկանց համար հարկավոր է ճշմարիտ ու անկեղծ բացատրություն տալ»[50]:

Խոհական մարդկանց բացատրելը, այսինքն՝ ազատագրության նոր ուսմունք ստեղծելը և դրանք կյանքում իրագործելը, սակայն, մի վաճառականի համար դյուրին գործ չէ: Եվ այդ գիտակցումով էր նա գրում հետևյալ տողերը. «Ես՝ հայ ազգի մեջ փոքրավորս,- թեպետ պատիվ եմ համարում ինձ դիտել որպես հայ փոքրավորներից և հաբեթական որդիներից մեկը, բայց ինձ համար տրտմալի է տեսնել իմ անկարողությունը, որ կատարելապես չեմ տիրապետում ոչ հայերեն լեզվի բառուբանին, ոչ էլ գրելու ու խոսելու արվեստի շնորհքին, բայց իմ սրտում իմ սեփական աշխարհի ու ազգի նկատմամբ մի մեծ նախանձախնդրություն կա, որը միայն կարող է լրացնել իմ արհեստի պակասությունը»[51]:

Շ. Շահամիրյանը լիահույս էր, որ իր բարձրացրած համազգային հարցերը անտարբերության չեն մատնվի, կան բանիմաց ու հայրենասեր մարդիկ, որոնց համախմբելով այդ մեծ գաղափարի շուրջ՝ կարելի է հասնել հաջողության. «Ոչ միայն խոստովանում, այլև երդվում եմ ձեր առաջ, որ իմ մտքում այն տպավորությունն ունեմ, որ մեր ազգի մեջ չի պակասում իմաստուն բժիշկ՝ բարեպաշտ հոգով և կատարյալ սիրով կապված իր ազգի և Հայոց աշխարհի հետ, ունակ ճանաչելու մեր տկարության դեղը»[52]:

Եվ ահա, իր շուրջը համախմբելով նման «բժիշկների», նա աննախադեպ մի քայլ կատարեց հայ քաղաքական կյանքում՝ Մադրասում

---

[50] **Շ. Շահամիրյան**, Որոգայթ փառաց, Եր., 2002, էջ 15:

[51] Նշվ. աշխ., էջ 59:

[52] Նշվ. աշխ., էջ 22:

ստեղծեց քաղաքական խմբակ, տպարան և իր շուրջը համախմբեց այնպիսի գործիչների, ինչպիսիք էին Մովսես Բաղրամյանը, Գրիգոր Խոջաջանյանը, Հովհանջան Գարաքյանը, Հակոբ և Եղիազար Շահամիրյանները և ուրիշներ: Անտարակույս, այս ստեղծագործական մթնոլորտում ծնվեց հայկական առաջին պարբերականը՝ Հարություն Շմավոնյանի «Ազդարարը»:

XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման և աչքի ընկնող մշակութային գործիչ, հայ տպագրության երախտավոր Գրիգոր Միքայելի Խոջաջանյանը Հայաստանի ազատագրության Հ. Էմինի ծրագրի իրականացմանը խոստացել էր հատկացնել իր հարստության կեսը: Էջմիածնի տպարանի շենքի կառուցման համար տրամադրել էր 3106 ոսկի դրամ, թղթի գործարանի կառուցման համար՝ 7800 պարսկական թուման: Վարձել և Էջմիածին էր ուղարկել ֆրանսիացի թղթագործ վարպետների: Խոջաջանյանը մեծապես նպաստել է նաև Մ. Բաղրամյանի և Շ. Շահամիրյանի գրական ստեղծագործությունների պրոպագանդմանը:

Մադրասի քաղաքական խմբի մյուս անդամ Խոջա Հովհանջան Գարաքյանը իր ծախսերով հիմնադրել է Նոր Նախիջևանի դպրոցը, աջակցել և մասնակցել Շ. Շահամիրյանի կազմած հայ-ռուսական դաշնագրի նախագծի մշակմանը:

Հրատարակչական, ստեղծագործական ու կազմակերպչական բուռն գործունեություն են ծավալել Շ. Շահամիրյանի որդիները՝ Հակոբը, Եղիազարը և հատկապես նրանց ուսուցիչ Մովսես Բաղրամյանը, Հարություն Շմավոնյանը և մյուսները:

Մադրասի քաղաքական խմբակի գաղափարները տարածելու համար 1771 թ. իր ավագ որդու՝ Հակոբի անունով Շ. Շահամիրյանը հիմնադրեց տպարան: Ինչպես նշում է Լեոն, մադրասահայերը չբավարարվեցին գաղափարի անհատական, մեկուսի քարոզչությամբ: «Հարկավոր էր ավելի ազդու, ավելի համոզիչ և համասփյուռ պրոպագանդ: Եվ Վաճառականական խմբակը, միանգամայն անսխալ ըմբռնելով այդ մեծ անհրաժեշտությունը, ցույց է տալիս մի գործունեություն, որ դեռ չէր տեսել հայ ժողովրդի արթնացած քաղաքական միտքը: Այս խմբակը առաջինն էր հայերի մեջ, որ քաղաքական պրոպագանդայի համար առաջ էր քաշում Գուտենբերգի գյուտը: Մադրասում բացվում է հայերեն առաջին տպարանը պատանի Հակոբ Շահամիրյանի անունով: Այդ տպարանից 1772 թ. լույս է հանվում

Մովսես Բաղրամյանի հեղինակած «Նոր տետրակ որ կոչի Յորդորակ» անունով գիրքը: Մի հրատարակություն, որի նշանակությունը հայոց գրականության մեջ... կարելի է անվանել չափազանց խոշոր: Մովսես Բաղրամյանը հանդիսանում է հայերի մեջ առաջին քաղաքական հրապարակախոսը, որ քարոզում էր իր ժամանակի համար միանգամայն անլուր, հեղափոխական մտքեր»[53]:

Ով ճանաչում է Արևելքը, նշում է Ի. Ռայանը, նա կարող է միայն հասկանալ, թե ինչ է նշանակում ոչնչից տպարան հիմնադրել[54]:

Կ. Ճինգոզյանը գտնում է, որ Շ. Շահամիրյանի հիմնադրած տպարանը գործել է մինչև XVIII դարի վերջը, այնուհետև Շահամիրյանի ծոռների ջանքերով վերակառուցվել է, հագեցվել նոր տառատեսակներով և շարունակել գործել մինչև XIX դարի առաջին քառորդը[55]: Տպարանում հրատարակվել են երեսունից ավելի գրքեր, ինչպես նաև հայոց առաջին պարբերականը՝ «Ազդարարը»[56]:

Անտարակույս, ամենաարժեքավորը Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչվում է Հորդորակ» հրապարակախոսական ստեղծագործությունն է, Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառացը» և «Նշաւակը», ինչպես նաև Հարություն Շմավոնյանի «Ազդարար» պարբերականը:

Մ. Բաղրամյանը Մադրասի քաղաքական խմբակի ամենակըրթված անձնավորությունն էր, Շ. Շահամիրյանի որդիների՝ Հակոբի ու Եղիազարի ուսուցիչն ու դաստիարակը, Մադրասում հրատարակված գրքերի խմբագիրն ու գրական աշխատակիցը: Իր առաջադ-

---

[53] **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 315:

[54] Տես «Նոր ազդարար», Կալկաթա, 1950, թիվ 1, էջ 26:

[55] Տես ՊԲՀ, 1979, թիվ 2, էջ 121:

[56] Այդ տպարանի հրատարակած գրքերից են.
Մովսես Բաղրամյան, Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, Մադրաս, 1772: Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, 1773, (իրականում հրատարակվել է 1787-1789 թվականներին): Մեսրոպ Երեց, Պատմութիւն մնացորդաց հայոց և վրաց, Մադրաս, 1775: Հանուէ, Պատմութիւն վարուցն եւ գործոց Նադըր Շահ թագավորին պարսից, Մադրաս, 1781: Տետրակ որ կոչի Նշաւակ, Մադրաս, 1783: Յովսեփ Արղութէանց, Օրինակ հանդիսաւոր ծանուցման եւ ողբոց, 1791: Պաղտասար դպիր, Քերականութիւն, Մադրաս, 1791: Հակոբ Թաղեան (Ջուղայեցի), Երկրաչափութիւն, Մադրաս, 1792: Ներսես Շնորհալի, Յիսուսի որդի, Մադրաս, 1792: Պորփիւր, Ներածութիւն: Դաւիթ Անյաղթ, Մադրաս, 1793: «Ազդարար», Մադրաս, 1794-1796, խմբ. Հարություն Շմավոնյան:

ռած գաղափարներով նա անվերապահորեն կանգնում է հայ ժողովրդի հանրային միտքը կերտող մեծերի կողքին:

Նույնքան արժեքավոր ու գնահատելի են Շահամիրյանի աշխատությունները՝ «Որոգայթ փառացը»[57] և «Նշաւակը»[58], որոնք հայ քաղաքագիտական մտքի պատմության սկզբնավորման շրջանի՝ XVIII դարի ամենանշանավոր ստեղծագործություններն են:

Նշանավոր հայագետ Թ. Ավդալբեգյանը համոզիչ փաստերով հաստատել է, որ «Նշաւակը» ոչ թե սովորական ընթերցանության գիրք է, այլ մի բացառիկ կանոնադրություն, որով ղեկավարվել է Մադրասի և առհասարակ հնդկահայ համայնքը: Անդրադառնալով կանոնադրության մշակողի խնդրին, քանի որ նրա վրա նույնպես գրված չէ հեղինակի անունը, Ավդալբեգյանը, համեմատելով «Որոգայթի» հետ, ապացուցել է, որ այն նույնպես պատկանում է Շ. Շահամիրյանի գրչին: Ավդալբեգյանը նախ պարզում է, թե ինչ դեր է ունեցել հնդկահայ կյանքում «Նշաւակը», ով է նրա հեղինակը, մատնանշում այն տեղը, որ պետք է հատկացնել այդ գրքույկին մեր հանրային մտքի պատմության մեջ:

Թեև «Նշաւակը» անծանոթ է մնացել հայագետներին, այնուամենայնիվ մի քանի տեղ՝ Ղուկաս Կաթողիկոսի Շահամիրյանին հղած նամակում,[59] «Ազդարարի» 1795 թ. փետրվարի 14- մարտի 15 համարում[60] և «Նոր Ջուղայու պատմություն» Ա. հատորում[61] հիշատակվում է այս գիրքը:

«Նշաւակի» մեջ ամենախոշոր առաջադիմական քայլը, Ավդալբեգյանի կարծիքով, այն է, որ այն ժամանակվա հայ միջավայրում, որտեղ հանրային գործերը տնօրինելու իրավունք ունեին միայն մելիքը, վարդապետը կամ ամիրան, այս գրքույկը հրապարակ է հանում ժողովրդական ընտրության գաղափարը: Հայ զանգվածի հե-

---

[57] Տես «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց», Մադրաս, 1773, վերահրատարակությունը՝ Թիֆլիս, 1913: Աշխարհաբար թարգմանությունը Պ. Խաչատրյանի, «Որոգայթ Փառաց», Եր., 2002:

[58] Տես «Տետրակ, որ կոչի նշաւակ», Մադրաս, 1783:

[59] Տես «Դիվան հայոց պատմության», գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 141:

[60] Տես «Ազդարար», Մադրաս, 1795, Նիհրան, էջ 82:

[61] Տես **Յարութիւն Տէր-Յովհաննեանց**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. 1, Նոր-Ջուղա, 1880, էջ 384:

տագայում նվաճած բոլոր ընտրական համակարգերի ծնունդ տվողը այս երկն է: Այս ինքնավարությունը հղացողի՝ Շահամիրյանի մերձավոր նպատակն է եղել թույլ չտալ, որ հայ բազմությունը լուծվի, և նրա կուտակած հարստությունը փոշիանա օտար հորիզոնների տակ: Հնդկահայ այս մտավորականը,- եզրակացնում է Ավդալբեգյանը,- գրել է ոչ միայն համայնական ինքնավարության օրենսգիրք «Նշաւակն», այլ Հայաստանի ապագա կազմակերպության վերաբերյալ մեծակերտ «Ուտոպիան»-«Որոգայթ փառացը», որ էլ ավելի հարուստ է խիզախ մտքերով,- ապա պետք է խոստովանենք,- որ Շահամիր Շահամիրյանը ֆրանսիական մեծ հեղափոխության գործիչների արժանավոր զինակիցն է քնած Արևելքում[62]:

«Որոգայթը» բաղկացած է կոնկրետ իրավանորմերից, հոդվածներից, որոնք կազմում են ներքին կուռ-միասնական ամբողջություն և արտահայտում են հայկական ապագա պետության հասարակական, սոցիալ-տնտեսական, պետական կարգի հիմնական սկզբունքները, պետական կառուցվածքը, քաղաքացիների իրավական դրության հիմունքները և այլն: «Որոգայթ փառացը» պետական իրավունքի իր 157 նորմերով, պետականագիտության ժամանակակից ըմբռնմամբ համակարգված սահմանադրություն է:

Ահա այսքան խոշոր ու փայլուն էր Շահամիրյանի խմբակի և տպարանի գործունեությունը:

Եվ, ինչպես նշում է Լեոն, ազատության և այս մեծ գաղափարների դեմ ծառացավ պահպանողականության հալածանքը:

Սիմեոն Ա. Կաթողիկոսի (1763-1780) կարծիքով՝ տպարան հաստատողը պետք է լինի կամ ազգի գլուխ և հոգածու, ինչպիսին էր Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը, կամ իմաստուն և գիտությամբ հրռչակված անձնավորություն, որ իր օգտավետ գրքերը տպագրի. «Արդ դու ոչ հասարակաց տէր և հոգածու ես ասէ, ոչ նշանաւոր իմաստուն ոք և ոչ ապրուստի կարօտ հասարակ անձ ոք: Այլ ես դու ազնուատոհմ իշխան և յամենայնի փարթամ և ունևոր և գլխաւոր վաճառական մի աշխարհական, պարապեալ ի հոգս մարմնական: Ինչ հարկ է քեզ ֆրանգստանից գիր բերել տալ և քո իշխանազուն որդուն տպագրիչ նշանակել, և տպագրել ոչինչ և աննշան իմաստակի

[62] **Թ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջ 272:

(Մ. Բաղրամյանի) ազգակործան գրքերը»[63]:

Շահամիրյանի համար տպարանի ստեղծումը նրա պրակտիկ քաղաքական գործունեության մի կարևոր օղակն էր միայն: Նա համոզված էր, որ այդ տպարանի հրատարակած գրքերում առաջադրած գաղափարները անհնար է իրագործել անկիրթ ու տգետ ժողովրդի մեջ: Անհրաժեշտ էր կրթել ու լուսավորել նրան: Եվ տենդագին ու տևական պայքար է ծավալում դպրոցների ու կրթական հաստատությունների հիմնադրման ուղղությամբ:

Մադրասահայերի համար Շահամիրյանը 1772 թվականին ոչ միայն ստեղծում է գրադարան, իսկ 1784-ին՝ դպրոց[64], այլև «Նշաւակում» սահմանում է այդ դպրոցի գործունեության չափանիշները, սկզբունքները: Հայոց ուսումնարանը, ըստ «Նշաւակի» 34-րդ հոդվածի, պետք է «կազմեսցին ի արձակ տեղի եւ ի վերայ քաղցր ջրոյ ջրհոսի դպրատուն մի, եւ մուծցեն յերկու վարդապետս, մինն յազգեն հայոց եւ դաւանութեամբ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, այր հեզ, խոնարհ եւ մաքուր սրտիւ եւ հմուտ արհեստին ուսուցանելոյ բառ եւ տառս Հայոց…եւ մի վարպետ Երօփիեն յազգէն անկլիացոյ, այր հեզ եւ բարեպաշտ եւ հմուտ բառից եւ արհեստին ուսուցանելոյ մանկանց բանիւ եւ տառիւ անկլիացւոյ»: Նույն հոդվածով նախատեսվում է նաև, թե ովքեր կարող են սովորել Մադրասի հայոց ուսումնարանում. «Ի միջի դպրատանս մի մտցի վասն ուսման այլ ոք ի զանազան յազգաց մանկունք եւ զանազան կերպում աստված պաշտողք, բայց որդիս Մադրասիս Հայոց եւ որդիս յեթանոսաց մկրտեալ ի յեկեղեցիս մեր եւ կալով մնացեալ ի հաւատս աստուածապաշտութեան ըստ սովորութեան Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ եւ որդիս յաբաշաց եւ ասորոց, եթե իցեն ի դավանութիւն իւրեանց եւ որդիս հեթանոսաց յայսմ քաղաքիս»[65]: Այնտեղ կարող են սովորել հայ ու լուսավորչականները, իրենց ազգային եկեղեցու դավանությունը չփոխած հաբեշներն ու ասորիները և հնդիկ հեթանոսները:

Շահամիրյանը ջանում էր դպրոցների ցանց ստեղծել նաև Հայաստանում և հատկապես Արցախում:

---

[63] Դիվան հայոց պատմության, գիրք Ը, էջ 579:

[64] Տես **Ա. Եդիգարյան**, Մադրաս կամ Հարավային Հնդկաստանի հայ գաղութը, «Նոր ազդարար», Կալկաթա, 1951-1952, թիվ 4-5, էջ 321:

[65] Նշաւակ, հոդ. ԼԴ:

Նա երազում էր, որ Գանձասարի կաթողիկոսի ջանքերով դըպրոցներ կբացվեն Արցախի լեռներում, կկառուցվի թղթի գործարան, կհրապարակվեն հայրենասիրական գրքեր, որոնցով կդաստիարակվեն սերունդներ, որոնք կգիտակցեն հայրենիքի նշանակությունը, կհամախմբվեն նրա ազատագրության գաղափարի շուրջ:

Շահամիրյանի խմբակի պրակտիկ գործունեության նպատակն ու առանցքը Հայաստանի ազատագրության խնդիրն էր, որի քարոզով տևական նամակագրություն է ծավալվում Արցախի մելիքների, վրաց Հերակլ թագավորի, Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսների, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի ու Լազարյանների հետ: Այդ նամակներից շատերը մեզ չեն հասել: Նրանց մասին և այնտեղ արծարծված խնդիրներին տեղեկանում ենք Էջմիածնի արխիվում և այլուր պահպանված պատասխան նամակներից[66]:

Ըստ «Նշաւակի» մադրասահայության ինքնավարության կենտրոնական հիմնարկը «Սնդուկ սրբոցն» է: Նրա մեջ գրանցվում և պահպանվում են դրամներն ու հաշիվները, ողորմության, հիշատակի, եկամտահարկերի և կտակի միջոցով հավաքված գումարները: Սնդուկի դրամագլուխը շահույթով կարող էին տրամադրել անհատ գործարարներին կամ ընկերություններին: Շահույթից սնդուկը տարեվերջին գումարներ է տալիս իրավատերերին, որբերին ու տնանկներին: Նախատեսվում էր, որ սնդուկի միջոցները շատանալու դեպքում բաժանմունքներ են բացվելու նաև Կալկաթայում և Սուրաթում: Եթե Մադրասում հայ համայնքը քչանար, սնդուկի ամբողջ ունեցվածքը իբրև ավանդ մուծվելու էր «ի սնդուկն թագաւորին Բրիտանու», դարձյալ հայերին վերադարձնելու պայմանով:

Շ. Շահամիրյանի նպատակն է եղել թույլ չտալ, որ հայ հասարակությունը տարրալուծվի, իսկ նրա կուտակած հարստությունը փոշիանա օտար հորիզոնների տակ: Նա հորդորում է հասարակությանը այնպես անել, որ իրենց աշխատանքի պտուղները մնան և ծառայեն հայ ժողովրդին ու նրա ազատությանը: Շահամիրյանը ցավում է, որ հայ պանդուխտը չունի հայրենիք ու պետություն, բայց հավատում է, որ մի օր կիրականանան նրա իղձերը: Պետք է հավաքել ու կուտակել նյութական միջոցներ, պահպանել այն, մինչև որ հնա-

[66] Տե՛ս **Ս. Վ. Տեր-Ավետիսյան**, Նյութեր Հնդկաստանի հայ գաղութի պատմության համար, ԵՊՀ գիտ. աշխատություններ, Եր., 1940, թիվ XIII, էջ 30:

ռավորություն կստեղծվի վերադառնալ մայր հայրենիք. Արարատ աշխարհ. «Երանի և բազմիցս երանի արանցն յայնոցունց, որում գտանիցին այն ոսկեզօծ ժամանակն երջանկութեան»[67]:

1.2. «Ազդարարի» ծնունդը

Հայ բանասիրության մեջ կարծիքներ են հայտնվել, թե իբր Մադրասի հայ գաղութում որոշ հաջորդականությամբ գործել են չորս տարբեր տպարաններ՝ Շահամիր Շահամիրյանի, Հարություն Շմավոնյանի, Սարգիս Աղավալյանցի և Հակոբ ու Հովսեփ, Նազար Շահամիրյանների: Սակայն իրականում այնտեղ եղել է միայն Շ. Շահամիրյանի հիմնադրած տպարանը, որը տարբեր ժամանակահատվածներում գործել է տարբեր հրատարակիչ-տնօրենների անուններով: Պարզվում է նաև, որ XVIII դարի վերջին երեսնամյակում Մադրասում գործող քաղաքական խմբակի, տպարանի և «Ազդարարի» շուրջը համախմբված նվիրյալների համատեղ գործունեության շնորհիվ Մադրասը դառնում է հայ հասարակական մտքի ու լուսավորական շարժման համազգային կենտրոնը:

Կարևորելով հնդկահայ ժուռնալիստիկայի և հայ պարբերական մամուլի խաղացած դերը հայ հասարակական մտքի պատմության սկզբնավորման գործում, Արտ. Կարինյանը նշում է, որ յուրացնելով մադրասահայ հրապարակախոսների պատգամները, հայ լրագրողները սկզբնավորում են կրթական-լուսավորական նոր շարժում և գրականություն՝ գաղութահայ օջախների քայքայման շրջանում: Երբ հայ կուլտուրայի պատմության այդ էջերից հետո մենք անցնում ենք առաջին հայ պարբերականների մեջ հրատարակված նյութերի քննարկմանը և ուսումնասիրությանը, տեսնում ենք, որ առաջին պարբերականի ղեկավարը հիմնականում քայլել է հիշյալ գործիչների (Մ. Բաղրամյան, Շ. Շահամիրյան, Հ. Էմին) ուղիներով և որևէ նկատելի բեկում չեն ստեղծել հասարակական մտքի պատմության մեջ[68]:

Մադրասահայ հասարակական մտքի շարունակությունը հավաստող Արտ. Կարինյանը անսպասելիորեն 180 աստիճան շրջադարձ է

---

[67] Նշաւակ, էջ 5:

[68] Տես **Արտ. Կարինյան**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Եր., 1956, էջ 48, 183:

կատարում, և ամեն ջանք գործադրում համոզելու, թե իբր Շմավոնյանը դատարկ դաշտում է ստեղծում իր տպարանը: Նա Հ. Էմինի, Մ. Բաղրամյանի և Շ. Շահամիրյանի հակառակորդն էր և սկզբունքային տարաձայնություններ ուներ նրանց հետ: Շմավոնյանը կարող էր գուցե և ստանալ Շահամիրյանի արդեն փակված տպարանի տառերը, մտորում է Կարինյանն ու կամայականորեն եզրակացնում. «Շմավոնյանը հնարավորություն չուներ որևէ կերպ օգտագործել Շահամիրյանի տպարանը: Նա ինքն էր հիմնում իր նոր տպարանը, ինքն էր հորինում ու շինում այդ տպարանի իր նոր տառերը: Վերջապես, համախմբելով իր շուրջը զինակիցների ինչ-որ փոքրիկ խմբակ, նա իր իսկ վաստակած դրամով ութ տարվա ընթացքում հրապարակում է ութ գիրք (1789-1797): Նշված փաստերը որոշակի կերպով քանդում են հայ բանասերների բոլոր պնդումները «Ազդարարին» օժանդակող - աշխատակցող Շահամիրյանի, կամ նրա այլ գործիչների որևէ դերի մասին»[69]:

Իրականում մի բարեպատեհ առիթով ծնվեց Հարություն Շմավոնյանի հրատարակչական ու խմբագրական անմահ գործունեությունը: Շմավոնյանի գործընկեր Պետրոս Պուռնազյանը «Բելիսարիոս» գրքի «Առ բարեմիտ վերծանողս» հատվածում գրում է. «Տէրն իմ (Հ. Շմավոնյանը) …գալ ի Մադրաս… յաւուր միում՝ ազնուամիտ Աղա Շամիր Սուլթան այրն հանճարեղ, ասացեալ է, Տէր Հայր, լսեմ շնորհալի միտս ունիս, նօտր գիր մի նու՝ պակասե ի տպարանէ մերմէ, արդ կարող ես յօրինել, քանզի՝ ցանկալի է ինձ այդ տպարան, վասն անուան որդոյ իմոյ: Տէրն իմ երբեք չէր տեսեալ նոյն գործ, եւ ոչ լոեալ բնաւ, ապաւինելով ի տուիչն բարեաց՝ Սուրբ Հոգին, խոստացեալ էր շինել, *որպես կայ նոյն գիր մինչև ցայսօր,* յետ այնորիկ՝ առաւել վըստահեցեալ եւ սիրահարեալ, ձեռնամուխ եղեւ, բոլոր գիրն՝ գլխովին ամենայն պարագայիւքն յարմարիլ, ոչ շատացաւ նովաւ միայն՝ այլ եւ բազմաց յազգէն Հայոց վերակրելով, եւ ուսուցանելով, յօգնականութեամբ Ազնուատոհմն Աղա Նազար Յակոբջան Շահմիրեանց բարեացապարտ յառնէ,եւ անունք ուսելոցն յայտնի է ի բազում տեղիս վերջ գրոց որք տպեալք են ինեւ»[70]:

Պուռնազյանի այս տեղեկությունից պարզվում է, որ Շահամի-

---

[69] **Արտ. Կարինյան**, նշվ. աշխ. էջ 197:

[70] Մարմոնտել, Բելիսարիոս, Մադրաս, 1809, էջ 283-284:

ությանը Հ. Շմավոնյանին խնդրել էր ոչ թե նոր տառեր, առավել ևս նոր տպարան ստեղծել, այլ ընդամենը գործող տպարանից պակասող մի «Ն» տառ ձուլել: Շմավոնյանը կատարում է այդ խնդրանքը և հաջողությունից այնքան է ոգևորվում, որ նորոգում է բոլոր մաշված ու փչացած տառերը, որոնք շարունակել են օգտագործվել մինչև 1809 թ. Շմավոնյանի տպարանի կողմից հրատարակված հիշյալ գրքի հրատարակության ժամանակը՝ «որպես կայ նոյն գիր մինչև ցայսօր»[71]:

Հայկ Խաչատրյանը, համեմատելով Շ. Շահամիրյանի տպարանի թողարկած գրքերի և Հ. Շմավոնյանի տպարանի թողարկած գրքերի տառատեսակները, հանգել է այն կարծիքին, որ այս տպարաններում լույս տեսած գրքերի շատ տառատեսակներ ու ձևավորումներ, խորհրդանիշեր ու նախշազարդեր նման են և նույնական: Ավելին, նման են նաև Շմավոնյանի տպարանի փակվելուց հետո բացված Աղալովյանի տպարանի (1809-1818 թթ.) ընդհանուր նշաններն ու տառատեսակները: Երբ մադրասահայոց նշված բոլոր տպարաններ-ը բերում ենք մեկ ընդհանրության, նկատում ենք, որ մի տպարանը սկսել է գործել այն ժամանակ, երբ նախորդը դադարել է գործելուց[72]:

Շահամիրյանի տպարանի հենքի վրա դեռևս XVIII դարում առաջացավ պոլիգրաֆիստների մի ստվար խումբ, որի անդամների մեջ տեսնում ենք արհեստավարժ հրատարակիչների ու ժուռնալիստների, հրապարակախոսների ու կազմակերպիչների, որոնք որոշիչ դեր խաղացին հաջորդ պատմաշրջանում՝ XIX դ. սկզբներին ծավալված հայ տպագրական արվեստի ու պարբերական մամուլի զարգացման գործում: Այդ հիմնադիր գործիչներից են՝ Շ. Շահամիրյանը, Մ. Բաղրամյանը, Շ. Շահամիրյանի որդիները, Հ. Շմավոնյանը, Կարապետ Մկրտումյանը, Պօղոս Միրզայան Ամիթեցին, Հակոբ Սիմոն Այությանցը, Հովհաննես Ծատուր Եօթնեանցը, Յակոբոս Պետրոսյանը, Ս. Ղայթմազյանց Թիֆլիզեցին, Տէր Թադեոս Տէր-Անդրեասյան Սոգինյանցը, Խաչատուր Ծատուրյան Զարիֆյանը, Ավետ Սեթյանը, Մարութ Հովսեփի Փոնչյանցը, Բարաղամ Քալանթարյանը, Մանուկ Հակոբջանյանը, Հարություն Կարապետյանը և ուրիշներ:

---

[71] Տես նշվ. աշխ.:

[72] Տես **Հ. Խաչատրյան**, Մադրասի տպագրության պատմությունից, «Լրաբեր», 1984, թիվ 3, էջ 43:

Մադրասահայ խմբակը ազգային-եկեղեցական կառույց էր և ենթարկվում էր ամենայն հայոց կաթողիկոսությանը: Պարզ է, որ Շմավոնյանի պարբերականը պետք է հետևեր եկեղեցու պետի հրահանգներին: Դրա հետ մեկտեղ, հետևելով Շահամիրյանի, Էմինի և Բաղրամյանի նախագծած գաղափարներին, թերթը ազդարարում էր նոր դարաշրջանի, սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների և հայ ժողովրդի առջև ծառացած նոր խնդիրների ծնունդը: «Ազդարարի» էջերում մի կողմից մշակվում էին նոր բուրժուական հարաբերությունների վարքագիծը, բացահայտվում նրա ներքին օրենքները, մյուս կողմից՝ հայ ժողովրդի լուսավորության, ազգի ազատագրության ուղիների մշակման, ազգային ինքնիշխան պետականության ստեղծման խնդիրները: Եվ պատահական չէր, որ հենց Մադրասում ծնունդ առավ հայ մամուլի առաջնեկը:

Ահա այս նոր ու առաջադեմ երևույթն է կարևորվում հայ մշակույթի պատմության մեջ, Շմավոնյանի այս մեծ քայլով է հայ ազգը, Լեոյի խոսքերով ասած, մտնում քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մեջ[73]: Հարություն քահանա Շմավոնյանը առաջին հայ խմբագիրն էր և այդ, նախադեպը չունեցող մեծ գործի հիմնադիրն ու ստեղծողը: Ազգային եկեղեցու և հայ ժողովրդի ավանդական արժեքները լուսաբանելու հետ միասին «Ազդարարը» նախ և առաջ վաճառական հրատարակչություն էր: Նրա բովանդակության այն մասերը, որոնք վերաբերում են օրվա ընթացիկ կյանքին, առևտրի խնդիրներն են: Մադրասում հայ ազնվականություն չկար, հոգևորականությունն՝ իբրև հասարակական շերտ, նույնպես բացակայում էր: «Ազդարարի» կազմակերպիչներն ու հրատարակիչները Մադրասի վաճառականներն էին, այլ խոսքով՝ հայ մամուլի հիմնադրման պատճառը հայ առևտրական կապիտալն էր: Այս պարբերականը հրատարակվում էր այն ժամանակ, երբ համազգային-հասարակական գործերի տնօրինությունն աստիճանաբար անցնում էր առևտրական կապիտալի ձեռքը: Այսուհանդերձ «Ազդարարը» աշխատում էր բավարարել թե՛ հայ բուրժուազիայի և թե՛ հայ հոգևորականության պահանջները: Նրա խմբագիրը քահանա էր, աշխատակիցներից մի քանիսը նույնպես հոգևորականներ էին, պարբերականի էջերում որոշակի տեղ ուներ կրոնական բարոյականությունը, բայց աղոթքի ու քարո-

[73] Տես **Լեո**, երկեր, հ. 3, էջ 550:

զի կողքին կարևոր տեղ են գրավում առևտրական լուրերը, ապրանքատար նավերի ժամանելու և մեկնելու մասին տեղեկությունները, ապրանքների գների բյուլետենները: Թղթակիցները վաճառականներ էին, որոնք աշխարհի զանազան կողմերից անհրաժեշտ տեղեկություններ էին հաղորդում առևտրական շուկաների մասին:

Հայոց առաջին պարբերականի հիմնադրման շնորհիվ Շ. Շահամիրյանի Մ. Բաղրամյանի, Հ. Էմինի և մյուսների աշխատություններում առաջադրված հիմնախնդիրները ավելի առարկայական դարձան, գիտական նեղ շրջանակներից դուրս եկան և դարձան ընթերցող լայն զանգվածների սեփականությունը:

Բարձր գնահատելով Հարություն Շմավոնյանի ծառայությունը հայ մշակույթին, Արշակ Ալպոյաճյանը իրավացիորեն գրում է. «Երբ Հնդկաստանի անկիւնը Շիրազեցի այդ քահանան անգլիական ցեղի հետ մրցումի կը մտնէ, անոնց հազիւ քանի մը ամիս առաջ ըրածը ինքն ալ փորձելով, դեռ արևելեան ազգերէն և ոչ մէկուն մէջ լրագիր մը հիմնելու և հրատարակելու գաղափարը կար:

Թուրքերը, Պարսիկները և Վրացիք դեռ շատ ուշ պիտի ունենային իրենց լրագիրները, և հայ մտաւորական կեանքի առաջնորդը՝ Վենետիկ և Վիեննա, Կ. Պոլիս և Թիֆլիս հազիւ մի քանի տասնեակ տարիներ յետոյ ճշմարիտ ըմբռնումը պիտի ունենային լրագրին:

Միայն ու միմիայն այս պարագան կը բաւէ Շիրազեցի այդ քահանային փառքը հիւսելու»[74]:

Շահամիր Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը ոչ միայն անմիջական մասնակցություն են ունեցել պարբերականի ստեղծման ու առօրյա աշխատանքներին, այլև էականորեն դիմորոշել են նրա ուղղվածությունը, առաջնային դարձրել հայկական լուսավորականության, ազգային-ազատագրական պայքարի տեսության, հայ ժողովրդի արտաքին քաղաքական կողմնորոշման, ազգային ինքնության ու ինքնագիտակցության հիմնախնդիրները:

Հակառակ Արտ. Կարինյանի այն պնդման, թե Հ. Շմավոնյանը չի համագործակցել Շ. Շահամիրյանի և նրա գործընկերների հետ[75], «Ազդարարի» հենց առաջին համարում զետեղված Շ. Շահամիրյա-

---

[74] **Ա. Ալպոյաճեան**, Պատմութիւն հայ գաղթականութեան, Գահիրե, 1961, էջ 411:

[75] Տես **Արտ. Կարինյան**, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Եր., 1956, էջ 197:

նի՝ անգլիացի բժիշկ Անդերսենին հասցեագրված նամակը[76] վկայում է, որ Հ. Շմավոնյանը սերտ կապի մեջ է եղել նրա հետ պարբերականի հիմնադրման օրից սկսած:

1793 թ. նոյեմբերի 29-ի այդ նամակում Շահամիրյանը անգլիացիներին տեղեկացնում է, որ հայ ժողովուրդը հնագույն ծագում ունի, որ ըստ տիրապետող կարծիքի[77], մարդկային ցեղը երկու անգամ էլ՝ այսինքն՝ թե՛ Ադամի և թե՛ Նոյի ժամանակ առաջացել է Հայաստանում, որ Հայաստանը եղել է մարդկության օրրանը, նրա նախահայրենիքը, հայերը աշխարհի ամենահին ժողովուրդն են, իսկ հայերենը՝ մարդկության նախամայր լեզուն: «Աստոածաշունչ սուրբ գիրքն, ի Հին կտակարանին յիշատակէ, - կարդում ենք նամակում,- զի ի նախահօրէ մերմէ յԱդամայ սերելոն ազգ մինչև ցՆոյ և զընտանիս իւր, այլք մտին ի տապանն, և զերծան ի ընդհանրական ջրհեղեղէն բոլոր աշխարհի: Որովհետև յոյժ բնականէ, զի զմանկունսն ընդհանրապէս խօսեցին զլեզուս հայոց, և մարց իւրեանք, և որովհետև յԱդամայ մինչև ի ջրհեղեղն յայնմ միջոց ժամանակի Մաղաղիել զթոռան զաւակն Ադամայ դեռևս կենդանի էր, որ Նոյ տեսեալ է նմա, որպես ցուցանէ յԱստոածաշունչ նոր գիրքն, ուրեմն յոյժ իրաւացի է, զի նոքա ամենեքեան խօսէին զլեզուս Ադամայ, և յետևապէս Նոյ և զընտանիսն իւր որք զերծան ի ջրհեղեղէն ի տապանին, որ նստաւ ի վերայ լեռինն Մասիսու, որ ի յԱրարատ...»[78]:

«Ազդարարում» տպագրված հրապարակումների մեջ կարևորվում են Խաչատուր վարդապետ Ջուղայեցու «Պատմութիւն պարսից», Հակոբ Այությանցի «Պատմութիւն Հեյդարալի խանի» ծավալուն աշխատությունները, «Ողբ Հայաստանեայց» պոեմի հեղինակ Թադևոս Սոգինյանի բանաստեղծություններն ու թղթակցությունները և Հայ որդի Հայի հրապարակախոսական գրախոսությունները:

«Ազդարարի» ստեղծագործական կոլեկտիվի ամենաաչքի ընկնող անդամներից էր Թադևոս Սոգինյանը: Նա ամսագրի գլխավոր աշխատակիցներից մեկն էր, Հ. Շմավոնյանի մտերիմը, աջակիցը, որի հոդվածները և բանաստեղծությունները որոշում էին պարբերա-

---

[76] Տես «Ազդարար», 1794, թիվ 1, էջ 11:

[77] Տես **Մ. Սեբաստացի**, Քերականութիւն գրաբարի լեզուի հակազեան սեռի, Վենետիկ, 1784, հ. Ա., էջ 153-164:

[78] «Ազդարար», 1794, թիվ 1, էջ 11:

կանի գաղափարական ուղղությունը: Դեռևս 1791 թ. Հ. Շմավոնյանի տպարանում հրատարակվել էր նրա «Տետրակ որ կոչի ողբ Հայաստանեայց» պոեմը[79]:

«Ազդարարի» առաջին 7 համարներում «Ուրախակից բարեկամ» ծածկանունով տպագրված նրա գործերը ծրագրային առաջնորդողների կշիռ ունեն: Իր հարցադրումներով հարազատ մնալով խմբագրի քաղաքական ուղղվածությանը և «Ողբ Հայաստանեայցի» գաղափարներին՝ Թ. Սոգինյանը քննարկում է հայերի մտավոր զարգացման, տնտեսական դրության և քաղաքական իրավիճակի հետ կապված հարցեր: Նա հայերին խորհուրդ է տալիս վերցնել իրենց գանձերը և գնալ Հայաստան, զարգացնել ազգային տնտեսությունը, արդյունագործությունը, փող կուտակել և դրա տոկոսներով դպրոցական ցանց ստեղծել:

Հայաստանի ազատագրության հույսը Սոգինյանը կապում է քրիստոնյա թագավորների հետ, գտնում, որ նրանց լեզուներով թարգմանելով Հայաստանը նվաճած ոսոխների դաժան արարքները՝ Արևմուտքում ատելություն կառաջացնեն վերջիններիս դեմ և համակրանք՝ հայ ժողովրդի հանդեպ: Գիտակցելով լուսավորական շարժման մեծ նշանակությունը, «Ազդարար» ամսագիրը նա համարում է հայ ժողովրդի կյանքը վերածնող ավետաբեր աղավնի: Թ. Սոգինյանի ստեղծագործությունների գաղափարական ուղղվածությունը, հայ ժողովրդի վիճակի ու նրա ապագա բախտի շուրջ ծավալված հեղինակի խորհրդածությունները, մայր հայրենիքի բանաստեղծական կերպարի մարմնավորումը անմիջականորեն բխում են Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» գրքի սկզբունքներից: Ինչպես Մ. Բաղրամյանը, այնպես էլ Թ. Սոգինյանը հայ երիտասարդությանը ներկայացնում է Մայր Հայաստանը, նրա պատմությունը, պանդուխտ հայերի հուսահատ ու անմիաբան վիճակը, հայրենիք վերադառնալու և իրենց օրինական ժառանգությանը տեր կանգնելու անհրաժեշտությունը: Հայրենիքն այլևս տեսիլք և վերացական երևույթ չէ, այլ շոշափելի տարածք, որի հետ է կապվում տարաբախտ ժողովրդի փրկության հույսը: Հայերի ուշադրությունը նրանք հրավիրում են հարևան, երբեմնի հետամնաց ազգերի վրա,

[79] Տես **Թադէոս Սոգինեանց**, Տետրակ որ կոչի ողբ Հայաստանեաց, Մադրաս, 1791, էջ 31:

որոնք արագորեն զարգանում են և հզորանում:

«Ազդարարի» 1795 թվականի հունիսի 19-ից հուլիսի 18-ի համարներում լույս է տեսնում մի ուշագրավ հոդված «Հայի որդի հայ» ստորագրությամբ: «Ազդարարի» նույն թվականի հաջորդ՝ հուլիսի 19-ից օգոստոսի 17-ի համարներում «Ազգակից» կեղծանունով մի այլ հեղինակի պատասխան հոդվածն է զետեղվում: Իսկ «Ազդարարի» հաջորդ՝ օգոստոսի 18-ից սեպտեմբերի 16-ի տետրում լույս է տեսնում նույն՝ «Հայի որդի հայի» պատասխան հոդվածը՝ «Ազգակցին»:

Թադևոս Ավդալբեգյանի կարծիքով՝ «Հայ որդի Հայը» Մովսես Բաղրամյանն է, իսկ «Ազգակիցը»՝ Շահամիր Շահամիրյանը:

Արտ. Կարինյանը գտնում է, որ երկուսի անվան տակ էլ հանդես է գալիս Հարություն Շմավոնյանը: Մ. Մխիթարյանը[80] հետևում է Ավդալբեգյանին: «Մեր կարծիքով,- գրում է վերջինս,- արիություն քարոզող հեղինակը կարող էր լինել «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» հորինողը միայն: Լեզուն, ոճը, օրինակները, գաղափարը, ոգին երկու երկերի այնքան նման են իրար և այնքան տարբեր այն ժամանակվա այլ հեղինակների գործերից, որ ամենամակերևութային համեմատությունն անգամ համոզում է, որ «Հայի որդի Հայը» ոչ այլ ոք է, եթե ոչ հայ երիտասարդներին քնից սթափեցնող ու արիություն հաղորդող Մովսես Բաղրամյանը: Մյուս հոդվածագրի՝ «Ազգակցի» լեզուն շատ նման է «Որոգայթ փառացի» ու «Նշավակի» լեզվին: Նա իր մասին ասում է հետևյալը.

«Ի ծննդենէ իմմէ մինչև ցայսօր ոչ այլ ինչ ուսայ, բայց ի էժան գնել ու թանկ վաճառել»: Ուրիշ խոսքով գրողը մի անուսում վաճառական է: Սակայն նա հասարակական խնդիրներով այնքան է հետաքրքրվում, որ բանավեճ է սկսում մի հմուտ ու լեզվանի հրապարակախոսի դեմ: ...Արդյոք Ազգակիցը հենց ինքը Շահամիր Շահամիրյանը չէ»[81]:

Այս կարծիքին դեմ է Արտ. Կարինյանը, գտնելով որ նշված հեղինակների հոդվածները բանավիճային չեն. «Հայի որդի Հայը» և «Ազգակիցը» հանդես են գալիս որպես լուսավորականության ջահակիրներ և քարոզիչներ: Նրանք առաջարկում են միահամուռ ջան-

---

[80] Տես **Մ. Մխիթարյան**, Հարություն Շմավոնյանը և նրա գործակիցները, ՊԲՀ, 1969, թիվ 4, էջ 131:

[81] **Թ. Ավդալբեգյան**, Առաջին բանավեճը հայ մամուլի մեջ, «Հայագիտական հետազոտություններ», Եր., 1969, էջ 239:

քերով պայքար մղել հայ ժողովրդի մահացու թշնամու՝ տգիտության դեմ: «Հայի որդի Հայը», ըստ Կարինյանի, Բաղրամյանը չի կարող լինել, քանի որ Սիմէոն Ա Երևանցի կաթողիկոսի երկրպագուն պարբերականի մեջ չէր կարող տեղ տալ այնքան խիստ կերպով դատապարտված գործչի գաղափարներին: Նա Շահամիրյանին նույնպես չի համարում նշված հոդվածների հեղինակ, պատճառաբանելով, թե վերջինս հանդես կգար բացահայտ կերպով և չէր պատսպարվի եկվոր քահանայի հովանու ներքո: «Միակ անձնավորությունը, որը այդ օրերին կարող էր, հիրավի, հրապարակախոսի պարտականություն ստանձնել՝ Շմավոնյանն էր: Այդ տիպի գործիչը չէր կարող սահմանափակվել *սոսկ պատահական* հեղինակների գրվածքների հրատարակությամբ»[82]:

«Ազդարարի» հրապարակումների և նշված հոդվածների մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում մեզ հաջողվեց պարզել հետևյալը.

Առաջին, այս ստեղծագործությունների հեղինակը Հ. Շմավոնյանը չի կարող լինել այն պարզ պատճառով, որ «Հայի որդի Հայը» իր վիճահարույց հոդվածում հրապարակելու խնդրանքով դիմել էր հենց պարբերականի խմբագիր Հ. Շմավոնյանին. «Սրբակրօն Տեր Յարութիւն Շմաւոնեան և Պարոնաց վերակացուց Ազդարարին. Լսելով յարաժամ ազդարարէ ձերմէ զողբս դառնութեան վասն ազգիս մերոյ, եւ տեսանելով զի զիգաբար վարս մեր եղեալ բոլորովին ի մոռացումն դժգոհիմք ի Տեառնէ զի ոչ ողորմի մեզ (մինչդեռ ունիմք ամենայն շնորհս նորա իբրև այլոց) համարձակեցայ օրինակոք զսղալանս մեր բարձրաձայն կարդալ. որպեսզի ընթերցողք և ողբացողքն դիտելով զի մեղանչին առ նոյն ստեղծողն, որ հաւասարապէս բաշխեաց զշնորհ իւր անթիւ և ոչ զանազանէ ստեղծոածոց իւրանց և յարաժամ ի թիկունս հասանէ այնոցիկ որք զընկալեալ իւրեանց գործիք ըստ արժանւոյն գործեն խորհեցան այսուհետև յաւելի անարժան պատճառս տալ անկման մերոյ և հնարիցեն արժանանալ նոյն երանութեանց որոնց վասն հառաչեն զոր եթէ չիցէ անդ անպատեհութիւն ինչ և արժանասցի գտանել զհաճութիւնս ձեր՝ խոնարհաբար խնդրեմ հրամայիցէք տպագրելոյ ի յազդարարին, և եթէ դիպիք սղալանաց ինչ ի նմա սրբագրել կամ հանել զբան ողջուն կարէք առ-

[82] **Արտ. Կարինյան**, նշվ. աշխ., էջ 224:

նել անխտիր, վասն զի լաւ են երկու քան զմի որոյ վասն մնալոց եմ ձեզ շնորհապարտ ծառայ Հայ որդի Հայի (ի Մադրաս, Նախայ 20, 1795)»[83]:

Այս ուղերձից պարզվում է, որ «Ազդարարի» էջերում տպագրըված ողբագին ստեղծագործություններն են վրդովեցրել «Հայի որդի Հային», որի համար էլ գրել է քննադատական հոդված:

Երկրորդ, պարզ է, որ «Ազգակիցը» Շ. Շահամիրյանն էլ չի կարող լինել, ինչպես ենթադրում է Ավդալբեգյանը: Մովսես Բաղրամյան- «Հայի որդի Հայը», երբեք իրեն թույլ չէր տա իր մեծանուն գրչակցին ու հովանավոր-բարեկամին հասցեագրված պատասխան հոդվածում գրել. «Զարմանալով նախապէս զքաջասրտութենէ քո (քանզի դու միայն երևեցար յօրէ ծննդենէ Ազդարարին մինչև ցայսօր ի սահմանս նորա զինավորեալ) ոչ գիտեմ շնորհակալ եղէց թէ հակառակորդ»[84]:

Մեջբերված քաղվածքից պարզվում է, որ «Ազգակիցը» «Ազդարարի» անդավաճան ուղեկիցն է ամսագրի հիմնադրման օրից: Մեկ այլ հատվածում Հայորդին Ազգակցին համոզում է որ ինքը նրա ստեղծագործությունների երկրպագուն է. «Հաւատա ինձ զի զոտանաւոր բանք գրութեան քոյ ի միտ առի սիրով և յիշատակեմ ի մտի իմում ամենայն աւուր»[85]: Այստեղ Ազգակիցը ներկայանում է որպես հանրահայտ ու սիրված բանաստեղծ, որի ստեղծագործությունները անգիր սովորել է Հայորդին ու ամեն օր արտասանում է:

Հայտնի է, որ «Ազդարարի» հիմնադրման օրից աշխատակցած բանաստեղծը «Ողբ Հայաստանեայցի» հեղինակ Թ. Սոգինյանն է, որը ամսաթերթի էջերում հաճախ հանդես էր գալիս «Ուրախակից» ծածկանունով: Քննարկվող հոդվածներից պարզվում է, որ նրանք երեքն էլ՝ Սոգինյանցը, Ուրախակից բարեկամը և Ազգակիցը նույն գաղափարները, նույն մտքերն ու դարձվածքներն են օգտագործել:

«…Եթէ ասացից բացէք զդպրոցս և ուսուցանէք մանկան,- գրում է Հայորդին,- և կամ գնացէք երկիրն ձեր, և սկսանիցուք տիրել և կառավարել, ունայն է լինելոց սակս անմիաբանութեան մերոյ…»[86]:

---

[83] «Ազդարար», 1795, թիվ 10, էջ 298:

[84] «Ազդարար», 1755, թիվ 12, էջ 427:

[85] «Ազդարար», 1795, թիվ 12, էջ 428:

[86] «Ազդարար», 1795, թիվ 10, էջ 310:

Այս խոսքերը պատասխանն են Սոգինյանի գրեթե բառացի այն հարցադրման, որ առաջադրվել է թե՛ «Ողբ Հայաստանեայցում», թե՛ Ուրախակից Բարեկամի՝ «Ազդարարում» հրատարակված բանաստեղծություններում և թե՛ Ազգակցի հոդվածում.

«Առէք զգանձս ձեր դուք ի միաբան,
Գնացէք իսկոյն աշխարհն Հայաստան,
Զի այն է ձեր տուն և ձեր է միայն,
Արժան է լինիլ և ձեզ գերեզման»[87]:

Այս համեմատությունը մեզ հնարավորություն է տալիս պնդելու, որ հայ քննադատական-հրապարակախոսական առաջին ստեղծագործությունների հեղինակները XVIII դարի 2-րդ կեսի ակնառու գործիչներ Մովսես Բաղրամյանն ու Թադեոս Սոգինյանն են:

Երրորդ, Թ. Սոգինյանի և Մ. Բաղրամյանի շնորհիվ է «Ազդարարում» սկզբնավորվում բանավիճային-գրաքննական ժանրը: «Մադրասի թերթն առաջին օրգանն է մեզանում,- գրում է Թ. Ավդալբեգյանը,- որ ասպարեզ է հանդիսացել առաջին բանավեճին հայ մամուլի մեջ: Այս բանավեճը նշանավոր տեղ է բռնում մեր գրականության մեջ ոչ միայն նրա համար, որ ժամանակագրական կարգով առաջինն է, այլև այն պատճառով, որ շոշափելով մեր հասարակական զարգացման մի քանի հիմնական խնդիրները՝ մեծ շահագրգռություն է ներկայացնում հայ աշխարհայացքների զարգացման պատմության տեսակետից»[88]:

Թադ. Ավդալբեգյանը 1936 թվականի փետրվարի 25-ին ՀՍԽՀ Պատմության և գրականության ինստիտուտին հղած մի նամակում հիմնավորում է, որ Աբրահամ Կրետացու «Պատմություն Նադիր շահին պարսից» աշխատության առաջին տպագրության, որ լույս է տեսել 1796 թվականին Կալկաթայում, առաջաբանի (6 էջ) և «Ներածություն» վերնագրով մի ընդարձակ հավելվածի (էջ 1–119-ը) հեղինակը նույնպես Մովսես Բաղրամյանն է[89]: Այս աշխատությունը, նշում է Ավդալբեգյանը, հայ հանրային մտքի պատմության ամենաաչքի ընկնող հուշարձաններից է, քանի որ նրանում արծարծվում են XVIII դարի հայ միջավայրի փիլիսոփայական ուղղություններն ուսումնա-

[87] «Ազդարար», 1795, թիվ 6, էջ 74:

[88] **Թադ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջ 237:

[89] Տես **Թադ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջք 243-244:

սիրելու տեսություններ: Բաղրամյանը հնադարում, միջնադարում և նոր դարում մարդկության գաղափարական փոթորկումների երեք մեծ աղանդապետներ է առանձնացնում: «Նախ՝ Մեծեղեռն Մանի մոգն, կախարդասարն պարսից և գործակիցն իշխանին խավարի, գտիչ և ուսուցանողն զանաստոած մոլորութիւն ի Թոնդրակ և յամենայն աշխարհի…:

Երկրորդ՝ եօթնագլուխ վիշապն և ահռելի մեծ գազանն սարակինոսաց և արեանռուշտ գայլն արաբացի, մահաշշուկն Մահմէտ…

Երրորդն Ոլթերն, հեղինակն չարութեան, կամարարն ոգեկործան բանսարկոին և գտիչն անաստոած մոլորութեան, …

Փիլիսոփայական կրոնի, Վոլտերի աղանդի, դեիզմի ու աթեիզմի տարածումով է բացատրում հեղինակը ֆրանսիական մեծ հեղափոխության ծագումը, զարգացումը, արդյունքները և նույնիսկ տեռորը,– եզրակացնում է Թ. Ավդալբեգյանը:

Մ. Բաղրամյանը աշխատակցել է նաև Մադրասում Եղիազար Շահամիրյանի ծախսով 1775 թվականին հրատարակված «Պատմություն մնացորդաց հայոց և վրաց» երկի հրատարակմանը: «Ի լույս ածեալ տպիւք և ծախիւք Եղիազարու Շահամիրեան կոչեցելոյ՝ աշխատակցութեամբ Մովսեսի Բաղրամեան հրահանգչին իւրոյ»[90]:

Այն ունի, «Յառաջաբանութիւն առ պատոական երիտասարդս և նորափթիթ մանկունս հայոց» երեք էջանոց առաջաբանը, որի հեղինակը նույնպես Մ. Բաղրամյանն է:

Այսպիսով, տեսնում ենք, որ Մովսես Բաղրամյանը ոչ միայն XVIII դարի դասական հրապարակախոսական երկի՝ «Նոր տետրակի» հեղինակն է, այլև ծավալել է գրական-հրապարակախոսական բեղմնավոր գործունեություն:

[90] **Թադ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջ 261:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
«ՆՈՐ ՏԵՏՐԱԿԸ» ԵՎ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

2.1. Քաղաքական հրապարակախոսության էությունը

Ուսումնասիրողները[91] Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ»[92] աշխատությունը բնութագրել են որպես քաղաքական հրապարակախոսության ժանրի առաջին ստեղծագործություն: Հայ իրականության մեջ այս ժանրի տեսության հարցերը՝ նրա առարկայի, օբյեկտի, մեթոդի, կառուցվածքի, գործառույթների ու հետապնդած նպատակների հարցերը գրեթե չեն ուսումնասիրվել: Թերևս բացառություն են կազմում XIX դարի հայ պարբերական մամուլի ու հրապարակախոսության պատմության և կոմունիստական կուսակցության գործիչների ստեղծագործությունների առանձին կողմերի վերաբերյալ քննարկումները: Առաջինում գերիշխում էր պատմության գրականագիտության և գրական-քննադատության մոտեցումները, որոնցում քննարկվում էին հրապարակախոսական երկերի պատմական ասպեկտների, դրանց գրական ու գեղագիտական արժևորման հարցերը[93], երկրորդում՝ խորհրդային տեսաբանները սահմանափակվում էին միայն կոմունիստական կուսակցության մշակած քաղաքական գծի քարոզչությամբ:

Արդարությունը պահանջում է ասել, որ հանրային մտքի ռուսական հզոր դպրոցը, նույնպիսի հրապարակախոսության տեսության հարցերին նվիրված քիչ ներդրումներ ունի: Թերևս հիշատակության

---

[91] Տես Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1973, էջ 526:
տես նաև **Թադ. Ավդալբեգյան**, Հայագիտական հետազոտություններ, էջ 236:
Ս. Պողոսյան, Մովսես Բաղրամյան, «Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դդ.», Եր., 1976:
Հ. Մանուչարյան, Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմության, Եր., 2002, էջ145:
Մ. Դավթյան, «Քաղաքական հրապարակախոսություն», «Օրենք և իշխանություն», Եր.,1998, էջ 45: Նույնի՝ Քաղաքական հրապարակախոսության դասակարգային ու ազգային հայեցակետերը, «Հանդես», Եր., 2004, էջ 189:

[92] Տես Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, Եր., 1991:

[93] Տես Հայ նոր գրականության պատմություն, հ.1-2, Եր.,1962, 1964:

արժանի են Ե. Պրոխորովի[94], Մ. Չերեպախովի[95], և Վ. Ուչյենովայի[96] ուսումնասիրությունները: Այսուհանդերձ, պարզ է որ, առանց *հրապարակախոսության տեսության* հարցերի բավարար իմացության, անհնար է պարզել հրապարակախոսության առանցքային հարցերը ընդհանրապես, Մ. Բաղրամյանինը՝ մասնավորապես:

«Հրապարակախոսություն» տերմինը առաջացել է լատիներեն "publicus" բառից, որ նշանակում է հասարակական, այսինքն՝ ստեղծագործության տեսակ, որ նվիրված է հասարակական կյանքի ուշագրավ երևույթներին և հրատապ հարցերին:

Հրապարակախոսությունը հրատապ հասարակական քաղաքական ստեղծագործության տեսակ է, որի առաջնահերթ նպատակն է, մի կողմից լուսաբանել, ու ընդհանրացնել հասարակական կյանքի իրական կացությունը, մյուս կողմից՝ ուղենշել հասարակության զարգացման մայրուղիները:

Ներգործելով մարդկանց զգացմունքի, գիտակցության ու երևակայության վրա, հրապարակախոսը կազմակերպում, կարգավորում և ուղղություն է տալիս հասարակության, ազգի, կոլեկտիվի կամ նրա այս կամ այն շերտի նպատակասլաց գործունեությանը: Հրապարակախոսությունն ընդգրկում է մարդկությանը հուզող բոլոր արմատական հիմնախնդիրները: Այն ամենը, ինչը կապված է եղել հասարակական մեծ տեղաշարժերի ուղիների մշակման, նվաճված ազգերի խեղված ոգին բարձրացնելու, ազգային-ազատագրական պայքարի կոչելու և ազատության հասնելու ուղիների որոնման հետ: Հրապարակախոսությունը հանդես է գալիս քաղաքական, իրավական, բարոյական, գիտական, գրականագիտական, գեղագիտական, փիլիսոփայական հայացքների ձևով: Սակայն այս բոլոր ձևերը ի վերջո ծառայում են քաղաքականությանը և ձեռք են բերում քաղաքական հրապարակախոսության հատկություն: Դրա համար էլ քաղաքագետները, փիլիսոփաները, քաղաքական գործիչներն ու առաջնորդները հանդես են գալիս որպես հրապարակախոսներ: Իր

---

[94] **Е. П. Прохоров**, Публицист и действительность, М.,1973. Նույնի, Журналистика и демократия, М., 2004. Նույնի, Введение в теорию журналистики, М., 2003:

[95] **М. С. Черепахов**, Проблемы теории публицистики, М., 1973.

[96] **В. В. Ученова**, Публицистика и полотика, М., 1973. Նույնի, Гносеологические проблемы публицистики, М.,1971:

առջև դրված խնդիրներով և կոնկրետ նպատակներով քաղաքական հրապարակախոսությունը բացահայտում է հասարակության քաղաքական կյանքի առավել խորքային և սովորական աչքով անտեսանելի երևույթներն ու շերտերը: Քաղաքական հրապարակախոսության էջերում են ձևավորվում նվաճված ազգերի ազգային-ազատագրության ծրագրերը, պետությունների, սահմանադրությունների նախագծերը, քաղաքական կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների ծրագրերը, պետական ու մշակութային գործիչների տեսական դրույթները և այլն:

Այսպիսով, ինչպես նշում է Մ. Ս. Չերեպախովը, «Հրապարակախոսություն ասելով պետք է հասկանալ գրականություն՝ նվիրված ժամանակի հրատապ խնդիրներին, որոնք նպատակ ունեն ակտիվ գաղափարաքաղաքական ազդեցություն ունենալ ընթերցողի վարքի, գիտակցության և հասարակական կարծիքի ձևավորման վրա»[97]:

Ե. Պրոխորովի կարծիքով, մարդկությունն իր բազմադարյան պատմության ընթացքում իրականության երևույթների ու կապերի ճանաչողության ու արտացոլման համար ձեռք է բերել երեք միջոց՝ գիտության, արվեստի և հրապարակախոսության[98]: Խորհրդավոր աշխարհի գաղտնիքների յուրացումը մարդու կողմից տեղի է ունենում մտածողության այս երեք հիմնական ձևերով: Երեքն էլ ձգտում են տարբերել երևույթների գլխավոր գծերը, երկրորդական, պատահական, ժամանակավրեպ գծերից և հասնել իրականության էական կողմերի ճշմարտացի արտացոլման:

Գիտական-տեսական մտածողության մեջ իրականության ճանաչողության արդյունքներն արտահայտվում են տրամաբանական հասկացությունների, կատեգորիաների, ընդհանուր օրենքների, իսկ գեղարվեստական մտածողության մեջ՝ կոնկրետ, զգայական բնույթ ունեցող պատկերների միջոցով: Գեղարվեստական արտացոլման գլխավոր առարկան մարդն է, որի ճակատագրի, զգացումների ու գործողությունների պատկերման միջոցով գրողը մարմնավորում է որոշակի դարաշրջանի և սոցիալական միջավայրի բնորոշ գծերը: Իրականության արտացոլման ձևով հրապարակախոսությունը տարբերվում է գիտությունից ու արվեստից: Հրապարակախո-

---

[97] **М. С. Черепахов**, Проблемы теории публицистики, М., 1973, էջ 28:

[98] **Е. П. Прохоров**, Публицист и действительность, М., 1973, էջ 74:

սության ամենակարևոր առանձնահատկությունը իրականության անմիջական քաղաքական ըմբռնումն ու դրա ժամանակի ամենաէական խնդիրների իմաստավորումն է: Հրապարակախոսությանը մարդը հետաքրքրում է ոչ այնքան իր անհատական, անձնային ու զգացմունքային գծերով, որքան հասարակական կյանքում նրա խաղացած դերով: Հրապարակախոսությունը սերտ կապի մեջ է գիտության և արվեստի հետ: Այսուհանդերձ, այն ոչ թե այդ երկուսի համադրությունն է (սինթեզը), այլ մարդու հասարակական կյանքի հիմնախնդիրների առանձնահատուկ ըմբռնումը: Գտնվելով գիտական ու գեղարվեստական ստեղծագործությունների կողքին, փոխհարաբերվելով նրանց հետ, հրապարակախոսությունը իրենից ներկայացնում է ստեղծագործության ինքնուրույն՝ երրորդ ձև, իսկ հրապարակախոսը՝ հասարակական-քաղաքական գործչի հատկություններին զուգորդում է գիտնականի, գեղագետի հատկություններ: Իրականության կոնկրետ երևույթները հրապարակախոսական ստեղծագործություններում արտացոլվում են այնպիսի տրամաբանական ու կերպարային ձևերով, որ կարողանում է ազդել ընթերցողի ոչ միայն մտքի ու զգացմունքների, այլև վարքի վրա:

Հրապարակախոսական ստեղծագործության յուրահատկություններից մեկը՝ հասարակական շեշտվածությունը, զանգվածներին որևէ գաղափարի շուրջ համախմբելն է: Որքան պատմականորեն առաջավոր և մարդկայնորեն բարձր են հրապարակախոսին ոգեշնչող գաղափարները, այնքան ավելի մնայուն արժեքով է օժտվում նրա ստեղծագործությունը:

Ձևավորելով զանգվածների գիտակցությունը, հրապարակախոսը փաստորեն մասնակցում է հասարակական երևույթների կառավարմանը, քանի որ նրա նպատակը կառավարվող օբյեկտին նպատակասլաց գործունեության մղելն է:

Հիմնահարցի մասնագետները գտնում են, որ հրապարակախոսության տեսության կատեգորիաների համակարգը հանդես է գալիս հետևյալ հաջորդականությամբ՝ առարկա, գործառույթ, մեթոդ, բովանդակություն և ձև: Կյանքի ո՞ր կողմերն ու կապերն են դառնում հրապարակախոսության առարկան հարցին Ե. Պրոխորովը պատասխանում է,– հրապարակախոսության *առարկայական հիմքը ժամանակակիցն է, իրականությունը:* Հրապարակախոսը, որպես կանոն, ուսումնասիրում է կյանքի հրատապ երևույթները սոցիալ-

քաղաքական տեսանկյունից: Տնտեսական, գիտական, բարոյական, իրավական, գեղագիտական և այլ երևույթների, իրադարձությունների, փաստերի սոցիալ-քաղաքական ուղղվածությունն է հրապարակախոսության առարկան[99]:

Մ. Չերեպախովի կարծիքով, հրապարակախոսության առարկայի յուրահատկությունը, հասարակության պրակտիկ խնդիրների տեսանկյունից, *իրականության քաղաքական ըմբռնումն* է: Այլ կերպ ասած, հրապարակախոսության առարկան գտնվում է քաղաքական պրակտիկայի ոլորտում[100]:

Հասարակական կյանքում հրապարակախոսությունը կատարում է մի շարք կարևոր գործառույթներ: Դրանցից առաջինը կազմակերպչական գործառույթն է, առաջադրված նպատակին հասնելու համար մարդկանց համախմբելու հմտությունը: Երկրորդը՝ մարդկանց առաջադրված խնդրի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ տալը և այն համոզմունք դարձնելն է, երրորդը՝ հանրությանը դաստիարակելու գործառույթն է:

Հրապարակախոսությունը կատարում է հասարակական կարծիքի ստեղծման, հավաքված փաստերի նպատակասլաց հաղորդման, կյանքի անհրաժեշտ, առանձին իրավիճակների վերլուծության, դրանց հասարակական նշանակության արժևորման գործառույթներ: Հրապարակախոսական այս եղանակներն են հրապարակախոսին հնարավորություն տալիս նպատակին հասնել անհամեմատ քիչ ջանքերի գնով:

Այս գործառույթները հրապարակախոսությունը կատարում է հատուկ մեթոդների հնարանքների, միջոցների օգնությամբ: Հրապարակախոսը օգտագործում է այնպիսի նյութեր, որոնք գիտականորեն արդեն հիմնավորված են: Հրապարակախոսության մեջ այն հայտնի է «պոստուլացման» մեթոդ անունով, որը լատիներեն “postulatum” բառն է, և նշանակում է, որ օգտագործվում են այնպիսի դրույթներ որոնց ճշմարտությունը հանրահայտ է, և վերստին ապացուցման կարիք չունի, այսինքն աքսիոմա է[101]:

Հրապարակախոսության հիմնական մեթոդներն են՝ հաղորդել փաստեր, կյանքի առկա իրավիճակի իմաստավորման նպատակով,

---

[99] **Е. П. Прохоров**, Публицист и действительность, М., 1973, էջ 185:

[100] **М. С. Черепахов**, Проблемы теории публицистики, М.,1973, էջ 40:

[101] Տե՛ս Փիլիսոփայական բառարան, Եր., 1975, էջ 353:

առաջադրել ընդհանուր դրույթներ, վերլուծել ռեալ իրականությունը, կատարել ընդհանրացումներ, մշակել դրանց իրականացման պրակտիկ ուղիներ և դրանք հիմնավորել հանրահայտ փաստերով: Որպես ընդհանուր գործընթաց, իրականության հրապարակախոսական արտացոլումը ոչ այլ ինչ է, եթե ոչ շարժում փաստից մինչև ընդհանրացում: Հրապարակախոսության բովանդակությունը քաղաքական իրականության բազմակողմանի վերլուծությունը և սոցիալական երևույթների իմաստավորումն են: Դրանք հաջողությամբ կատարելու համար հրապարակախոսին անհրաժեշտ է բազմակողմանի իմացություն, քաղաքացիականություն, ոճական բազմազանություն, բանավիճելու կարողություն: Հրապարակախոսը պետք է զուգորդի հասարակական-քաղաքական գործչի որակները հետազոտող-ստեղծագործողի որակներին: Նա պետք է լինի իրավունքի, քաղաքականության, պատմության, վիճակագրության գիտակը, քաջատեղյակ լինի ինչպես աշխարհի կարևոր իրադարձություններին, այնպես էլ այն երկրի, որի քաղաքացին է: Այսինքն, հրապարակախոսի վարպետությունը առաջին հերթին կայանում է մատուցվող նյութերի կատարյալ իմացության մեջ: Վերահսկելով խոսքին, հրապարակախոսը վերահսկում է մարդկային մտքին, գաղափարներին, մտածողությանն ու վարքին:

Հրապարակախոսության արդյունավետությունը պայմանավորված է իրականության արտացոլման ձևերի այնպիսի արտահայտչամիջոցներով, ինչպիսիք են լեզուն, ոճը, ժանրը:

Հրապարակախոսության հիմնական ոճերն են՝ բանավիճային, քարոզչական, հռետորական, վերլուծական, քննադատական և այլն:

Պատմության ընթացքում, հասարակական կյանքի պահանջներին զուգընթաց ձևավորվել են հրապարակախոսության տարբեր ժանրեր՝ պամֆլետ, ֆելիետոն, ուրվանկար, ակնարկ, նամակ, գրախոսություն, թղթակցություն, հարցազրույց, նոթագրություն և այլն: Հրապարակախոսության թերթային և գրքային ծավալները տարբեր ֆունկցիաներ են կատարում: Թերթայինը մի կոնկրետ խնդիր է առաջադրում և լուծում, շեշտվում է մի գաղափար, իսկ գրքայինը ներկայացնում է հիմնախնդիրների ամբողջական համակարգ:

Ե. Պրոխորովի կարծիքով, հրապարակախոսության գործառույթները ըստ հրապարակախոսի հետապնդած նպատակների, բաժանվում են երկու մեծ խմբերի: Առաջինում ընդգրկվում են սո-

ցիալ-մանկավարժական (ուսուցողական) գործառույթները, երկրորդում՝ ինֆորմացիոն (տեղեկատվական) ճանաչողական գործառույթները: Առաջինը արտահայտում է հրապարակախոսության սոցիալական գործունեության բովանդակությունը, երկրորդը՝ հրապարակախոսության սոցիալական գործունեության իրագործման ձևերն ու միջոցները[102]:

Հրապարակախոսական սոցիալ-մանկավարժական դաշտում ձեռք է բերվում այն արդյունքը, որին հրապարակախոսները հասնում են անհրաժեշտ գիտելիքի տարածման միջոցով, որի շնորհիվ ճանաչվում է ընթացող իրականությունը և սեփական տեղի գիտակցումը այդ իրականության մեջ: Այդ արդյունքում ձևավորվում է որոշակի համոզմունք, որը դառնում է հասարակական տեսակետ: Ահա դրանով է հրապարակախոսությունը կատարում իր հասարակական-ուսուցողական առաքելությունը:

Սոցիալ-մանկավարժական գործառույթը իրականանում է ժամանակի լայն համայնապատկերում, տեղեկատվական-ճանաչողական ճանապարհով: Ճշմարիտ տեղեկատվությունն է այն հիմնական նյութը, որի վրա ձևավորվում են հասարակական կարծիքը և մարդկանց քաղաքական կողմնորոշումը:

Իրականացնելով տեղեկատվական-ճանաչողական գործառույթը, հրապարակախոսը իր ձեռքում է պահում հասարակական կյանքի զարկերակը, պատասխանում հասարակայնորեն առաջադրված հարցերին: Այսուհանդերձ, հրապարակախոսությունը ոչ թե գիտություն է, այլ արդիականության մասին գիտելիք, որը բավարար չափով տիրապետում է գիտությանը: Կատարելով իր տեղեկատվական գործառույթը, հրապարակախոսը հանդես է գալիս որպես այնպիսի հետազոտող, որն օգտվում է գիտության ընձեռած հնարավորություններից և ստեղծում է հավաստի գիտելիք արդիականության հետազոտվող երևույթների մասին:

Ցանկացած հաղորդում դեռևս տեղեկատվություն չէ: Տեղեկատվության արժեքը որոշվում է նրա սոցիալական նշանակությամբ, հիմք ունենալով այն չափանիշը, ինչ չափով նպաստում է աշխարհընկալմանը և հասարակական կարծիքի ձևավորմանը: Սոցիալ-մանկավարժական նպատակին ծառայող հավաստի ու տպավորիչ

[102] **Е. П. Прохоров**, Публицист и действительность, М., 1973, էջ 113:

փաստն է հանդիսանում տեղեկատվությունը: Ինֆորմացիան լայն իմաստով այն փաստերն են և դրանցից բխող մեկնաբանությունները, որոնք կատարում են ինֆորմացիոն-ճանաչողական գործառույթ, ստեղծում ոչ միայն ժամանակակից պատմություն, այլև տարածում արժեքավոր դատողություններ:

Հասարակական դաստիարակությունը գաղափարա-հոգեբանական բարդ գործընթաց է, որի արդյունքում առաջանում և ամրապնդվում են անձնական խոր համոզմունքներ, համակարգված գաղափարներ, որոնք ազդում են ունկնդրի հոգեբանության վրա, պատվաստելով նրանց մեջ նոր որակներ և այս ճանապարհով կերտում նոր գործիչների կերպարներ:

Այսպիսով, հրապարակախոսությունն՝ ակտիվ և բազմակողմանի ազդելով գիտակցության բանական, էմոցիոնալ և կամային հատկանիշների վրա՝ առաջացնում է կայուն համոզմունք և ձգտում՝ անհատական համոզմունքի վրա կառուցել հասարակական և ազգային համոզմունք:

Հրապարակախոսությունը հետապնդում է գաղափարաքաղաքական հետևյալ նպատակները.

- ձևավորել հասարակական կարծիք,
- ստեղծել ժամանակակից պատմություն,
- մասնակցել զանգվածային գիտակցության և վարքի ձևավորմանը,
- խթանել պրակտիկ գործունեությանը:

Գործառույթների այս հաջորդականությունը, հրապարակախոսության տեսության ճանաչված գիտակ Ե. Պրոխորովի կարծիքով, այնքան հստակորեն են սահմանազատվում, որ այն խախտելու դեպքում փոխվում է տվյալ ստեղծագործության բովանդակությունը: «Ինչ կլինի,– գրում է նա,– եթե առաջին տեղում դնենք երրորդ կետը՝ մասնակցությունը զանգվածային գիտակցության ձևավորմանը: Այդ դեպքում մենք գործ կունենանք ոչ թե հրապարակախոսության, այլ գիտատեսական քարոզչության կամ արվեստի հետ: Կամ, եթե գլխավոր գործառույթը համարենք երկրորդը՝ ժամանակակից պատմության ստեղծումը և՛ առաջին, և՛ երրորդ կետերը հեռացնենք, այսինքն՝ հեռացնենք հասարակական կարծիքի ձևավորման և զանգվածային գիտակցության ձևավորման գործառույթները: Այդ

դեպքում տվյալ աշխատանքը կվերածվի գիտության»[103]:

Կարծում ենք, որ հրապարակախոսության յուրահատուկ սոցիալական նշանակությունը նախ և առաջ հասարակական կարծիք ձևավորելն է, որտեղ շատ կարևորվում է դրա կապը որոշակի աշխարհայացքի և աշխարհընկալման հետ: Հասարակական կարծիքը որպես զանգվածային գիտակցության գործնական ենթահամակարգ, հաճախ համընկնում է զանգվածային գիտակցության մյուս ենթահամակարգերին[104]:

Պարզ է, որ հասարակական կարծիքը ճանաչված ու գնահատված դեպքերի անկառույց միավորը չէ, այլ ճշգրիտ, շարժուն առանձին տարրերից կազմված իրականության ռեալ պատկերն է: Հասարակական կարծիքը ոչ թե առանձին կարծիքների մեխանիկական միագումար է, այլ որևէ հիմնախնդրի լայն քննարկման, կարծիքների փոխանակման արդյունքում ձևավորված և մեծամասնության կողմից ընդունելի տարբեր դիրքորոշումների համադրությունն է:

Հասարակական կարծիքը կարող է լինել միակարծիք և բազմակարծիք: Բոլոր դեպքերում, այն կարգավորիչ դեր է խաղում անհատների և սոցիալական խմբերի բազմիմաստ հարաբերություններում, ընդունում կամ մերժում այս կամ այն արժեքներն ու նորմերը, այսինքն՝ իրականացնում է արտաբերման, հսկողական, խորհրդատվական և այլ գործառույթներ[105]:

Ժողովրդավարական հանրապետություններում հասարակական կարծիքը կարող է վերածվել քաղաքական իշխանության իրականացման գործոնի և քաղաքական որոշումների ընդունման գործող մեխանիզմի:

Լինելով պատմական կոնկրետ պայմանների արտահայտություն, հրապարակախոսությունը բնականաբար արտացոլում է տվյալ դարաշրջանի արմատական խնդիրները:

Այսպիսով, աշխարհում կայացող դեպքերի շարադրանքով հրապարակախոսը վերարտադրում է իրադարձությունների օբյեկտիվ ընթացքը, որն արտացոլում է այն ընդհանուր հայացքները, մեթոդ-

---

[103] **Е. П. Прохоров**, Публицистика в жизни общества, М., 1968, էջ 59:

[104] Տես **А. Ковалев**, Предмет и проблемы социальной психологии, Л., изд-во ЛГУ, 1962, էջ 111:

[105] Տես Քաղաքագիտություն, (հանրագիտական բառարան) Եր., 2004, էջ 215:

ները, մոտեցումները, սկզբունքները, որոնցով տոգորված է տվյալ ժամանակահատվածի հասարակությունը: Չկա իրականության շատ թե քիչ նշանակալից իրադարձություն, որը իր արձագանքը գտած չլինի հրապարակախոսության մեջ, որով էլ հենց դրսևորվում է հրապարակախոսության համապարփակ բնույթը:

Հիմնական խնդիր ունենալով իրականության քաղաքական ըմբռնումը հրապարակախոսությունը իր հետաքրքրության շրջանակների մեջ է առնում հասարակության սոցիալական, տնտեսական ու հոգևոր գործունեության բոլոր ոլորտները:

Անցյալն ուսումնասիրող պատմաբաններին հետաքրքրում է դեպքերի իրական ընթացքը, պատճառները, հետևանքները: Նա դեպքերի մասնակիցների խառնվածքների ու զգացմունքների նկարագրություն չի անում: Այնինչ հրապարակախոսի նպատակն է բազմակողմանիորեն ներկայացնել քաղաքական իրողությունները, փաստերը, որոնք ապագա հետազոտող-պատմաբանի համար կարող են ծառայել որպես իրադարձություններին ականատեսի ու մասնակցի հաղորդած արժեքավոր տեղեկություններ: Այսինքն, սոցիալ-պատմական երևույթները հրապարակախոսության մեջ հանդես են գալիս որպես ժամանակակից դեպքերի և այն ծնող պատճառների գիտակցված վերլուծություն, որոնք հանդես են գալիս որպես տեսական գիտելիք ու սկզբնաղբյուր ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին:

Հրապարակախոսը չի կարող կատարել պատմաբանի գործառույթ, նախ այն պատճառով որ նա պրոֆեսիոնալ պատմաբան չէ, չի կարող հաղորդակից լինել ժամանակի գաղտնի կամ քիչ հայտնի պետական ու միջպետական փաստաթղթերին ու պայմանագրերին և համեմատական ուսումնասիրություններ ու վերլուծություններ կատարել, և երկրորդ, որ նա անմիջականորեն գործ ունի հում նյութի ու ապրող մարդկանց հետ և բնականաբար մեծանում է սուբյեկտիվ ու կանխակալ գործոնի տեղը հրապարակախոսական ստեղծագործության մեջ: Հրապարակախոսը հաճախ անց է կացնում անսովոր պատմական զուգահեռներ, ձգտում բացահայտել ժամանակակից այս կամ այն երևույթների առաջացման պատճառներն ու զարգացման օրինաչափությունները՝ հենվելով պատմականորեն քննություն բռնած ու հանրահայտ դարձած իրադարձությունների վրա: Ահա այս պարագայում է, որ անցյալով մարդկանց ոգևորելը ձեռք է բերում

արտակարգ կարևոր նշանակություն ներկայի մեջ գտնվողների անսխալ կողմնորոշվելու համար: Պատմական գիտելիքը ձևավորում է աշխարհայացք, օգնում գիտակցել, ճանաչել ու տեղին օգտագործել մարդկության դարավոր կենսափորձը: Պատմությունը հրապարակախոսի մոտ հանդես է գալիս որպես առկա և փոփոխվող իրավիճակների արտացոլման միջոց:

Այսուհանդերձ, հրապարակախոսական ստեղծագործության մեջ մեծ տեղ է հատկացվում ոչ միայն գիտական, փաստական ու սոցիալ-պատմական իրողություններին, այլև զգացմունքային ու կերպարային տարրերին: Այլ կերպ ասած, ստեղծվում է ինքնատիպ, հրապարակախոսական ժամանակակից փաստառատ ու հյութեղ պատմություն, որի օգնությամբ հնարավորություն է ստեղծվում հասնել այն խնդիրների լուծմանը, որոնք դրված են հրապարակախոսի առաջ:

Ինչպես արդեն նշել ենք, հրապարակախոսության հաջորդ գործառույթը զանգվածային գիտակցության և վարքի ձևավորմանը մասնակցելն է: Զանգվածային գիտակցությունը նախ և առաջ սոցիալական փորձի և գործունեության արդյունքն է: Քարոզչության բոլոր ձևերն էլ՝ գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական, այս կամ այն չափով մասնակցում են զանգվածային գիտակցության և վարքի ձևավորման գործընթացներին:

Ձևավորելով զանգվածային գիտակցություն, հրապարակախոսը մասնակցում է հասարակական գործընթացների կառավարմանը, միայն իրեն յուրահատուկ միջոցներով ակտիվացնում մարդկանց և մղում հասարակական նպատակասլաց գործունեության:

Հասարակությունը ինքնակառավարվող համակարգ է, որն ունի կառավարելու հատկությամբ օժտված ենթահամակարգեր: Դրանցից են գաղափարախոսական կառույցները: Զանգվածային քարոզչությունը զանգվածային էական իրավիճակներում, գործընթացներում կողմնորոշելու գաղափարախոսական արդյունավետ միջոց է: Քարոզչությունը ձևավորում է անհատի գաղափարապես արդար կերպար, նրա համոզմունքների համակարգը, իդեալները, արժեքները, նորմերը, որոնք կառավարում են մարդու ամենօրյա գործունեությունն ու վարքը:

Սոցիալական խումբը, հասարակությունը, ազգը ամբողջության մեջ մի բարդ ու շարժուն համակարգ է: Քարոզչության դերն այդ

համակարգին միասնական գիտակցության և սոցիալական վարքի ձևավորման իրագործումն է: Քարոզչության մի ձևը չի կարող լուծել այդ համակարգի ներդաշնակ գիտակցության ձևավորման բոլոր խնդիրները: Քարոզչության բոլոր տեսակներն ու ուղղությունները յուրովի են մասնակցում հետապնդած նպատակների ձևավորման գործին, հասարակությանը գաղափարապես ու հոգեբանորեն նախապատրաստում միասնական վարքի ձևավորմանը:

Այս բոլորի վերջնական նպատակը զանգվածին ակտիվ գործունեության մղելն է:

Քարոզչության ամենաարդյունավետ միջոցը հրապարակախոսությունն է: Այս առիթով Մ. Չերեպախովը գրում է. «...գաղափարական խնդրի մեջ հսկայական դերը պատկանում է հրապարակախոսությանը: Այդպիսին է նրա բարձր քաղաքական նշանակությունը, նրա կարևոր հասարակական գործառույթը»[106]:

Հրապարակախոսության առաջնահերթ նպատակը զանգվածին ակտիվ պրակտիկ գործունեության մղելն է: Այն գաղափարապես և հոգեբանորեն նպաստում է մարդկանց ծավալելու պրակտիկ քաղաքական գործունեություն:

2.2. Հայ քաղաքական հրապարակախոսության առաջնեկի՝ «Նոր տետրակի» կառուցվածքն ու բովանդակությունը

Հրապարակախոսության ժանրի սկզբնավորման ժամանակի հարցում արտահայտվել են տարբեր կարծիքներ: Ոմանք այդպիսի ստեղծագործությունների ակունքները որոնում են մարդկության նախապատմական հեռուներում, հասնելով մինչև նախնադար[107]: Ոմանք էլ հրապարակախոսության մեջ կարևորելով զանգվածային քաղաքական հաղորդակցման միջոց լինելու պարագան, կապելով այն տպագրական մեքենայի գյուտի հետ, նրա ծնունդը տեսնում են ագրարային ու արդյունաբերական հարաբերությունների սահմանագծում, երբ զանգվածների արթնացած ակտիվությունը գրավոր

[106] **М. С. Черепахов**, Проблемы теории публицистики, М., 1973, էջ 71:

[107] **Գ. Անանյան**, Ակնարկներ հայոց հին և միջնադարյան հրապարակախոսության, Եր., 2005, էջ 23-46:

խոսքի միջոցով քաղաքական ուղղություն տալու պահանջ է զգացել: «Հենց գրական-քաղաքական գրավոր տեքստերի զանգվածային տարածմամբ է ծնունդ առնում հրապարակախոսությունը բառի այսօրվա իմաստով, իբրև հասարակական գործունեության առանձնահատուկ տիպ»[108], – գրում է Վ.Վ. Ուչյենովան:

Պարզ է, որ իրականության քաղաքական ընկալումն է նկատի ունեցել հետազոտողը ժամանակակից հրապարակախոսության ծնունդը նոր ժամանակների հետ կապելիս: Իրոք, առասպելի, տեսիլի, դյուցազներգության, հռետորության և այլ ձևերով նախապատմական հեռուներից ձգվելով մինչև նոր ժամանակներն են հասել ազատասիրական, մարդու և ազգերի իրավունքների ու ազատությունների գաղափարները, մինչև որ նոր որակ ու բովանդակություն են ձեռք բերել XVII–XX դարերի հրապարակախոսության մեջ: Հանգույցները տանում են դեպի մարդկության շրջադարձային իրողությունները, քրիստոնեության ընդունումը, վերածննդի դարաշրջանը, ֆրանսիական բուրժուական հեղափոխությունը, Եվրոպական լուսավորականության հռչակած գաղափարներն ու սկզբունքները: Ըստ ամենայնի նորոգվելով այդ գաղափարների բովում, հայոց հրապարակախոսությունը հավատարիմ իր դարավոր ավանդներին, առաջիններից մեկն էր արձագանքում համամարդկային առաջադիմական գաղափարներին, մեկնաբանում ու տարածում հայ իրականության մեջ: Բնորոշ է, որ սկզբնավորման այդ դարաշրջանում՝ XVIII դարում, ազատասիրական ոգևորումները ուղղված էին օտարերկրյա բռնակալներից, հատկապես պարսկական ու թուրքական լծից Հայաստանի ազատագրման գաղափարը, որի առաջամարտիկներն էին Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը:

Հասարակական կյանքի նոր պահանջներին զուգընթաց հայ իրականության մեջ ևս ձևավորվում են հրապարակախոսական տարբեր ժանրեր՝ թուղթ, ուղերձ, ճառ, տետրակ, նամակ, հուշագրություն և այլն: Հրապարակախոսական ժանրի ստեղծագործություններ են՝ «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները», Շահամիր Շահամիրյանի «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց» գրքի առաջին

[108] **В. В. Ученова**, В исторические истоки современной публицистики, М., 1972, էջ 12:

բաժինը, «Տետրակ, որ կոչի նշավակ» երկը, ժամանակի անվանի մարդկանց նրա հղած նամակները, հայ-ռուսական դաշնագրի նախագծերը: Այս բոլորի մեջ աներկբայելիորեն առանձնանում է Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» ստեղծագործությունը: Այն նվիրված է XVIII դարի հայ հանրային կյանքի ամենահրատապ ու անհետաձգելի խնդիրներին: Նրա առաջնահերթ նպատակն է մի կողմից լուսաբանել հայ ժողովրդի իրական ծանր կացությունը, մյուս կողմից՝ ուղենշել նրա ազատագրության մայրուղիները: Մ. Բաղրամյանի քննարկվող աշխատությունը թեև անվանված է «տետրակ», որ հոմանիշ է «գրքույկ» բառին, բայց այն ծավալուն, հիմնախնդիրների ամբողջական համակարգ ներկայացնող ավարտուն աշխատություն է և ներկայանում է որպես ժամանակի դասական հրապարակախոսական երկ, իր բովանդակությամբ, կառուցվածքով, իր առջև դրված խնդիրներով:

«Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» երկը մեզ է հասել 1772–1773 թվականներին Հնդկաստանի Մադրաս քաղաքում կատարված տպագրությամբ: Հետագայում դրա հինգերորդ և վեցերորդ գլուխները ռուսական բանակի սպա Վառլամ Վահանովը թարգմանել է ռուսերեն, որը հրատարակվել է Պետերբուրգում 1786 թվականին: «Նոր տետրակի» աշխարհաբար թարգմանությունն ու հրատարակությունը իրականացրել է երևելի բանասեր Պողոս Խաչատրյանը:

Բաղրամյանի այս ուշագրավ աշխատությունը բաղկացած է անվանաթերթից, «Մաղթանք առ ամենասուրբ երրորդությանն», նախաբանից, ութ գլուխներից, որոնցից առաջին չորսը՝ չափածո, հիշատակարաններից և երկու թեմատիկ ցանկերից:

Բաղրամյանի մաղթանքը մի սրտառուչ ուղերձ է, որում հեղինակը նախ համառոտակի ներկայացնում է իր ժողովրդի ծանրագույն վիճակը, ապա փրկություն աղերսում Սուրբ Երրորդությունից:

Առաջին գլուխը կրում է «Մաղթանքներիցս հետո երգ, ուղղված հայկազուն երիտասարդներին ու պատանիներին՝ սթափվելու համար ծուլության քնի վեհերոտ և անհոգ թմրությունից» վերնագիրը:

Թեև այս և հաջորդ երկու գլուխները Բաղրամյանը անվանում է «Երգ», բայց դրանք, ըստ էության «Ողբ»-ի դասական նմուշներ են, որոնցում նա խոր կսկիծով ու դառնությամբ ներկայացնում է Հայաստանի ավերածությունները, երբեմնի ծաղկուն քաղաքների ու դղյակների՝ փլատակների վերածվելը:

«Ոչ մի ուրիշ պատճառ չկա, քան անտերունչ լինելը, որ
երկիրը մեր դարձավ, փոխվեց անապատի,
Շռայլ ու շեն պերճության տեղ դատարկությունն
ու նանրությունը բռնեցին,
…Ինչպես երկիր մի անապատ ու անջրդի, այնպես և մեր
մայր հայրենիքն ամբողջովին խոպանացավ ու կորդացավ:
…Շատերը, որ գերի ընկան, այլևս երբեք իրենց փրկել
չկարեցան,
Բոլոր կանայք ու աղջիկները անխտիր խաղք-խայտառակ
ծանակվեցին,
Տղամարդիկ, այր ու մանուկ, փոքրն ու մեծը միասին,
սպանվեցին,
Իբրև ոչխար, որ մատնվում է գայլերին հափշտակող,
այդպես նրանք փողոտվելով հոշոտվեցին»[109]:

Բաղրամյանը ողբալով հայ ժողովրդի այս ծանր ներկան, այնուամենայնիվ չի հուսալքվում և փորձում է ոգեշնչել հայ երիտասարդներին և ոտքի հանել ընդդեմ ոսոխի: Այս նպատակով «Նոր տետրակի» երկրորդ գլուխը՝ որ կրում է «Հորդորական երգ՝ քաջալերելու համար հայկազուններին, մանավանդ նրանց նորաբողբոջ ու ծաղկափթիթ երիտասարդներին ու պատանիներին», խորագիրը, բանաստեղծ-հրապարակախոսը հորդորում է արիանալ, քաջանալ և ազգային ստրկամտությունն ու նախատինքը վերացնել: Նրանց խորհուրդ է տալիս հետևել ստրկությունից ազատագրված ժողովուրդների հերոս զավակների և հայոց քաջ նախնիների օրինակին:

«Ահա ինչու այստեղ կրկին մենք ստիպված կպաղատենք
ձեզ, եթե դուք սիրով լսեք,
Ով արամյան ազգի որդիք, աղեկտուր և ահաբեկ երբեք, երբեք
այսուհետև դուք թշնամուց մի վախեցեք,
Այլ հինավուրց նախնիներին, հսկաներին նմանվելով՝
նրանց հանգույն արիացեք
Եվ անվարան ու անկասկած՝ ամբողջ սրտով ամենազոր
Աստծո հանդեպ վստահորեն հույս տածեցեք»[110]:

Երիտասարդությանը ազատատենչության կոչ անելուց հետո

[109] Տե՛ս Նոր տետրակ…, էջ 20:

[110] Նշվ. աշխ., էջ 37:

Բաղրամյանը դիմում է նրանց ծնողներին, հորդորում ու ոգեշնչում է, որպեսզի նրանք իրենց որդիներին կրթեն ու մարզեն և նվիրաբերեն հայրենիքի ազատագրության նվիրական գործին: Այս նպատակն է հետապնդում, «Նոր տետրակի» «Հորդորական և աղաչական երգ, ներբողաբար ասված մեր ազգակիցների համար» գլուխը:

«Նոր տետրակի» չորրորդ գլուխը, որը կրում է «Գոհություն և շնորհակալություն մեր եկեղեցու առաջնորդներին, բոլոր վարդապետներին, քահանաներին և համայն պաշտոնյաներին» վերնագիրը, հետապնդում է կարևոր մի նպատակ՝ գնահատելով հայ հոգևորականության խաղացած պատմական դերը հայ ժողովրդի կյանքում, այնուամենայնիվ նրբորեն նկատում է, որ նրանց խնդիրը ոչ թե դարերով սովորություն դարձած անեծքն է ուղղված սեփական ժողովրդին, այլ հայ երիտասարդությանը կրթելն ու հայրենասիրության ոգով դաստիարակելն է: Բաղրամյանը անշուշտ նկատի ունի հայ պատմագրության մեջ տեղ գտած այն ավանդազրույցը, ըստ որի Արշակունյաց պետությունը Հայաստանում կործանվել է Ներսես Մեծ կաթողիկոսի անեծքով:

Մտնելով Արշակի մոտ, Ներսեսն ասում է. «Արդ լսիր ինչ որ քեզ ասում եմ, և կատարիր, որպեսզի կարողանաս քեզ փրկել աստծո բարկությունից և թշվառ Հայոց աշխարհն էլ քո պատճառով չկորչի. որովհետև ես տեսիլք տեսա, որ Հայոց կորստական աշխարհի համար կորուստ և կործանում է պատրաստվում գալ»...«Երանելի Ներսեսի բերանից ելած այս խոսքերից հետո հազիվ էր անցել երեք օր, որ աստված Արշակավան գյուղաքաղաքը հարվածների ենթարկեց»[111]:

Իր հայտնի «Թղթում» Ղ. Փարպեցին նույնպես հոգևոր առաջնորդների մասին նշում է, թե. «Նրանք մեռան իրենց բերանը հայոց աշխարհին օրհնություն տալու համար չբացած»[112]:

Հավանաբար այս փաստերը նկատի ունենալով էր Բաղրամյանը հանդիմանում հայ հոգևորականներին:

Բաղրամյանի ստեղծագործության այս առաջին չորս գլուխները մեզանում շատ տարածված «Ողբի» հատկանիշ ունեն: Գրականության այս տեսակի բովանդակությունը կազմել են ազգային կյան-

---

[111] **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Եր.,1987, էջք175-176:

[112] Տե՛ս **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Եր.,1982, էջ 485:

քի մեծագույն դժբախտությունները: Հիշատակության արժանի են Մովսես Խորենացու «Ողբը»[113], Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ»[114] պոեմը և այլն:

«Նոր տետրակում» այրի կնոջ կերպարանքով Հայաստանը մի կողմից ողբում է իր դժբախտությունները, մյուս կողմից հիշեցնում անցյալի վեհությունները:

«Տեսեք, – ձայնում է, – ինձ տեսեք. ես, որ հայոց
դշխո էի մի ժամանակ, արդ աղախին եմ Հագարին,
Ինչպես լքված մի Իսրայել, մատնված եմ
ձեռքը նախկին Սիսարայի,
…Կար մի ժամանակ՝ ծիրանազգեստ ես թագուհի ու մայր էի
հայոց ազգի, անզուգական՝ ողջ աշխարհում,
Հիմա քրձյա զգեստի մեջ անմխիթար մի այրի եմ
դարձել բազում լլկանքներից օտարների»[115]:

Դիմելով հայ ժողովրդին, Մայր Հայաստանը հիշեցնում է անցյալի իր վեհությունը, հակադրելով տխուր ու հուսահատական ներկային: Ուր են հայոց երբեմնի թագն ու թագավորները, զինակիցներն քաջամարտիկ Արան ու Հայկը:

Խորհրդանշական են հայոց որդիների՝ շրջակա ավանների ու բնակավայրերի բնական գեղեցկությունների, առատ ու շեն կյանքի նկարագրությունները: Այս հնարանքներով Բաղրամյանի ստեղծագործությունը դառնում է հուզիչ ու ազդեցիկ:

Նա վարպետությամբ է կերտել հատկապես որդեկորույս մոր կերպարը, օժտելով նրան մարդկային հոգեզմայլ գծերով:

Առաջին հայացքից Բաղրամյանի ողբը նմանություն ունի ճգնավորական, հուսահատական ողբերգության: Սակայն, թեև նվաճված, հայ ժողովուրդը գտնվում է բարոյալքված վիճակում, այնուամենայնիվ Բաղրամյանի համոզմամբ, կորովն ու կամքն են վճռելու համազգային պայքարի բարեհաջող ելքը:

Այդ պայքարում կարևորվում է տարագրված հայերի հայրենադարձության և ազգահավաքման գաղափարը: Բաղրամյանի ողբը արտահայտում է հայ ժողովրդի հայրենասիրական-քաղաքական ու

---

[113] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 315:

[114] **Ներսես Շնորհալի**, Ողբ Եդեսիոյ, Եր.,1973:

[115] Տե՛ս Նոր տետրակ…, էջք 13-14:

քաղաքացիական տրամադրությունները, թուրք-պարսկական անագորույն լծից ազատագրվելու և միասնական պետություն ստեղծելու ձգտումը:

«Նոր տետրակի» հինգերորդ գլուխն ավելի քան հնարավոր ու համոզիչ է դարձնում այս նպատակին հասցնելու գործը:

«Բացատրություն հայոց թագավորության և իշխանության մասին» խորագիրը կրող գլխի համառոտ առաջաբանում Բաղրամյանը ցավով նշում է, որ մեր թագավորության վերացումով մեզանից վերացան բոլոր վայելչությունները, ավերվեցին ուսումնարան-համալսարաններն ու կրթարան-վարժարանները: Այդ իրավիճակից դուրս գալու համար հայ ժողովրդին ոգևորելու նպատակով է, որ Բաղրամյանը հայ քաջերի ու հաղթող թագավորների պատմությունն է շարադրում:

«Նոր տետրակի» հինգերորդ գլուխը ոչ թե հայոց պատմության համառոտ շարադրանքն է, այլ հայոց պետականության պատմության շարադրանքն է: Այն սկսվում է Նոյի և համաշխարհային ջրհեղեղի մասին հանրահայտ զրույցով և տրվում Նոյի սերնդաբանությունը: Նոյից սերված հայերի ծննդաբանությունը հասցնում է մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ զոհված Հայկ Նահապետի վերջին սերունդը՝ Վանի որդի Վահեն, թվով 51 սերունդ:

«Նկարագրություն Արշակունյաց թագավորների» հատվածում Բաղրամյանը նկարագրում է թե ինչպես Պարթևաց Արշակ թագավորը ապստամբում է Սելևկյանների դեմ և ազատագրում իր երկիրը: Նրա թոռ Արշակը իր եղբայր Վաղարշակին նշանակում է Հայաստանի թագավոր: Հակիրճ ներկայացնելով արշակունյաց արքայատոհմի հաջորդականությունը՝ թվով 77 սերունդ, որն ավարտվում է Արտաշես երրորդ Արշակունուն գահընկեց անելով:

«Նկարագրություն Հայոց մարզպանների» վերնագրի տակ շարադրում է Արշակունիների անկումից հետո իշխած հայ մարզպանների ցանկը՝ սկսած Վարդան Մամիկոնյանից մինչև Սմբատ Բագրատունին, թվով 13 սերունդ:

«Նկարագրություն Բագրատունյաց թագավորների» վերնագրի տակ, որպես հայոց 78-րդ թագավոր ներկայացնում է Աշոտ Բագրատունուն և հասցնում մինչև Գագիկ երրորդին՝ որպես հայոց 91-րդ արքա:

Հաջորդ ենթագլխում՝ «Նկարագրություն մեր մյուս թագավորնե-

րի, որոնք սերել են զանազան տոհմերից», շարադրում է Վասպուրականի, Տաշիր-Զորագետի, Վանանդի, Գուգարքի արքայատոհմերի պատմությունը, հասցնելով 102-րդ արքային, ի դեմս՝ Դավիթ Անհողինի:

Քաղաքական հատուկ նպատակով, Բագրատունյաց արքայատոհմի շարունակականությունը ցույց տալու համար անդրադառնում է վրաց Բագրատունիներին:

«Թեև այն ժամանակ Բագրատունյաց տոհմից մեր թագավորությունը դադարեց,– գրում է նա, – բայց ոչ իսպառ, ինչպես կարծում են ուրիշները: Չէ՞ որ, ինչպես ոմանք հաստատում են, նույն տոհմից է և վրաց թագավորությունը, մանավանդ որ իրենք էլ պնդում են այդ: Եվ չէ՞ որ մինչև այսօր նույն անվանակոչությունն է կրում նրանց արքան՝ քաջ Հերակլիոսը, որն արդարև արժանի է գովեստի ու վիպասանության»[116]:

Վերջին ենթագլուխը նվիրված է Կիլիկիայի հայոց արքայատոհմի պատմությանը: Այն վերնագրված է «Նկարագրություն Կիլիկյան թագավորների», որում Կիլիկիյան հայոց թագավորության հիմնադիր և հայոց 103-րդ թագավոր ներկայացնում է Ռուբենին: Հերթականորեն թվարկելով բոլոր իշխաններին ու թագավորներին, հասցընում է մինչև Լևոն վեցերորդ վերջին, հայոց 124-րդ արքան:

Որպես հայոց ինքնիշխան պետականության շարունակականություն և վերջին իրողություններ, տաղանդավոր հրապարակախոսը ներկայացնում է Ղարաբաղի մելիքությունների համառոտ պատմությունը: «Արդ՝ Արցախ նահանգի իշխանները հետևյալներն են,– գրում է Բաղրամյանը,– Առաջինն էր Մելիք Ադամը…, ինքնագլուխ իշխան է, այնպես որ կարող է իրեն ենթակա ժողովրդի միջից հանցավորներին…, ինքնակամ կերպով պատժել ու սպանել՝ առանց որևէ մեկի հրամանի:

Երկրորդը կոչվում է Մելիք Հովսեփ: Սա նույնպես ինքնագլուխ իշխան է. իր իշխանության մեջ, ինչ էլ ցանկանա, կարող է կատարել առանց ուրիշի հետ հաշվի նստելու…:

Երրորդը կոչվում է Մելիք Եսայի, սակայն վերոհիշյալների պես անկախություն չունի, այլ ենթարկվում է պարսից տիրապետությանը:

Չորրորդը կոչվում է Մելիք Շահնազար…: Սա ևս պարսից իշխա-

[116] Տե՛ս Նոր տետրակ…, էջ 94:

նությանն է ենթարկվում:

Հինգերորդը կոչվում է Մելիք Միրզախան…: Սա նույնպես հարկատու է պարսից իշխանությանը»[117]:

Հայտնի է, որ հրապարակախոսության գաղափարաքաղաքական նպատակներից մեկը ժամանակակից պատմության ստեղծումն է, և Բաղրամյանը անթերի է կատարում հրապարակախոսության նաև այդ պահանջը: Շարադրելով Ղարաբաղի հինգ մելիքությունների համառոտ պատմությունը, Բաղրամյանի հրապարակախոսությունը դառնում է ժամանակակցի ու ականատեսի ներկայացրած հավաստի պատմություն, բազմաթիվ իրավիճակների հանրագումար: Ընթերցողը այստեղ ծանոթանում է հայոց կյանքի ամենաէական փաստերի հետ, ուշ միջնադարի մղձավանջում, թուրք-պարսկական անագորույն լծի տակ հեծող, հայ ժողովրդի պետականության վերջին առկայծումների հետ, ազգային արժանապատվության, հպարտության և ազատագրության հույս ներշնչող իրողությունների հետ: Բաղրամյանի շարադրանքը այստեղ դառնում է ավելի զգացմունքային: Առկա կյանքի կարևոր անցքերի հետ ներկայացնում է քաղաքական գործիչների կերպարային ու վարքաբանական դրսևորումները:

Ջրաբերդի տեր Մելիք Ադամին ներկայացնում է որպես խորամիտ և քաղաքավարի, պատերազմի մեջ խիզախ մարտիկ: Գյուլիստանի տեր Մելիք Հովսեփին բնութագրում է որպես չափազանց քաջ ու արի, որն իր անկախությունը ձեռք է բերել սեփական խիզախության շնորհիվ:

Դիզակի տեր Մելիք Եսային ներկայանում է որպես գրասեր և ուսման հետամուտ, Վարանդայի տեր Մելիք Շահնազարը՝ որպես հնարամիտ, հմուտ դիվանագիտական օրենքներին ու ծեսերին, Խաչենի տեր Մելիք Միրզախանը՝ որպես համեստ և խաղաղասեր մարդ[118]:

Անդրադառնալով Խամսայի մելիքությունների ինքնիշխանության սահմանափակման խնդրին, Բաղրամյանը նշում է, թե ամաչում է բացատրել դրանց պատճառները, քանի որ պարսիկները ոչ թե քաջությամբ մտան հայ մելիքների սահմանները, այլ վերջիններները հրապուրվեցին պարսիկների հովանավորության պատրանքով

[117] Տե՛ս Նոր տետրակ…, էջ 103:

[118] Տե՛ս Նոր տետրակ…, էջ 103:

և օգնություն ստանալու հույսով թույլ տվեցին պարսից իշխաններին մտնել իրենց սահմանները: Այսուհանդերձ, Բաղրամյանը մխիթարվում է նրանով, որ թեև պարսիկները տիրապետող դիրք ունեն Արցախում, բայց բոլոր գործերը հայերի ձեռքով են կատարվում, և նույնիսկ նրանց մարտական ուժերը հիմնականում հայերից են կազմված, ուստի և հայ իշխանները դյուրությամբ կարող են թոթափել պարսկական գերիշխանությունը և վերականգնել ինքնիշխանությունը, եթե լինեն համախոհ ու միաբան: «Ընդհանուր հայկական ազատագրության հիմքն ու հենարանը նա էլ համարում է Խամսայի երկիրը, ուր Մելիք Հովսեփի և Մելիք Հաթամի ներկայացրած դյուցազնական անկախության դիմաց՝ Մելիք Շահնազարի դավաճանությունն ստացել էր մի դրություն, որ հայրենասեր Բաղրամյանը ամոթից չէր կարողանում պատմել:

«…Ոչ Փանահ խանը, ոչ էլ Իբրահիմ խանը զենքի ուժով և բռնությամբ չէին նվաճել երկիրը, այլ ընտանի վատությունն էր թուրք բռնավորներին ներս մտցրել երկրի մեջ…: Շուշվա բերդի կատարած կործանարար դերը բացահայտվում էր այն տխուր հանգամանքով, որ խանական զորքերի մեծամասնությունը հայերից էր բաղկացած, որ խանի համար հաղթություն տանողները հայերն էին: …Դրությունն ամոթալի էր, բայց ոչ միանգամայն անհուսալի»[119], – եզրակացնում է մեծ հրապարակախոս-պատմաբան Լեոն:

Ազգային ազատագրության գլխավոր հենակետերը կարող էին լինել Արցախի ինքնիշխան երկու մելիքությունները: Անհրաժեշտ էր մնացած երեքն էլ միավորել ու տապալել խանական լուծը: Արցախը դարձնել ռազմական-քաղաքական կենտրոն, որի շուրջը պետք է համախմբվեր ողջ հայությունը: Իր համար պարզելով այս ճշմարտությունը, Բաղրամյանը ձեռնամուխ է լինում այս գաղափարի քարոզչությանը, այն էլ այնպիսի կտրվածքով, որ մինչ այդ անծանոթ էր հայությանը: Ինչպես նշում է Լեոն, նա առաջինն էր հայերի մեջ, որ իր քաղաքական քարոզչության համար օգտագործեց տպագիր հրատարակությունը: Դրանով էլ Մովսես Բաղրամյանը հայերի մեջ դառնում է առաջին քաղաքական հրապարակախոսը, որ քարոզում էր իր ժամանակի համար միանգամայն անլուր հեղափոխական մտքեր[120]:

---

[119] **Լեո**, Երկերի ժողովածու, երրորդ հատոր, Եր., 1973, էջ 314:

[120] Տես **Լեո**, նշվ. աշխ., էջ 314:

Բաղրամյանը ստեղծում է իրոք ինքնատիպ, հրապարակախոսական ժամանակակից պատմություն: Այստեղ ընթերցողը ծանոթանում է հայկական կյանքի էական փաստերի հետ, որոնց հիման վրա Բաղրամյանը ստեղծում է այն տխուր համայնապատկերը, որը հնարավորություն է տալիս հատուկ պատկերացում կազմել XVIII դարի հայ իրականության մասին: Ահա այդ իրականության մի դրսևորումը.

«Ու չափից դուրս չարաշշուկ իրարանցման, շփոթի մեջ
մշակ ու մարդ չգտնվեց, որ հողը մեր վարեր, ցաներ,
Բոլորն համակ խուսափելով ու խորշելով լլկողներից խուճապելով՝
շտապեցին ծերպ ու այրերը լեռների,
Որ այդպիսով թերևս իրենց անձը փրկել կարողանան
մահվան ահից»[121]:

Բաղրամյանի քննարկվող ստեղծագործությունը հավաստի պատմական աղբյուր է կերտված բանիմաց ականատեսի կողմից, պարունակելով փաստական հարուստ տվյալներ XVIII դարի սոցիալական ուժերի, երևույթների, դեպքերի, մշակութային ու գիտական կյանքի մասին:

«Մեր իշխանները խումբ առ խումբ օրը օրին տկարացան այնքան, մինչև կործանվեցին»[122] արտահայտությունը դիպուկ է ասված, քանի որ տեղական կարող տարրերը ազատագրական պայքարի երկչոտ փորձերից հետո իրոք բռնեցին կամ գաղթի, կամ դավանափոխության ուղին ու դուրս մնացին հայոց պատմության բեմահարթակից: Իսկ մեր իշխանների վերացումով,– նկատում է մեծ հայրենասերը, – մեզանից վերացան բոլոր վայելչությունները: Ավերվեցին ուսումնարան-համալսարաններն ու կրթարան-վարժարանները, և բացի վանքերից, չեղավ որևէ տեղ, ուր ծավալվեին ուսումն ու գիտությունը: Ահա թե ինչու չպահպանվեցին ոչ իմաստունների գրքերը և ոչ էլ մեր նախնիների պատմագրքերը, որոնք ընթերցելով՝ միգուցե իմանային զորավոր կտրիճների ու արիների վարքը և դրանց միջոցով նրանց գործերը, իրենք ևս ջանային հետևել իրենց նախնիներին: Եղածներն էլ պահվում են ամրաձածուկ, անհաս ու անելանելի տեղերում[123]:

---

[121] Նոր տետրակ..., էջ 20:

[122] Նշվ. աշխ., էջ 50:

[123] Նշվ. աշխ., էջ 54:

XIV դարից սկսած, իրոք գահավեժ անկում էր ապրում վանական անապահով խցերում հանգրվանած դպրոցները:

Դասական միջնադարի բարձրարժեք ու մեծածավալ պատմագիտական, փիլիսոփայական, իրավագիտական, գեղարվեստական երկերի փոխարեն մնացել էին շարքային գրիչների թողած արտասվախառը հիշատակարանները: Հիմնովին վերացվել էին հայ մշակույթի քաղաքակիրթ և էլիտար մակարդակները: Տիրող թանձր խավարում գոյատևում էին սակավարժեք ստեղծագործություններ, նվիրված զանգվածային պանդխտությանն ու հայրենազրկությանը: Ահա ազգային կյանքի այս ծանր իրողությունների նկարագրությամբ է Բաղրամյանը ստեղծում իր ժամանակի պատմությունը, պատմություն, որի առարկայական ոլորտը բազմաթիվ նմանատիպ իրավիճակների հանրագումարն է: Պատմությունը այստեղ հանդես է գալիս վատթարացող իրավիճակների արտացոլման միջոց: Բաղրամյանը հաճախ անց է կացնում ոչ սովորական զուգահեռներ, կատարում էքսկուրսներ, ձգտում բացահայտել ժամանակակից երևույթների ծագման պատճառները և զարգացման միտումները: Այդ պատմության միտումն է օգնելու հայ երիտասարդությանը, նրանց գիտակցությանը հասցնելը ծանրագույն պահի ողջ իմաստը: Այս նպատակին հասնելու համար Բաղրամյանը օգտագործում է ոչ միայն իր ժամանակի պատմության ընձեռած հնարավորությունները, այլև անցյալի պատմության առատ նյութերը: Անդրադառնալով պատմությանը, հետևելով պատմական դեպքերի զարգացման ընթացքին, նա անցյալի մեջ գտնում է զարմանալի փաստեր, որոնցով հնարավոր է համախմբել ու գոտեպնդել յուրայիններին:

Որպես ազգային պետականությունը կերտելու պատմականորեն կայացած օրինակ, Բաղրամյանը իր աշխատության հինգերորդ գլխում ներկայացնում է հայոց պետականության պատմությունը: Այս հարցին անդրադառնալը Բաղրամյանի համար նշանակում է ոչ թե պատմական իրողությունները շարադրել սահմանված կարգով, այլ ցույց տալ, որ հայերը կարող են վարել իրենց ազգային կյանքը, ունենալ ազգային պետություն, որովհետև նրանք օժտված են եվրոպական չափանիշներով պետականության համար անհրաժեշտ որակներով: Բաղրամյանի մոտ հայոց պետականության պատմությունը ներկայանում է որպես համապարփակ մի փաստ և իրագործելի գաղափար:

Պատմության այսպիսի շարադրանքը նախատեսված է քարոզչության համար, և շատ զորեղ է նրա ապացուցողական ուժը: Բաղրամյանը ընդգծում է, որ Բագրատունյաց թագավորությունը, Զաքարյանների իշխանությունը և Կիլիկյան հայկական պետությունը ժամանակին եղել են ոչ միայն տարածաշրջանի ինքնիշխան ու բարգավաճ պետություններ, այլև պետահիրավական տեսակետից ներկայացնում էին այնպիսի բարձր մակարդակ, որոնք համատեղելի էին միջնադարյան Եվրոպայում կազմավորվող պետությունների տիպերին և որոշ տեղերում, նույնիսկ գերազանցում էին նրանց իրենց կոդիֆիկացված իրավունքի նորմերով: Ապացույցը Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի հանրահայտ դատաստանագրքերն են[124]:

Չբավարարվելով ազգային պատմության ուսուցողական շարադրանքով, Բաղրամյանը այլ ժողովուրդների պատմության փաստերով նույնպես ցանկանում է ոգևորել հայ երիտասարդությանը.

«Ահավասիկ ազգը ռուսաց, որը այնքան նվաստագույն
էր, ներկայումս բոլորից հզորացավ
Եվ ինքն իրեն ազատելով դրացիների հալածանքից՝
կարողանալով դառնալ նույնիսկ աշխարհակալ»[125]:

Որպես օտարի լծից ազատագրված ու ինքնիշխան պետություն ստեղծած ժողովուրդների՝ հիշատակում է նաև իսպանացիներին ու պորտուգալացիներին:

Պարսկա-թուրքական լծից Հայաստանն ազատագրելու և անկախ պետություն ստեղծելու Բաղրամյանի առաջադրած կարևորագույն պայմանը կենսունակ հայրենիքի գոյի գիտակցումն է, ազգի մարդկային, նյութական ու ոգեղեն ներուժի բացահայտման ու համախմբման անհրաժեշտության ընդունումը: Այդ գիտակցումով էլ ավարտելով հայոց պետականության պատմության շարադրանքը՝ Բաղրամյանը իր աշխատության վեցերորդ գլխում, որ կրում է «Այն մասին, թե այժմ ում իշխանության տակ է հայոց աշխարհը, նաև մանրամասն տեղեկություններ, թե հայերը քանի նահանգ և գավառ ունեն» խորագիրը, տալիս է Մեծ Հայքի 15 նահանգների և դրանցից

---

[124] Տե՛ս **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք հայոց, Եր., 1975: Судебник Смбата Спарапета, Ер., 1971:

[125] Նոր տետրակ..., էջ 37:

դուրս գտնվող 5 հայաբնակ նահանգների բնակավայրերի նկարագրությունը:

Բաղրամյանի հայտնագործած հայրենիքը հայ ժողովրդի ապրելատարածքն է, որ հայրենիքի մեծ գաղափար է դարձել հազարամյակների ընթացքում, երբ այն պատվել է հայ ժողովրդի պատմամշակութային, ազգագրական ու ճարտարապետական հուշարձաններով, նախնիների գերեզմաններով, թշնամիների դեմ մղած պատերազմներում տարած հաղթանակներով և հայրենիքի հերոսների թափած արյունով: Բաղրամյանի հայրենիքը հենց սկզբից ներկայանում է իբրև մի ընտրյալ երկիր իր Արարատով, Նախիջևանով, Դրախտի չորս գետերով և դրանց հետ կապված նվիրական ավանդույթներով, որոնք վկայում են, որ երկինքը առաջնություն է տվել այդ երկրին, դարձնելով՝ մարդկության առաջին հայրենիքը:

Հայրենի հողի ու ջրի կախարդական ուժի մասին գոյություն ունեցող առասպելը Մովսես Բաղրամյանի մոտ քաղաքական ազատության ձգտող համապարփակ գաղափար է դարձել: Այդ հայրենիքը տարածվում է Կասպից ծովից մինչև Կորդվաց լեռները և Վիրքից մինչև Ասորեստան: Պարսկահայաստանի նկարագրությունը սկսում է Ուտիք աշխարհից և ավարտվում Արարատով, Թուրքահայաստանինը՝ Բարձր Հայքից և ավարտվում Մոկքով: Որպես հայկական 16–17–18-րդ նահանգներ, ներկայացնում է Փոքր Հայքի գավառները: Հայոց 19-րդ նահանգը համարում է Կիլիկիան, 20-րդը՝ Հայոց Միջագետքը: Թվարկելով պատմական Հայաստանի բոլոր աշխարհները՝ Բաղրամյանը կանգ է առնում նրանցում գտնվող քաղաքների, ավանների, գյուղերի վրա, պատմում տեղի ունեցած պատմական խոշոր իրադարձությունների, պետական, հասարակական, քաղաքական հիշարժան դեպքերի, դեմքերի ու նաև բնական ռեսուրսների մասին:

Հայաստանը աշխարհասփյուռ հայության հայրենիքն է: Սակայն, Բաղրամյանի կարծիքով, հայ ժողովրդի զգալի մասը կտրվել է հայրենի հողից, կորցրել մայր հայրենիքի գաղափարը, զրկվել պատմական հիշողությունից ու դարձել անդեմ ամբոխ: Այս գիտակցումով է նա աշխարհասփյուռ հայությանը ներկայացնում նրա փառապանծ, բայց մոռացված հայրենիքը, այն էլ քաղաքական ուժերի տարածքային դասավորություններով, պատմական Հայաստանի ներսում և հարևան երկրների ու պետությունների կոնկրետ շահագրգռություն-

ներով ու նկրտումներով: Հենց այս հատկանիշներով էլ «Նոր տետրակի» վեցերորրդ գլուխը դուրս է գալիս սովորական աշխարհագրական ակնարկի շրջանակներից և դառնում հայրենագիտական ու քաղաքական աշխարհագրության առաջին արժեքավոր ստեղծագործությունը հայ իրականության մեջ:

Հաջորդ գլխում՝ «Այն մասին թե ինչու կործանվեց հայոց իշխանությունը, գլխավորապես ինչ կարծիքներ կան այդ մասին», Բաղրամյանը առաջադրում է յոթ հիմնական պատճառ: «Մեր թագավորության անկման պատճառներից առաջինը ոչ այլ ինչ է,– գրում է նա,– եթե ոչ այն, որ մեր իշխանները ձգտեցին լինել ինքնիշխան»[126]: Այստեղ հեղինակը նկատի ունի կենտրոնախույս ֆեոդալական վարչակարգը: Կենտրոնացված լինելը նրանք չգիտակցեցին, որ յուրաքանչյուր մարդ բնությամբ սխալական է: Իսկ իշխանի սխալվելը ոչ միայն վնասներ, այլև մեծամեծ պատուհասներ է բերում ամբողջ ազգին:

«Երկրորդ պատճառը հետևյալն է, – շարունակում է Բաղրամյանը, – մեր թշնամին ոչ թե իր զորությամբ տիրեց մեզ, այլ մեր թշնամու խոհեմությունն էր, որ կաշկանդելով ու կապելով մեզ բազկակապ արեց, բայց ոչ թե մեր ձեռքի զորությունը, այլ մեր մտքի կուրությունը: Եվ ճիշտ է այն, որ մարդ նախ՝ հիմարանում է, ապա՝ կորչում…»[127]:

Երրորդ պատճառը այն է, որ մեր երիտասարդները ոչ թե արիության պակասությունից են պարտություն կրել, այլ տգիտաբար միմյանց դեմ են դուրս եկել և փոխանակ թշնամիներին կոտորելու այլազգիներին միանալով իրար են կոտորել:

Չորրորդ պատճառը նույնպես անմիաբանությունն է, դրանից է, որ հայ ազգը իր հայրենիքից ցրվելով, դարձավ աստանդական ու թափառական:

Հինգերորդ պատճառը ծուլությունն է: Մեր բնաշխարհը աղքատացավ ոչ թե բերք ու պտղի պակասությունից, – դժգոհում է Բաղրամյանը, – այլ ծուլությունից ու անփութությունից: Իսկ ծույլերի առաջ արքայության դռներն էլ փակ են: Ինչպես որ ծուլությունը բազմաթիվ չարիքների պատճառ է, այնպես էլ արիությունը, որ ծուլության հա-

[126] Նոր տետրակ…, էջ 129:

[127] Նշվ. աշխ., էջ 133:

կառակն է, բազում բարությունների պատճառ է[128]:

Վեցերորդ պատճառը Բաղրամյանը համարում է մեր հանդուգն, անզգամ ու անհնազանդ կամակորությունը: Քանզի խիստ անզուսպ ենք ոչ միայն կամակորության հարցում, այլև օրինազանց ենք[129]:

Յոթերորդ պատճառը հայերի ուսումնատյացությունն է, որի պատճառով օրեցօր ձեռք բերեցինք տգիտություն: Այս վիճակից դուրս գալու համար Բաղրամյանը խորհուրդ է տալիս հայ երիտասարդներին կրթվել ու լուսավորվել:

Անդրադառնալով Հայաստանի անկման Բաղրամյանի թվարկած այս պատճառներին, Լեոն նրան հանդիմանում է այն բանի համար, թե իբր հայ ժողովրդի ներքին հակասությունների մեջ է տեսնում քաղաքական անկախության անկման պատճառները, ոչնչության հասցնելով արտաքին հանգամանքները: Սակայն հաջորդ պարբերության մեջ նշում է, որ Բաղրամյանը նպատակ է ունեցել ներկայացնել հայ ժողովրդին իր վերածնության գործը իբրև մի հեշտ իրագործելի բան: Եվ իրավ,– նշում է մեծ պատմաբանը,– որքան քիչ բան է այդ ծրագրով պահանջվում հայ ժողովրդից՝ միանգամայն ազատ լինելու համար: Բավական է աշխատել միայն ներսում, վերացնել բարոյական պակասությունները և անկախությունը կգա[130]:

«Նոր տետրակի» ութերորդ գլուխը, որ կրում է «Այն հարկերի մասին, որ ամեն տարի օտարներն ինչքան կարողանում՝ բռնությամբ պահանջում են հանապազ մեր ազգից ու հայոց աշխարհից» վերնագիրը, իրոք, Հայաստանի ազատագրության հնարավորությունը հիմնավորելու համար տալիս է վիճակագրական տեղեկություններ Հայաստանի ու հայերի մասին: Եվ ընթերցողի առջև բացվում է մի դրախտային աշխարհ: Բաղրամյանի Հայաստանը ընդարձակածավալ է, ունի 20 նահանգ, 258 գավառ, 103 քաղաք, 77400 գյուղ, ընդամենը 4 մլն. 644 հազար տուն, որոնցում ապրում է 27 մլն. 864 հազար մարդ: Դրանց ուղիղ կեսը՝ 13 մլն 932 հազարը նրա հաշվելով հայեր են: Հայ բնակչության հարկատու տղամարդկանց թիվը հասնում է 5 մլն. 224,5 հազար–ի, որոնք վճարում են 10 մլն 449 հազար ոսկի գլխահարկ և զանազան այլ անուղղակի հարկեր: Ընդամենը

---

[128] Նշվ. աշխ., էջ 135:

[129] Նշվ. աշխ., էջ 136:

[130] Տես **Լեո**, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, Եր., 1973, էջ 532:

հայ ազգը թուրքերին ու պարսիկներին տարեկան վճարում է 20 մլն. 898 հազար ոսկի, կամ 4 մլն. 179 հազար պարսկական թուման: Ահա տեսեք, թե կամավոր կերպով ինչքան անբավ ու անքանակ դրամ ենք վճարում այլազգիներին՝ այդ ոչինչ համարելով մեր աչքում, դեռ չհաշված մյուս վճարները[131]: Այս վիճակում հայ ժողովուրդը ապրել է ավելի քան 400 տարի, որի ընթացքում հայ ազգի բազում սերունդներ հառաչելով մեռան անմխիթար վիճակում: Եթե օտարներին այդքան անհուն գումարներ ենք տալիս իբրև հարկ, ինչեր կարող ենք անել՝ այդ գումարները ծառայեցնելով մեր օգտին: Նրանք կարող են բավարարել պատերազմողներին, վերացնել մեր նախատինքն ու ազատեն այն ձեռքերից, որոնք նեղում ու նսեմացնում են մեզ:

Ահա այսքան խոշոր ու փայլուն երևույթ էր Բաղրամյանի հրապարակախոսական երկը,– եզրակացնում է Լեոն,– նա ավետում էր, որ հայ ժողովուրդը այլևս կրոնական համայնք չէ, այլ մի քաղաքական ազգ, որ քաղաքական միտք է դարբնում, քաղաքական իդեալներ է սնուցում և ստեղծում քաղաքական հրապարակախոսական գրականություն[132]:

Բաղրամյանի հրապարակախոսության հաջողության հիմնական պայմաններից մեկը նրա բազմակողմանի ու բազմաբնույթ փաստարկներն են, որոնք հնարավորություն են տալիս ընթերցողին կատարել հիմնավոր եզրակացություններ ու ընդհանրացումներ: Նրա փաստերը, տվյալները իմաստավորում են XVIII դարի սոցիալական կյանքը, անմիջական քաղաքական նշանակությամբ:

Հրապարակախոսը կանխադրում է՝ պոստուլացնում այնպիսի դրույթներ, որոնք ընդունվում են որպես անառարկելի տվյալներ: Իհարկե, Բաղրամյանը իր տեսությունը չի կապում միայն պոստուլների վրա, բայց այս մեթոդը լայնորեն օգտագործում է: Նրա համար պոստուլատ-կանխադրույթներ են հանդիսանում աստվածաշնչից արվող վկայությունները և հայոց պատմությունից բերված քաղվածքները, որոնք ընդունվում են որպես ելակետ:

Ազգային միասնության, քաղաքական ազատության, հայրենասիրության անհրաժեշտությունը Բաղրամյանը հաստատում է աստվածաշնչային օրենքներով, Քրիստոսի և նրա աշակերտների վար-

---

[131] Նոր տետրակ..., էջ 162:

[132] Տես **Լեո**, Երկերի ժողովածու, հ.3, էջ 534:

դապետություններով վավերացված գաղափարներով: «Ամենայն թագավորություն եթե բաժանվում է ինքն իր մեջ, կավերվի, և ամենայն քաղաք կամ տուն, եթե բաժանվում է ինքն իր մեջ, կանգուն լինել չի կարող»[133]:

Հայոց պատմության հանրաճանաչ փաստերը նույնպես մեծ հմտությամբ է օգտագործում Բաղրամյանը:

«Պատմագիրների երկերն ընթերցելով,– գրում է նա,– միգուցե իմանային զորավոր կտրիճների ու արիների վարքը և դրանց միջոցով հասու դառնալով նրանց գործերին, իրենք ևս ջանային հետևել իրենց նախնիներին»[134]: Ահա այսպիսի մեծ ոգևորություն ու հավատ են ներշնչում մեր ազգային հերոսները: Հսկաներն էին թագավորում Հայաստանում, և հայը բոլոր ազգերի մեջ ամենագովելին է,– ահա Բաղրամյանի հավատամքը:

Ընթացող իրականության մասին խոր գիտելիք տարածելու գործում համազգային ուսուցիչ *Բաղրամյանի երկը կատարում է հասարակական- ուսուցողական գործառույթ. այն պարզ պատճառով, որ բազմակողմանիորեն ազդում է մարդկանց ամենօրյա մտածողության վրա:* Կարևորվում է ժամանակակից կյանքի ճանաչողության և յուրաքանչյուրի տեղի գիտակցման խնդիրը: Բաղրամյանի հրապարակախոսության ճանաչողական գործառույթն իրականանում է արդի ժամանակաշրջանի լայն համայնապատկերում: Նրա վկայակոչումները հիմք ու ելակետ են հասարակական կարծիքի ձևավորման և հասարակական կողմնորոշման համար: Նրա հրապարակած տեղեկությունները պարզունակ հաղորդումներ չեն սովորական իրադարձությունների մասին, դրանք հրապարակախոսական հնարքներ են, որոնք հիմք են հանդիսանում ճանաչողության համար:

Իրականացնելով տեղեկատվական-ճանաչողական գործառույթ, Բաղրամյան-հրապարակախոսը հանդես է գալիս որպես հետազոտող, որը օգտվում է գիտական մեթոդներից և ստեղծում է գիտական գիտելիք արդիականության և իր հետապնդած խնդիրների մասին, որով նրա ստեղծագործությունը սկզբունքորեն գիտությունից չի տարբերվում:

«Նոր տետրակի» միջոցով ընթերցողը ծանոթանում է հասարա-

---

[133] **Մ. Բաղրամյան**, «Նոր Տետրակ», էջ 104: Հմմ. Աստվածաշունչ, Մատթ. ԺԲ, 25:

[134] Նշվ. աշխ., էջ 54:

կական կյանքի էական փաստերի հետ, պատկերացում կազմում ժամանակակից կյանքի տարբեր կողմերի մասին:

Հասարակական մանկավարժի ֆունկցիան Բաղրամյանը կատարում է բազմաթիվ միջոցներով ու հնարանքներով: Մի դեպքում ուղենշում է աճող սերնդի դաստիարակության հիմնական սկզբունքներն ու եղանակները հանրակրթական դպրոցում, մյուս կողմից՝ իր առաջադրած համազգային գաղափարներով դիմորոշում է ազգին դեպի ազատություն ու անկախություն:

Բաղրամյանի հետազոտության *օբյեկտը XVIII դարի հայ հասարակությունն* է, նպատակը՝ նրան ազգային արժանապատվության ու ազատության ոգով դաստիարակելը: Որպես այս նպատակի բնաբան է հնչում «Նոր տետրակի» տիտղոսաթերթի «Շարադրված հայկազուն երիտասարդների ու պատանիների՝ ծուլության քնի վեհերոտ ու անհոգ թմրությունից սթափվելու համար»[135] ենթավերնագիրը:

Նրա խնդիրն է, որ հայ պատանին գիտակցի իր տեղն ու անելիքները համազգային կյանքում և իրեն դրսևորի որպես արժանապատիվ քաղաքացի, ակտիվորեն մասնակցի պատմականորեն ծառացած ազգային ազատագրության մեծ գործին:

«Ոչ մի և կամ երկու կողմից են տագնապներն
ու տարակույսը մեզ պատել,
Այլ հարատև և հարաժամ հասնում են մեզ
ամեն կողմից վիշտն ու փորձանքը սաստկագին,
Ու, մանավանդ, այդ նրանից է, որ զրկված
ենք ուսումից (հազիվ թե այլ պատճառ լինի),
Զուր չի ասվում, թե ծառաներն իմաստուն
պիտի տիրեն իրենց անմիտ տիրողներին»[136]:

Հետաքրքիր է պարզել, թե ազգային գիտակցության մեջ ինչպիսի նոր կերպարներ է ստեղծում Բաղրամյան-մանկավարժը: Ուշագրավ է, որ թմրության քնի մեջ խարխափող երիտասարդությանը նա երբեք չի անձնավորում: Չի անձնավորում անգամ Խամսայի մելիքությունների ինքնիշխանության խաթարման գլխավոր մեղավորին: Դրան հակառակ, նա մեծ ոգևորությամբ անձնավորում ու մարմնավորում է հայրենիքի նվիրյալ հերոսներին՝ Տիգրանին, Արամին և

[135] Նոր տետրակ..., էջ 5:

[136] Նշվ. աշխ., էջ 11:

այլոց: Այս մոտեցումը դաստիարակության գաղափարահոգեբանական նուրբ նպատակ է հետապնդում: Որոշակի համոզմունքներով, ձգտումներով, հայրենասեր գործիչներին ներկայացնելով, *Բաղրամյանը ձգտում է հասնել իր նպատակին՝ անհատականության համոզմունքի վրա համազգային համոզմունք կերտելու ճանապարհով:* Այսինքն, Բաղրամյանը ոչ թե ազգի խամրած հատվածից է անհատականություն ստեղծում, այլ անհատականությունից է կերտում ազգային համոզմունք:

Ունկնդիրներին համոզելուց առաջ Բաղրամյանն ինքն էր համոզված իր առաջադրած փաստերի ու գաղափարների ճշմարտության մեջ:

Նա խորապես համոզված էր, որ ազգի ապագան լուսավորության և գիտակցված պայքարի մեջ է:

Տեղեկատվական դաշտում Բաղրամյանի խնդիրն է հենց իրեն՝ հայ ազգին, բավարարել իրականության փաստերով: Դրանք չափազանցնելու կամ կեղծելու կարիք չկա, քանի որ իրական ու պատմական փաստերն այնքան զորեղ են, որ դրանց պարզ թվարկումն անգամ համոզմունք կդառնան ունկնդրի համար:

Ահա այս ճանապարհով փաստերի հաղորդման, համոզման, ներշնչման միջոցով է Բաղրամյան-հրապարակախոսը ձևավորում հասարակական կարծիք:

Բաղրամյանը ոչ միայն վերարտադրում է իրականությունը, այլև բացահայտում այն, կայացնում համարձակ վճիռներ, դիմում իրականության գեղարվեստական արտացոլման միջոցներին, ստեղծում պատկերավոր երևույթներ, թափանցում դրանց բովանդակության խորքերը, ստեղծում գիտականորեն մշակված գաղափարախոսություն: Այսինքն, հասարակական կարծիքը չի դիտում որպես ճանաչված ու գնահատված դեպքերի անկառույց միավոր, այլ ճշգրիտ, առանձին ակնթարթներից կազմված իրականության ռեալ ու խորքային պատկեր: Յուրաքանչյուր դեպք, հաղորդում ուղղված է այն հիմնական նպատակին, ինչը հրապարակախոսը դրել է իր առջև, կարևորվում և առաջին պլան մղում այն իրողությունները, որոնց մասին կարծիք կրողները հավատ են ընծայում: Բաղրամյանը հաշվի է առնում ազգային կյանքի կողմերը, դրանց կապերն ու փոխհարաբերությունները: Հասարակական կարծիքի ստեղծման նրա մշակած սկզբունքները առանձին տեսակետների չի բաժանվում, այն պարու-

նակում է համընդհանուր դիրքորոշում իր վիճակի բոլոր կողմերի մասին, թեև նրա աշխատության առանձին գլուխներում քննարկվում են իրավիճակի այս կամ այն տարրերը՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր և այլն, այնուամենայնիվ այն մի անխախտ ամբողջություն է և մի նպատակ է հետապնդում: Իրավիճակի այսպիսի մոտեցումը հիմնախնդիրը դարձնում է բազմապրոֆիլ ամբողջություն, որն իր մեջ ներառում է քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական եզրեր:

Ձգտելով ձևավորել զանգվածային գիտակցություն, Բաղրամյանը դրանով մասնակցում է ազգային գործընթացների կառավարմանը, ակտիվացնում ազգային զարթոնքը:

Զանգվածային գիտակցությունը տվյալ դեպքում ազգի գիտակցության հիմնարար բաղադրատարրն է, որը ձեռք բերելու համար Բաղրամյանը առաջադրում է ուսման, դաստիարակության ու հատկապես քարոզչության ուղին: Քարոզչությունը զանգվածին անսխալ կողմնորոշելու գաղափարական գործունեություն է, որը ձևավորում է անհատի գաղափարապես առաջադեմ ու արդար կերպար, համոզմունքների համակարգ, իդեալների, արժեքների, նորմերի յուրահատուկ կառուցվածք, որոնք իրականանում են ամենօրյա մտածողության ու վարքի միջոցով:

Բաղրամյանը գաղափարապես ու հոգեբանորեն նախ պատրաստում է հայությանը ճանաչել ու ընդունել դառն իրականությունը և խթանել հասարակական պրակտիկ գործունեության ակտիվացմանը:

«Եկեք մենք էլ «օն անդր»[137] ասենք ու խոյասլաց
գնանք հետքերով մեր հայրերի, նախնիների:
Նրանք էին, որ հայրենիքը հարատև իրենց ազգ ու ընտանիքի
համար անքույթ և անսասան պահպանելու նպատակով՝
Զինավառված հարձակվեցին և մշտապես վրեժխնդիր
եղան իրենց ոսոխներից՝
Չթողնելով մինչև անգամ, որ մագիլները գիշակեր թռչունների
հասնեն իրենց տանիքներին»[138]:

---

[137] Ստ. Մալխասյանցը «ապա» բառը նաև բացատրում է «օն անդր», որը նշանակում է. «Հապա, ապա տեսնեմ, ով է ձեր մեջ քաջ, ապա առաջ անցեք»: Տե՛ս **Ստ. Մալխասյանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Եր., 1944, էջ 203:

[138] Տե՛ս «Նոր տետրակ…», էջ 10:

Բաղրամյանի այս ոգեշունչ տողերը բազմակողմանիորեն ազդելով մարդու մտքի, զգացմունքի ու կամային որակների վրա, նրան մղում են ուղղակի պրակտիկ գործունեության:

Հատկապես տպավորիչ է այլազգիների մոտ տարածված այն գաղափարը, թե իբր իրենց հաջողությունների հիմնական պատճառը հայերի անմիաբանությունն է:

«Այսքանը մտաբերելով,– գրում է Բաղրամյանը,– ասքանազյան մեր նորաբողբոջ պատանիները, հայրենիքի սիրով վառված, անշուշտ կարող են նախանձախնդրությամբ ոտքի ելնել՝ վրեժ լուծելու այլազգիներից»[139]:

Մեծ հայրենասերի այս գաղափարները խորապես ազդում են մարդու բանականության, զգացմունքի, կամքի ու պրակտիկ գործունեության վրա, և մեծ է նրա ազդեցության ուժը հայ երիտասարդությանը համախմբելու ազգային ազատագրության պայքարի հանելու ասպարեզում:

[139] Տե՛ս նշվ. աշխ., էջ 157:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱԶԳԱԿԵՐՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

3.1. Ազգի ֆենոմենը

Մարդկության էթնիկական բյուրեղացման շրջադարձային փուլը զուգադիպում է ագրարային հարաբերություններից արդյունաբերականին անցման ժամանակաշրջանին, որում տեղի է ունենում հանրույթի բարձրագույն ձևի՝ ազգույթից ազգի ձևավորման բարդ ու վճռական գործընթացը:

Հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացին զուգընթաց ձևավորվում է նաև ժողովրդի ինքնության բյուրեղացման ու համախմբման գաղափարախոսությունը, էթնոսի մասնատված ու տարանջատված հատվածների համախմբման, տնտեսական ու քաղաքական միավորման, համազգային պետության ստեղծման ու համազգային նպատակների ու գաղափարների շուրջ սեփական ժողովրդին համախմբելու տրամադրությունները:

Այս պատմաշրջանում նվաճված ու բնաջնջման վտանգի ենթարկված ժողովուրդների՝ ինչպիսին հայ ժողովուրդն էր, ազգայնացման ճանապարհին խիստ կարևորվում է երկու առանձնահատուկ գործոն՝ մի կողմից անհրաժեշտություն է առաջանում տեսականորեն հիմնավորվել և մշակել ազգի ներքին ուժերի համախմբման ու ազգակերտման, մյուս կողմից՝ ձևավորվող ազգի ազգային ազատագրական պայքարի և ինքնուրույն ազգային պետականության ստեղծման ծրագիր:

Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ» երկում, XVIII դարի հանրային մտքի համաշխարհային ձեռքբերումների մակարդակով հայտնագործվում է ազգայնացման այս երկու ուղիները՝ մի կողմից ներքին՝ միջնադարյան, քնից հայ ժողովրդին արթնացնելու, նրա ցաք ու ցրիվ հատվածներին համազգային գաղափարների շուրջ համախմբելու և ազգային կոնսոլիդացիայի (բյուրեղացման) հասցնելու, մյուս կողմից՝ պարսկա-թուրքական լծից նրան ազատագրելու և ինքնիշխան ազգային պետություն կերտելու քաղաքական ծրագիրը:

«Ազգ» ֆենոմենի բնութագրման, նրա ծագման, հատկանիշների և հարակից այլ հարցերի վերաբերյալ առաջադրվել են բազմաթիվ սահմանումներ ու մոդելներ: Այդ տեսությունը մոտ 200-ամյա ճանապարհ է անցել և տարբեր ժամանակներում, տարբեր ազգերի ներկայացուցիչների կողմից, տարբեր մոտեցումներ ցուցաբերվել: Տարաբնույթ սահմանումների հիմքում հիմնականում ընկած են կամ ազգային ավանդական մտածելակերպով հետազոտողների մոտեցումներն ու գնահատումները, կամ դասակարգային գաղափարախոսական հիմքի վրա խարսխված մոտեցումները, կամ վերազգային, ապազգային, համերկրային սկզբունքների վրա խարսխված մոտեցումները:

Առանձնացվում են ազգերի առաջացման երկու հիմնական ուղիներ՝ ազգեր, որոնք ձևավորվել են այլ ժողովուրդների տարածքները գրավելու ու յուրացնելու, տեղաբնիկներին ձուլելու ճանապարհով, և ազգեր, որոնք ձևավորվել են իրենց պատմական հայրենիքում:

Հասարակության զարգացման այն աստիճանում, երբ տեղի են ունենում զանգվածային տեղաշարժեր, գաղութային լայնամասշտաբ նվաճումներ, միգրացիոն աշխույժ գործընթացներ, ապրելավայրի ազատ ընտրության հնարավորություններ, ազգերի ձևավորման ավանդական բնապատմական ձևերին զուգահեռ տեղի են ունենում ազգերի նոր եղանակներով առաջացման գործընթացներ, որի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ազգային հանրույթներ և տարբեր ազգային պատկանելության մարդկանց միևնույն պետության տարածքում երկար ժամանակ համատեղ ապրելու ընթացքում աստիճանաբար, ընդհանուր լեզվի և մշակույթի ձևավորման զուգընթաց տեղի է ունենում միասնական նոր ժողովրդի ձևավորման գործընթաց: Իսկ իրենց պատմական հայրենիքում ազգերի ձևավորումը տեղի է ունեցել հազարամյակների ընթացքում, արյունակից տոհմերի ու ցեղերի, էթնիկական խմբերի ու ժողովուրդների տարանջատված հատվածների մերձեցման ու միավորման ճանապարհով: Ըստ այդմ, արդի գիտական գրականության մեջ տարածված է ազգի ըմբռնման երեք հիմնական մոտեցումներ՝ իրավաքաղաքական, սոցիոմշակութային և կենսաբանական ընդհանրության գաղափարների վրա խարսխված մոտեցումներ:

Իրավաքաղաքական մոտեցման դեպքում ազգը դիտվում է այս կամ այն պետության մեջ ապրող քաղաքացիների ընդհանրություն:

Սոցիոմշակութայինի դեպքում շեշտը դրվում է լեզվի, մշակույթի, կրոնի, ավանդույթների ընդհանրության վրա: Բնական-կենսաբանական մոտեցման հիմքում դրվում են գենետիկական առանձնահատկությունները:

Քաղաքագիտական հանրագիտական բառարանի հեղինակները ազգը սահմանում են, որպես. 1) «Մարդկանց պատմական հանրույթ, որն առաջանում է նրա հատկանիշները կազմող ընդհանուր տարածքի, տնտեսական կապերի, լեզվի, մշակույթի, հոգևոր կերտվածքի, ավանդույթների ու սովորույթների որոշ առանձնահատկությունների ձևավորման ընթացքում: 2) Անգլիալեզու և ռոմանալեզու երկրներում սովորաբար օգտագործվում է «պետություն», «հասարակություն», «բոլոր քաղաքացիների ամբողջություն...» իմաստներով: 3) Արևմտյան պետությունների սահմանադրություններում «ազգ հասկացությամբ» արտահայտվում է ոչ թե էթնիկական, այլ պետաքաղաքական ընդհանրությունը»[140]:

Ակադեմիկոս Հ. Գևորգյանը անդրադառնալով ազգի, ազգայնականության և ազգային պատմության ծայրահեղ՝ ժխտող հեղինակներից Իսայա Բեռլինին, նշում է, որ նա հիմնահարցը սերտորեն առնչում է գործնական քաղաքականության հետ՝ գրելով. «Որևէ մեկ, հեշտությամբ տարբերակվող, խմբի պատկանելու կարիքը համարվել է ... մարդկային էակների բնական պահանջմունքներից մեկը: Ընտանիքները, տոհմերը, ցեղերը, հասարակական դասերը, խավերը, դասակարգերը, կրոնական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները և, վերջապես, ազգերն ու պետությունները մարդկանց այդ հիմնարար պահանջմունքի իրականացման պատմական ձևերն են եղել... Զանազան տեսություններ են առաջարկվել այդ ձևերի պատմական զարգացման հաջորդափոխությունը բացատրելու համար,– սկսած Պլատոնից և Պոլիբիոսից մինչև Մաքիավելի, Բոսյոե, Վիկո, Տյուրգո, Հերդեր, Սեն-Սիմոն, Հեգել, Կոնտ, Մարքս և նորագույն ժամանակի նրանց հետևորդները: Ընդհանուր ծագումը, ընդհանուր լեզուն, սովորույթները, ավանդույթները, անցյալի հուշերը, մի երկար ժամանակի ընթացքում նույն տարածքում շարունակաբար բնակվելը համարվել են պայմաններ մեկ հասա-

[140] Քաղաքագիտություն (հանրագիտական բառարան), Եր., 2004, էջ 13:

ракություն կազմելու համար...»[141]: Մեջբերելով Բեռլինիի աշխատության այս հատվածը, Հ. Գևորգյանը ընթերցողի ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ մարդկանց (հասարակական) խմբերի այս թվարկման մեջ ընտանիք, տոհմ, ցեղ շարքից հետո գալիս են հասարակական խավերն ու դասակարգերը, հասարակական կազմակերպություններն ու քաղաքական կուսակցությունները, ազգն ու պետությունը, այսինքն՝ ազգի և ազգայնականության հարցերի քննության համար, հարկավոր է վերցնել հասարակական խմբերի դասը՝ առանց տարբերակելու ազգը պետությունից, հասարակական կազմակերպությունից ու դասակարգից: «Որևէ երկրում արմատներ չունեցող մի աշխարհաքաղաքացու համար,– իրավացիորեն նկատում է Հ. Գևորգյանը,– որը այս կամ այն երկրում հայտնվելով՝ ուզում է ադապտացվել նրա միջավայրում,– այնտեղ գործող քաղաքական կուսակցությունները, կրոնական և ազգային կազմակերպությունները, պետական իշխանության մարմինները թերևս կարող էին ներկայանալ հենց այդպես՝ որպես նույն կարգի և նույն մակարդակի երևույթներ, ինչպես որ ազգը»[142]:

Այն հարցին, թե ինչ է ազգը, երբ է այն ձևավորվել և զարգացման ինչպիսի միտումներ է ունեցել, անդրադարձել են նաև Մարքսիզմի հիմնադիրները, համարելով այն մարդկանց սոցիալ-պատմական հանրություն, որն առաջացել է դասակարգային հասարակության զարգացման որոշ աստիճանում, և կվերանա անդասակարգ կոմունիստական հասարակարգում:

Խորհրդային փիլիսոփայական բառարանում ազգը սահմանվում է որպես «Մարդկանց հանրույթի պատմականորեն կազմավորված ձև, որ փոխարինում է ազգույթին: Ազգին հատուկ է ամենից առաջ կյանքի նյութական պայմանների՝ տերիտորիայի և տնտեսական կյանքի ընդհանրություն, լեզվի ընդհանրություն, ազգային բնավորության որոշ գծերի ընդհանրություն, որոնք դրսևորում են նրա կուլտուրայի ազգային յուրահատկության մեջ:..այն (ազգը) կազմավորվում է կապիտալիստական ֆորմացիայի ծագման ու ձևավորման հետ: Ազգի առաջացման տնտեսական հիմք են ծառացել ֆեոդա-

---

[141] Տես **Հ. Գևորգյան**, Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Եր., 2005, էջ 504-505:

[142] Տես նշվ. աշխ., էջ 505:

լական մասնատվածության վերացումը, երկրի ներսում առանձին շրջանների տնտեսական կապերի ամրապնդումը, տեղական շուկաների միավորումը մի ընդհանուր ազգային շուկայի մեջ: Այդ ժամանակաշրջանում առաջացած ազգի ղեկավար ուժը բուրժուազիան էր, որ որոշակի կնիք դրեց նրանց սոցիալ-քաղաքական և հոգևոր կերպարի վրա:

Ազգի զարգացման զուգընթաց նրանց մեջ ավելի ու ավելի են սրվում սոցիալական հակասությունները, դրսևորվում են դասակարգերի հակադրությունները: Բուրժուազիան ձգտելով սքողել հակասությունները, հրահրում է ազգամիջյան հակամարտություններ: Նա քարոզում է նացիոնալիզմի և ազգային էգոիզմի գաղափարախոսություն: Կապիտալիզմի անխուսափելի հետևանքն են գժտությունը և ատելությունը ազգերի միջև, ազգային կոնֆլիկտները: Պրոլետարիատը բուրժուական նացիոնալիզմին հակադրում է ինտերնացիոնալիզմի գաղափարախոսությունն ու քաղաքականությունը:...Սոցիալիզմի օրոք տեղի են ունենում, մի կողմից, ազգերի զարգացում ու ծաղկում, մյուս կողմից, նրանց մերձեցում: Այդ հիման վրա ՍՍՀՄ-ում կազմավորվել է մարդկանց հանրույթի մի նոր ձև՝ բազմազգ խորհրդային ժողովուրդը: Կոմունիզմի լիակատար հաղթանակից հետո ազգերի բազմակողմանի մերձեցումը կհանգեցնի ազգային տարբերությունների աստիճանական անհետացմանը...»[143]:

Ժամանակակից պատմագիտական և պատմափիլիսոփայական տեսությունները ձևավորվել են եվրոպական երկրների պատմության փորձի ընդհանրացման ու իմաստավորման վրա: Նրանք ունեն առանձնահատկություններ, որոնց կիրառումը հայոց պատմության նկատմամբ առաջ է բերում բազում բանավիճային խնդիրներ: Այդ տեսություններում ազգերի և ազգային մշակույթների կազմավորումը կապվում է Եվրոպայում ազգային պետությունների կազմավորման ու զարգացման հետ, Ռուսաստանում՝ կոմունիզմի կայացման հետ: Իրավացիորեն վիճարկվում են XVIII–XX դարերում կայսրությունների փլուզման ընթացքում պատմական ասպարեզ մուտք գործած ժողովուրդների ազգային մշակութային ժառանգության հավակնությունները: Բնական է, որ հայոց պատմությունը պետք է նկատվի ժամանակակից արևմտյան պատմագիտական տեսությունների հա-

[143] Փիլիսոփայական բառարան, Եր., 1975, էջ 5:

մատեքստում: Միաժամանակ, պետք է ընդգծել, որ պատմության՝ որպես գիտություն առանձնահատկությունն այն է, որ նա գործ ունի եզակի, անհատական, միանգամյա երևույթների հետ, որոնք պահանջում են կոնկրետ պատմական մոտեցում: Հետևաբար, հասարակագետ հետազոտողի խնդիրն է դառնում օբյեկտիվորեն տարբեր ճանապարհներով ձևավորված ազգերի մասին առաջադրված տեսությունները չնույնացնել, իրավաքաղաքական ճանապարհով ձևավորված ազգերի մասին ուսմունքները չփաթաթել բնական ճանապարհով ձևավորված ազգերի վզին:

Այս դիրքերից մոտենալով հիմնախնդրին, տողերի հեղինակը (Հ. Մանուչարյանը), իր «Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները»[144] աշխատության մեջ, ամփոփելով ազգային հարցի մասնագետների ձեռքբերումներն այս հիմնախնդրի վերաբերյալ, եկել է մի հետևյալ եզրակացության. քանի որ ազգերը պատմականորեն ձևավորված կայուն ընդհանրություն են, հետևաբար այն սահմանելու համար պետք է պատմական մոտեցում ունենալ. անհրաժեշտ է պարզել, թե հատկանիշների ինչ համակարգով են տարբերվում ձևավորված ազգերը միմյանցից, և հատկանիշների ինչ համակարգով՝ ազգը նախաազգային հանրույթներից: Ազգերին միմյանցից տարբերող հատկանիշների համակարգը նա անվանում է «էթնոտարբերիչ հատկանիշներ», որոնց մեջ ներառնում է *տարածքի, ծագման, լեզվի և հոգեկան կերտվածքի ընդհանրության հատկանիշները*: Իսկ ազգը նախազգային հանրույթներից տարբերող հատկանիշների համակարգը անվանում է «հանրորոշ հատկանիշներ», որոնց մեջ ներառնում է *տնտեսական կյանքի, սոցիալական կառուցվածքի, քաղաքական համակարգի և գաղափարախոսության ընդհանրությունները*: Հենց այս հատկանիշներով է ազգը տարբերվում ազգույթից (ժողովրդից), ազգույթին՝ ցեղից, ցեղին՝ տոհմից: Ուշագրավ է, որ հազարամյակների բնականոն ճանապարհ անցած հայ ժողովուրդը Մովսես Բաղրամյանի ապրած ժամանակահատվածում՝ XVIII դարի երկրորդ կեսին, ապրում էր շրջադարձային մի պահ, որում, հայ գաղթաշխարհում անցում էր կատարվում միջնադարից նոր դարին, ագրարային հարաբերություններից արդյունա-

[144] Տե՛ս **Հ. Մանուչարյան**, Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Եր.,1988, էջ 10-11:

բերականին, հետևաբար նաև ազգույթից: Ահա Բաղրամյանի առաջ ծլարձակվող այս նոր երևույթները՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական և գաղափարական կյանքում կատարվող նոր երևույթներն է նկատում ու բացատրում մեծ մտածողը: Միաժամանակ նա շոշափում է նաև ազգի բնական (էթնոտարբերիչ) հատկանիշների՝ տարածքի (պատմական հայրենիքի), միասնական ծագման, համազգային լեզվի և ազգային հոգեկերտվածքի հիմնադրույթները:

Ազգային հարցի ճանաչված հետազոտող Միրոսլավ Խրոխը առանձնացնում է ազգի ձևավորման և ազգային ինքնագիտակցության մակարդակների երեք կառուցվածքային փուլեր:

Ազգային շարժման առաջին փուլի ակտիվիստ-հայրենասերների գործունեությունը, գրում է նա, ուղղված էր լեզվի, մշակույթի, փոքր էթնոսների սոցիալական, պատմական գծերի մանրամասն հետազոտությանը և այդ փաստերի, հայրենակիցների գիտակցության մեջ ամրապնդմանը: Այդ փուլի ակտիվիստները զգում էին, որ հայրենակիցների ինքնաճանաչողության մեջ բաց տեղերը այդպիսի տեղեկատվություններով լրացնելը իրենից ներկայացնում է յուրահատուկ ազգային պահանջմունք:

Երկրորդ փուլում ակտիվիստների նոր սերունդ է սկսում գործել, որը փորձում է իրենց էթնիկական խմբերից ձեռք բերել որքան կարելի է շատ կողմնակիցներ ապագա ազգի ստեղծման պլաններն իրականացնելու համար: Սա կատարվում է հայրենասիրական քարոզչության միջոցով և նպատակադրված է արթնացնել ազգային ինքնագիտակցությունը: Արդյունքում, աստիճանաբար ազգաբնակչության զգալի մասը առանձնահատուկ տեղ է տալիս իր ազգային պատկանելությանը, և սկսում է ձևավորվել զանգվածային շարժում: Երրորդ փուլում ձեռք է բերվում մի սոցիալական ազգային կառույց, որը բաժանվում է երեք՝ պահպանողական, ազատական և ժողովրդական ուղղությունների[145]:

Հայ իրականության մեջ առաջին փուլի գործիչները, մեր կարծիքով, հանդիսանում են Վենետիկի Մխիթարյանները, 2-րդը՝ Հնդկահայ խմբակը, 3-րդը՝ XIX դարի II կեսի հասարակական-քաղաքական հոսանքներն ու կուսակցությունները:

Մխիթար Սեբաստացու հիմնադրած Ս. Ղազարի վանքը գտնվում

[145] Нации и национализм, М., 2002, էջ 125:

է Եվրոպայում: Մխիթարյանները եվրոպական հանրային մտքի շատ ձեռքբերումներ դարձրել են հայ ժողովրդի սեփականությունը: Այնտեղ ստեղծվեցին հայոց լեզվի քերականության դասագրքեր, բառարաններ, հրատարակեցին, մոռացության փոշու տակից հանեցին ու կորստից փրկեցին հայ ժողովրդի պատմագիտական հսկայական ժառանգության արժեքավոր նմուշներ, հասու և ընկալելի դարձրին դրանք հայ ժողովրդին: Բարձրացրին և նոր մակարդակի հասցրին հայագիտությունը, աշխարհին և հենց իրեն, հայ ազգին ներկայացրին միջնադարյան հայ դասական գրականության արժեքները, որով տեսական ամուր հիմքեր ստեղծվեցին հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար:

Այս ասպարեզի առաջնեկը 1749 թվականին Վենետիկում լույս տեսած Մխիթար Սեբաստացու «Բառգիրք Հայկազյան լեզվի»[146] դարագլուխ կազմող գործն է: Հայտնի է, որ հայ ազգի ամենաառաջնային հարստությունը՝ հայոց լեզուն ուշ միջնադարում չափազանց աղավաղվել ու աղճատվել էր, պարսկա-թուրքական լծի տակ հեծող Հայաստանում և գաղթօջախներում կորցրել էր միասնական ու կուռ կառուցվածքը: Տարբեր վայրերում ապրող հայ հեղինակները բառերն այնպես էին կիրառում, ինչպես կամենում էին: Մխիթար Սեբաստացին հավաքեց հին հայոց գրականության բառերը, բացատրեց դրանք այնպես, ինչպես գործածել էին հայ մշակույթի դասականները:

Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարգացման համար հսկայական նշանակություն ունեցավ Միքայել Չամչյանի «Պատմութիւն հայոց»[147] աշխատությունը, որով հայ ժողովուրդը հաղորդակցվեց իր ողջ պատմությանը, նրա սկզբից մինչև գրքի տպագրության ժամանակը: Չամչյանը իր նախնիների փառքով հպարտացող ու թշվառությունները ողբացող հայրենասեր գիտնական է և այդ ոգով էլ դաստիարակում է իր հայրենակիցներին: Չամչյանը արթնացրեց մի ժողովրդի, որի հայրենիքը ներկայանում է մարդկության առաջին բնօրրան, իբրև ընտիր մի երկիր, որ կյանք է տվել ողջ մարդկությանը:Նա իր եռահատոր պատմությամբ հայ

---

[146] Բառգիրք Հայկազյան լեզուի, հ. Ա., Վենետիկ, 1749:

[147] **Միքայել Չամչյան**, Պատմություն հայոց, Վենետիկ, հ. Ա., 1784, հ. Բ., 1785, հ. Գ., 1786:

ժողովրդին ինքնաճանաչ դարձրեց:

Այս վեհ գաղափարները տիրապետող ուղղություն են դառնում հայ հանրային մտքի ազգային զարթոնքի երկրորդ փուլում՝ XVIII դարում, որի կարկառուն ներկայացուցիչներն են Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը: *Հ. Էմինը ձգտում էր XVIII դարի հայից հայրենիքը ազատագրելու զինվոր կերտել, Բաղրամյանը՝ հայի զանգվածից ազգ կերտել, Շահամիրյանը՝ ազգային պետություն:*

Մ. Բաղրամյանի հրապարակախոսական քննարկվող այս ստեղծագործությունը նոր դարագլուխ բացեց ազգային զարթոնքի ու ազգակերտման ասպարեզում: Այն և ազգային շարժման ծրագիր էր, և ազգակերտման ծրագիր ու ազատագրական գաղափարախոսություն:

Ազգային շարժման երրորդ փուլը նշանավորվում է XIX դարի II կեսի կղերաֆեոդալական, լիբերալ բուրժուական և հեղափոխական դեմոկրատական հայ հասարակական հոսանքների ու քաղաքական կուսակցությունների գործունեությամբ:

3.2. Մովսես Բաղրամյանի ազգակերտման հիմնադրույթները

Ազգային ինքնագիտակցության զարթոնքի երկրորդ փուլի տաղանդավոր արարողը Մ. Բաղրամյանն է: Նրա քննարկվող ստեղծագործություններում, կարևորվում է ազգի վերոնշյալ բնական ու սոցիալական հատկանիշները, և *իմաստավորվում դրանցից յուրաքանչյուրը:*

Նվիրական հայրենիքի գաղափարով հայ ժողովրդին միջնադարյան դարավոր թմրության քնից արթնացնելը առաջին կարևոր խնդիրն է դառնում Բաղրամյանի համար:

Բաղրամյանի XVIII դարում հայտնագործած հայոց հայրենիքը հայ ժողովրդի ապրելատարածքն է, որ պատմական հայրենիքի մեծ գաղափար է դարձել հազարամյակների ընթացքում, որի ընթացքում այն պատվել է հայ ժողովրդի ստեղծած պատմամշակութային, ազգագրական ու ճարտարապետական հուշարձաններով, նախնիների սրբագործած գերեզմաններով: Հայոց հայրենիքը Բաղրամյանը,

հետևելով Մովսես Խորենացուն, ներկայացնում է իբրև մի ընտրյալ երկիր իր Արարատով, Նախիջևանով, դրախտի չորս գետերով և դրանց հետ կապված նվիրական ավանդազրույցներով, որոնք վկայում են, որ աստված առաջնություն է տվել այդ երկրին, դարձնելով նրան հետջրհեղեղյան մարդկության առաջին օրրանը:

«Աշխարհասույզ պատուհասից հետո նախ մեր երկիրն էր,
որ ճանաչվեց իբրև սկիզբ բոլորի մեջ,
Որի համար, ինչպես դշխո, և համորեն երկրների
գլուխ ու մայր նա անվանվեց,
Այդ ամենի հաստատումն է այն, որ տեղն, ուր
թաղվեց մայրը ընդհանրական՝ Նոյեմզարան,
Մինչև այսօր Մարանդ կոչվեց, իսկ գավառն այդ
գտնվում է մեր երկրում»[148]:

Հայտնի է, որ ըստ ջրհեղեղի մասին բիբլիական առասպելի հայկական տարբերակի Նոյի կինը՝ Նոյեմզարը, թաղված է Վասպուրականի Մարանդ գավառում: Մարանդը բացատրվում է «մայր է անդ», այսինքն հայոց ընդհանրական մայրը գտնվում է այնտեղ: Այստեղ մայր հայրենիքի գաղափարը Մովսես Բաղրամյանի մոտ ազգակերտման համապարփակ խորհրդանիշ է դարձել: Այդ նվիրական հայրենիքը տարածված է Կասպից ծովից մինչև Կորդվաց լեռները և Վիրքից մինչև Ասորեստան: Ներկայացվում են Պարսկաստանի մեջ մտնող Մեծ Հայքի ինը գավառները և Թուրքիայի մեջ մտնող տասնմեկ գավառները: Որպես հայկական 16, 17, 18 նահանգներ ներկայացվում է Փոքր Հայքի գավառները: Հայոց 19-րդ նահանգը՝ Կիլիկիան, 20-երորդը՝ Հայոց Միջագետքը: Եվ այս Հայաստանը աշխարհասփյուռ հայության իրական հայրենիքն է:

Բաղրամյանը, սակայն, ցավով նշում է, որ հայ ժողովուրդը հայրենազրկվել է, կորցրել է մայր հայրենիքի մեծ գաղափարը, զրկվել նաև պատմական հիշողությունից ու դարձել անդեմ ամբոխ:

«Բայց մեր հայրենակիցներից ոմանք,– շարունակում է Բաղրամյանը,– որոնք բնակություն են հաստատել Եվրոպայում կամ հեռավոր այլ երկրներում,– ...թերևս փափագ ունենան և ցանկանան հասու լինել, իմանալ, թե այդ ովքեր են, որ այժմ տեր են դարձել մեր բնաշխարհին և իրենց իշխանությանը ենթարկելով, հանապազ քա-

[148] Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, Եր., 1991, էջ 27:

շում, ժողովում են մեր երկրի առատ ու ճոխ պտուղն ու բարիքը…»[149]:

Շատ ուշագրավ ու տպավորիչ հաշվարկով հայրենիքից գանձվող հարկերը հասցնում է ֆանտաստիկ ու գայթակղիչ այնպիսի թվերի, որոնք կարող են ճոխության ու ապահովության մեջ պահել հայ ժողովրդին:

Անծայրածիր ու անսպառ հայրենիքով հայությանը ոգեշնչելուց հետո Բաղրամյանը կարևորում է հայ ժողովրդի աստվածային ծագման գաղափարի շուրջ հայությանը համախմբելու գաղափարը:

«…Մենք…նպատակամղվեցինք ազգակիցներիս պատմել մեր Արարատյան երկրի մասին, Հին կտակարանով, այսինքն՝ Աստվածաշունչ մատյանով, և հնոց պատմություններով հաստատել, որ նա մայրն է եղել բոլոր երկրների, իսկ նրա բնակիչները՝ ծնողը ողջ մարդկության, և որ բոլոր ազգերն ու ցեղերը ամեն մեկն իր երկիրն է ցրվել այնտեղից, բացատրելու ենք նաև, թե երբ և ինչ ցեղից սերեցին ու առաջ եկան մեր հսկաներն ու նախահայրերը, թագավորներն ու իշխանները»[150]:

Այնուհետև նա համառոտ ներկայացնում է թե ինչպես, XIV դարի 30-ական թվականներին հոգևարք ապրող մոնղոլական տիրապետությանը փոխարինելու են գալիս թուրքմենական զանազան ցեղեր, իսկ XVI դարի սկզբից մինչև XVII դարի 30-ական թվականների վերջերը, կարճատև ընդմիջումներով, Հայաստանը ռազմական թատերաբեմ է դառնում Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև:

Թուրք-իրանական արյունահեղ ընդհարումները Հայաստանի տարածքում և Հայաստանի համար ավարտվում են նախ 1555 թվականի, ապա՝ 1639 թվականի պայմանագրերով, որոնցով Հայաստանը բաժանվում է երկու մասի: Արևմտյան մասը անցնում է Թուրքիային, Արևելյանը՝ Իրանին: Պարսկաթուրքական տիրապետության այս ժամանակահատվածը՝ XVI–XVIII դարերը, հայ ժողովրդի պատմության ամենամռայլ ու մղձավանջային ժամանակաշրջանն էր:

Այս ծանրագույն ժամանակաշրջանում անգամ Հայաստանը իր նվաճողների համար հանդիսանում է բնական հարստությունների անսպառ աղբյուր:

Աշխարհի երկրորդ ծնունդը կապելով Նոյ Նահապետի հետ և

---

[149] Նոր տետրակ…, էջ 105:

[150] Նոր տետրակ…, էջ 55:

հայ ժողովրդին սերելով նրանից, Բաղրամյանը այնուհետև ներկայացնում է հայ ժողովրդի ներքին, արքայական ու ազնվական տների ծագումնաբանությունը, տոհմածառը, սկսած Նոյ Նահապետից մինչև Կիլիկիայի վերջին՝ Լևոն Վեցերորդ թագավորն ու Ղարաբաղի վերջին մելիքները՝ Մելիք Ադամը, Մելիք Հովսեփը, Մելիք Եսային, Մելիք Շահնազարն ու Մելիք Միրզախանը: Այսպիսով, Բաղրամյանը փաստորեն ստեղծում է միասնական, ամբողջական ցեղական ու արյունակցական, մեկ ընդհանուր հորից սերված հայ միասնական ժողովրդի գաղափարը:

Ստեղծված համազգային հուսալքման այս ծանր շրջանում շարադրելով անցյալի պատմությունը, Բաղրամյանը ձգտում է իր ժամանակակից հայի մեջ անցյալի մեծագործությունների շարադրանքով վերականգնել ազգային հպարտությունն ու միասնության գիտակցությունը: Կապելով հայ ազգի սկզբնավորումը Ս. Գրքի հետ, ծագեցնելով հայերին Հաբեթի ցեղից, նա ձգտում է հայ ազգի համար ժամանակակից հայերի աչքում ստեղծել պատվավոր տեղ մյուս հին ու արժանապատիվ ազգերի շարքում:

Հայագիտության պատրաստի այս հանրահայտ նյութերի շարադրանքով Բաղրամյանը ձգտում էր հիմնավորել, որ տոհմացեղային վաղնջական միություններից մինչև ժամանակակից ազգը ոչ միայն մշակութային, այլ նաև արյունակցական տեսակետից էլ անընդմեջ է եղել: Սա նշանակում է, որ Բաղրամյանը ձգտում է ցույց տալ, որ *նոր ժամանակի հայը, լինելով որակապես մի նոր երևույթ,* այնուամենայնիվ նա մի պատմական ամբողջություն է՝ նախնադարյան, միջնադարյան և նոր հայը նույնն են էթնիկական տեսակետից: Բաղրամյանի համար դա հնարավոր եղավ այն պարզ պատճառով, որ հայ ժողովուրդն ուներ լիարժեք և անընդմեջ ազգային կյանքի պատմություն, մշակույթ, որը XVIII դարում թևակոխել էր մի նոր, ազգայինի անցման և քաղաքակիրթ մշակույթի անցման փուլ:

Ազգի հոգեկան կերտվածքը հանդիսանում է ազգային առանձնահատկությունների որոշակի կողմը, առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են յուրաքանչյուր ազգի բնապատմական զարգացման ընթացքով: Ազգի հոգեկան կերտվածքը յուրաքանչյուր ազգի գիտակցության մեջ, նրա կյանքի յուրօրինակ պայմանների արտացոլումն է, տվյալ ազգային ընդհանրության անդամներին հատուկ մտածողության և գործողության եղանակների ամբողջությու-

նը: Ժողովրդին շրջապատող հասարակական ու բնական միջավայրը որոշակիորեն ներգործում են նրա հույզերի, աշխարհընկալման ու պատկերացումների վրա:

Պատմության փիլիսոփայությունը անհերքելի փաստերով ապացուցում է, որ յուրաքանչյուր արժեք ձեռք է բերվել միայն որևէ ազգի պատմական հողի վրա: Հայ ազգի ընդհանրական հոգեկերտվածքի ձևավորման գործոնները երկուսն են՝

- Ազգի պատմական ճակատագիրը, որն իր հերթին էապես պայմանավորված է եղել նրա աշխարհագրական դիրքով,
- սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող արմատական տեղաշարժերը:

Հայ ժողովրդի ճակատագիրը, պատմական հանգամանքների բերումով, իր ծագման վաղնջական ժամանակներից եղել է սեփական գոյատևման և ինքնության պահպանության համար օտարների դեմ մղված մի չընդհատվող պայքար, որն իր ցայտուն արտացոլումն է գտել իր ծագումնաբանական առասպելներից սկսած մինչև նորօրյա հերոսավեպերն ու ժողովրդական զրույցները:

Բաղրամյանի այս նշանավոր աշխատության մեջ բացահայտվում են հայ ազգի հոգեկերտվածքին բնորոշ գծերը ոչ թե ժամանակից ու տարածությունից դուրս, այլ հայ ժողովրդի գոյության կոնկրետ փուլում, զարթոնքի փուլում: XVIII դարի հայի հոգեկան կերտվածքը նրա բարդ ու իրարամերժ կյանքի յուրօրինակ պայմանների արտացոլումն է, տվյալ պահին թմրության քնի մեջ գտնվող ժողովրդին հատուկ մտածողության ու գործունեության եղանակների ամբողջությունը: Դիմելով հայ հոգևորականներին, Բաղրամյանը նշում է, որ հայրենիքի ճակատագրի պես բարդ է հայ մանուկի խառնվածքը, ուստի նրան ոչ թե պետք է պարսավել կամ անիծել, այլ կրթել նրա ստրկացված ոգին: Այդ առիթով նա գրում է.

«Իսկ որքան որ մենք ճանաչում ենք հայ ազգին,
մեր մայր հողի բնակիչները չափազանց տաքարյուն են,
Որի պատճառը կամ երկրի ճակատագիրն է, կամ թե չէ ամեն մեկի
բնակավայրը, որոնցից և ձևավորվում է խառնվածքը մարդկային,
Ու ըստ այդմ էլ ոմանք՝ արի, իսկ ոմանք էլ հեգ են, իրենց
տեսքից ընկած՝ նման բախտին հայրենիքի,

Եվ անընտել ու անուսում էլ կմնան, եթե սիրով դուք չսփոփեք
ու հովվություն չանեք ի սեր ապագայի»[151]:

Բաղրամյանի ներաշխարհի վրա մեծապես ազդել են զանգվածային պանդխտությունը, հալածանքը, հայրենազրկությունը, անջատման ու կարոտի ծանր զգացումները: Հայը ոչ միայն իր երկիրը ներխուժած բռնակալների յաթաղանից է տուժել, այլ նաև նրանից, երբ ժողովուրդն իր սեփական երկրում ապրել է գերի և իրավազուրկ, աղքատ ու պատվազուրկ. «Ուրեմն խոհեմությամբ ուշք դարձրեք դուք,– ով հայոց երիտասարդներ, և նայեք մեր հայրերի ու ծերունիների վախկոտությանը, որոնք, հոժարակամ հաշտվել են, որ իրենց զավակները այլազգիների իշխանությանը ենթարկվեն: Ահա թե ինչու ոչ կարողանում են հագնել իրենց սիրած զգեստները, հեծել ձի ու երիվար, ոչ էլ կարողանում են իրենց դուստրերի ու կանանց գեղեցկությունն ու շքեղությունն ազատորեն ցույց տալ աշխարհին: Չեն թույլատրում նաև, որ պատանիներն ու երիտասարդները երբևէ հիայտ բերեն իրենց արիությունն ու քաջությունը, որով, թերևս, ճանաչման ու հռչակի արժանանալով՝ նրանց անուններն ազգերի ու սերունդների մեջ հիշվեն,– այլ երիտասարդ և պիտանի ժամանակը նեղում են (նրանց պահելով) մեղավորի պես գլխիկոր և ծառայի պես ձեռքը ծալած»[152]:

Մարդկային մշակույթի անհամաչափ զարգացումը վկայում է, որ հասարակության մեջ սոցիալ-տնտեսական ու քաղաքական բեկումնային պահերին, ազգային *առաջավոր գործիչների ջանքերով* կարող են որակական փոփոխություններ կրել նաև ազգային հոգեկերտվածքի դրսևորումները: Իբրև միջնադարից նոր դարին անցման շրջանի խոշորագույն գործիչ, Բաղրամյանը եռանդուն պայքար է մղում առկա տխուր իրավիճակի դեմ և ձգտում փառավոր անցյալի և լուսավոր ապագայի մեջ ստեղծել հզոր կապ, մշակում առաջընթացի իրական ու հուսալի մայրուղի:

Բաղրամյանը մի կողմից ամփոփում, խտացնում է նախորդ դարերի հոգևոր արժեքների գիտակցումը, մյուս կողմից հիմք դնում նոր աշխարհայեցողության, ապագա հայի ու Հայաստանի հայեցակարգի մշակման: Դարաշրջանի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը և

---

[151] Նոր տերակ..., էջ 52:

[152] Նոր տետրակ..., էջ 163:

քաղաքական աղետները առաջ էին բերել համազգային զարթոնքի անհրաժեշտություն, բացահայտելու ժողովրդի դարերով կուտակած հոգևոր լիցքն ու մտավոր կարողությունը:

Բաղրամյանն առաջիններից մեկն էր մեզանում, որ ընկալեց հայ մարդու դարերի փորձն ու հոգու խռովքը, հին ու նոր ցավերը, բարոյական անկումներն ու տագնապները, և ուղենշեց այդ վիճակից դուրս գալու ուղիները:

Հայ միջնադարյան գաղափարաբանությունից կատարելով քաղաքական շրջադարձ, Բաղրամյանը նախապատրաստեց հայ կյանքի ազգային զարթոնքը, որը հանգում էր մի որոշակի նպատակի՝ լուսավորել ու կրթել հայ ազգը, համախմբել նրա ցաքուցրիվ հատվածները և պահպանել ազգի հարատևությունը:

Այսպիսով, տեսնում ենք, որ Բաղրամյանի առաջ ծառացել էր անցյալի արժեքների գնահատման, առկա ծանր կյանքի պատճառների բացահայտման, նոր ձևերի և սոցիալական նոր հարաբերությունների, նոր մարդու, ապագա հայի անհատականության առաջընթացի բացահայտման ու դաստիարակման բարդ խնդիրը:

Ինչպես արդեն նշել ենք, ազգի հանրորոշ հատկանիշների որակական փոփոխություններով է պայմանավորված յուրաքանչյուր նոր հանրույթի ծնունդը: Ժողովրդին (ազգույթին) ազգ են դարձնում նրա կյանքում կատարված տնտեսական, սոցիալական, քաղաքական, և գաղափարախոսական համակարգերում կատարված արմատական փոփոխությունները: Մ. Բաղրամյանի քննարկվող աշխատությունում բավական ուշագրավ ակնարկներ կան նշված հատկանիշների փոփոխությունների մասին՝ XVIII դարի կտրվածքով:

Ինչպես արդեն նշել ենք, ձևավորվող ազգերը նախորդ հանրույթներից տարբերվում են նախ և առաջ տնտեսական կյանքում կատարվող փոփոխություններով: Տնտեսական կապերի զարգացման և ազգային միասնական շուկայի կազմավորման միջոցով է ճանապարհ հարթվում ազգույթների հետագա համախմբման գործընթացի համար, որի հետևանքով էլ նրանք վերածվում են ազգի: Բաղրամյանը ձգտում է բացահայտել ծլարձակվող նոր հանրույթի տնտեսական կյանքում կատարվող տեղաշարժերը: Պարզվում է, որ Թուրքիայի և Պարսկաստանի տնտեսական կյանքում հայրենազուրկ ու պետականազուրկ հայերը ահռելի դեր են խաղում: Հայ չելեբիներն ու խոջաները Թուրքիայի ու Պարսկաստանի տարածքնե-

րում ու սփյուռքում ներկայանում էին որպես հայ կոմպրադորական բուրժուազիայի նախորդներ, որոնք ունեն հսկայական միջոցներ: Կ. Պոլսի հայաշատ գաղութը սոսկ գաղութ չէր, այլ,– ինչպես նշում է Հ. Սիրունին,– «տեսակ մը հայ աշխարհ հայ հողէն հեռու, որ բազկերակը պիտի դառնար մը հայ կյանքին, երբ ամեն ինչ խամրեր էր հայ հողին վրա»[153]: Պոլսից հետո Թուրքիայի տնտեսական զարգացման մյուս կենտրոնը Զմյուռնիան էր (Իզմիրը), որտեղ նույնպես հայերը տնտեսական մեծ դեր ունեին:

Հայ ժողովրդի տնտեսական կյանքում XVIII դարում մեծ դեր էին խաղում Նոր Ջուղայի, Հնդկաստանի, Ռուսաստանի, Սիրիայի, Բուլղարիայի, Մոլդովիայի և այլ վայրերի հայկական գախթօջախների մեծահարուստները: Համաշխարհային շուկաները նվաճելու մարմանջը հայ կապիտալիստին էլ է բռնել, նրանք էլ են սկսում անգլիացիների, հոլանդացիների, ֆրանսիացիների նման գործել, առևտրական ընկերություններ ստեղծել: Հայ առևտրական բուրժուազիան ոչ միայն իր ձեռքն էր վերցրել Իրանի ու Անդրկովկասի արտաքին առևտրի մենաշնորհը, այլև վճռական դեր ուներ վարկատվության, դրամափոխության, բանկային խոշորամասշտաբ գործարքների բնագավառում: Պոլսի հայ չելեբիները և դրամատերերը նույնիսկ պարտք էին տալիս Օսմանյան պետությանը: Հետագայում նրանք ստեղծեցին սեղանավորների մի խոշոր ընկերություն անատոլիական և ռումելիական մասնաճյուղերով: Առաջինը հավաքում էր Անատոլիայի, երկրորդը՝ Ռումելիայի պետական հարկերը[154]:

Ահա սրանց է դիմում Բաղրամյանը և հաղորդում, որ իրենց այդ հսկայական միջոցները տեղափոխեն մայր Հայաստան և ստեղծեն ձևավորվող ազգի տնտեսական հիմքը: Բաղրամյանի ուշադրությունից չի վրիպում բուն Հայաստանի տնտեսական ռեսուրսների համազգայնացման խնդիրը: Հաշվելով թուրքերին ու պարսիկներին վճարվող հարկերն ու տուրքերը, հայտնաբերում է շոշափելի մի հարստություն, որը լիուլի բավական կլինի հզոր ու ինքնիշխան պետություն ստեղծելու համար:

Ձևավորվող ազգի ընդերքում Բաղրամյանը նշմարում է նաև ազգային կյանքում ծլարձակված սոցիալական նոր կառուցվածքի տար-

---

[153] Էջմիածին, 1963, Ա., էջ 32:

[154] Տես Մասնակի պատմութիւն հայ մեծատուներու 1400-էն 1900, գրեց Յ.Ջ.Մ., Կ.Պոլիս, 1909, էջ 130:

ները և ձգտում նպաստել ու ընթացք տալ այդ նոր ուժերի գործունեությանը: Սոցիալական կառուցվածքը մարդկանց սոցիալական գործունեության կազմակերպման օբյեկտիվ ձև է, հասարակական խմբերի և անհատների միջև փոխհարաբերությունների համակարգ, որն իր մեջ ընդգրկում է բնակչության սոցիալական կազմը, որոշում նրանցից յուրաքանչյուրի տեղը և դերը հասարակության կառուցվածքում: Այն բխում է տվյալ կացութաձևի սեփականատիրական հարաբերություններից: Ուսումնասիրողների մեծ մասը նշում են, որ ազգերը առաջացել են դասակարգային հասարակության զարգացման որոշակի աստիճանում՝ կոնկրետ արդյունաբերական հասարակարգում: Բուրժուազիան կազմավորվող ազգի առաջատար ուժն էր դառնում, նա էր շահագրգռված ազգային կապերի ամրապնդումով, ազգայինի ստեղծումով, ազգային լեզվի տարածումով: Հայ իրականության մեջ քննարկվող շրջանում ծլարձակվում են բուրժուական հարաբերությունների սաղմերը: Ազգային բուրժուազիայի առաջին տարրերը առաջացան միջնադարյան քաղաքացիների դասից, վաշխառուներից, վաճառականներից, համքարային վարպետներից: Ծնունդ առնող բուրժուազիան կարիք էր զգում գործարար մարդկանց, որոնք կարողանային վարել նրանց առևտրական ու վարկային գործողությունները: Այդ անհրաժեշտությամբ է ազգային բուրժուազիայի հետ ծնունդ առնում նրան սպասարկող մտավորականությունը, որն ամենաակտիվ մասնակցությունն է ցույց տալիս նոր մշակույթի ու գաղափարախոսության ստեղծմանը: Երեք դար գաղթօջախներում են ծավալել իրենց գործունեությունը հայ առևտրաարդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչները:

Հայ առևտրա-վաշխառուական բուրժուազիայի կողքին Բաղրամյանը հայ ժողովրդի սոցիալական կառուցվածքում նշմարում է ձևավորվող աշխարհիկ մտավորականներին, հոգևորականներին, արհեստավորներին, որոնցից յուրաքանչյուրը իր տեղն է զբաղեցնում հասարակական կյանքում: Պարտավոր ենք յուրաքանչյուրս իմանալ մեր դիրքի չափն ու աստիճանը, գրում է Բաղրամյանը,– լսել իմաստունի խոսքը, ունկնդրել գիտունների, վարդապետների և ուսուցիչների խորհրդին, մեծարել հանճարեղ ու իմաստուն մարդկանց, ըստ արժանվույն գնահատել արհեստավոր վարպետներին և այլն[155]:

[155] Տե՛ս **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 40:

Ժողովրդի ազգ դառնալու ճանապարհին կարևորվում է հանրային կյանքի կազմակերպման ու կարգավորման իրավաքաղաքական ուղիների հայտնագործման անհրաժեշտությունը:

Բաղրամյանը ուրվագծում է նաև կազմավորվող ազգի քաղաքական կյանքը կազմակերպող պետական կարգի շրջանակները:

Մովսես Բաղրամյանը առաջադրում է դասային-ներկայացուցչական միապետություն ստեղծելու գաղափարը, ըստ որի՝ միապետի իշխանությունը սահմանափակվելու էր դասային-ներկայացուցչական մարմնի, այսինքն՝ տարբեր դասերի՝ հոգևորականության, ազնվականության և ծնունդ առնող վաճառականության օրինախորհրդատու լիազորություններով: «...Իշխանությունը ինչ-որ միմիայն մեկի դատողությանն ու կառավարմանը չպետք է ենթակա լինի,- գրում է Բաղրամյանը,- այլ ամենալավագույնը կլիներ, եթե իշխանությունը անխախտելի սահմանադրությամբ և անեղծանելի օրենքներով կախում ունենար ընտիր-ընտիր ու մեծամեծ խորհրդականներից և տեսակ-տեսակ խորհրդարաններից: Այդ դեպքում միայն իշխանը կարող էր ժողովրդի հանդեպ ամեն մի խղճմտանքից ազատ լինել և երջանկորեն վայելել իր երկիրը, որի շնորհիվ և երկիրը կլիներ խաղաղ ու բարեկարգ վիճակում: Բանն այն է, որ թերևս ընտրյալներից մեկնումեկը սխալվի կամ ինչ-որ հանցավոր գործով տապալվի. (նման պարագայում) մյուսները կարող են նրան փութանակի ուղղել ու ոտքի կանգնեցնել: ...Չէ որ բազմասյուն առաստաղը սյուներից մեկի խորտակվելու դեպքում չի տապալվի, այլ կարող է երկար ժամանակ դիմանալ մինչև նորից կառուցվի: Հակառակ դեպքում իսկ չի բերի այնքան վնաս, որքան մեկ սյան վրա հաստատվածը...»[156]: Նման դասային ներկայացուցչական ժողովները բնութագրական են ֆեոդալական մասնատվածությունից սահմանադրական միապետության անցման դարաշրջանին:

Կազմավորվող ազգերի հետ ծնունդ են առնում ազգային գաղափարախոսության հիմնադրույթների բացահայտման անհրաժեշտությունը: Մ. Բաղրամյանին է պատկանում նաև ձևավորվող հայ *ազգի ազգային գաղափարախոսության սկզբնավորողի* պատիվն ու առաջնությունը:

Մովսես Բաղրամյանի քննարկվող «Նոր տետրակ որ կոչվում է

[156] Նույն տեղում, էջ 132:

հորդորակ» ստեղծագործությունը հանդիսանում է նաև հայոց ազգային գաղափարախոսության առաջին մանիֆեստը:

Ազգային գաղափարախոսության գիտակները տարբեր ձևով են մեկնաբանում հիմնահարցը:

Էռնստ Հասը տարբերակում է ազգայնականության մի քանի տեսակներ.

Ազատական ազգայնականություն, յակոբինյան ազգայնականություն, ավանդական ազգայնականություն, սինկրետիկ ազգայնականություն և ինտեգրալային ազգայնականություն[157]:

Չանդրադառնալով ազգայնականության տեսության հայտնի բոլոր մոտեցումների և ուղղությունների հանգամանալից քննարկմանը՝ նշված հեղինակների ձեռքբերումների հիման վրա էլ կներկայացնենք *Բաղրամյանին՝ որպես հայոց ազգային գաղափարախոսության հիմնադրույթների առաջին մշակողի:*

Ա. Թոյնբին ազգային պետություն կազմելու գաղափարախոսությունը անվանում է ազգայնականություն (նացիոնալիզմ), որը, սակայն, բերում է ավերիչ հետևանքներ[158]:

Ազգայնականությանը ավելի ծայրահեղ բնութագրում է տվել խորհրդային դոկտրինան. «Նացիոնալիզմը գաղափարախոսություն և քաղաքականություն է,– նշվում է խորհրդային քաղաքական հանրագիտական բառարանում,– որը կայանում է ազգային բացառիկության և ազգային գերազանցության պրոպագանդայի մեջ: Այն սերմանում է ազգային ատելություն ինչպես տարբեր երկրների ժողովուրդների, այնպես էլ միևնույն երկրի մեջ ապրող տարբեր ազգերի և էթնոսների միջև: Ըստ միջազգային օրենսդրության, նացիոնալիզմը նշանակում է քաղաքական հանցագործություն և մարդու իրավունքների խախտում: Նացիոնալիզմը հասարակական-քաղաքական բարդ երևույթ է, որը ծնում է բազմաթիվ կոնֆլիկտային իրադարձություններ: Նացիոնալիզմի դրսևորումները ի հայտ են գալիս պատմական հարաբերություններում, մշակույթների, տնտեսական, քաղաքական, ինչպես նաև կրոնական կենսակերպերի տարբերություններում»[159]:

---

[157] **Haas E.,** Beyond the Nation-State- Functionalism and International organization, Stanford University Press, 1964, էջք 465-466:

[158] **A. J. Toynbee**, A Study of history, vol. 8, , L.-N. Y.-Toronto, 1955, էջ 295:

[159] Политология, Краткий энциклопедический словарь, М., 1997.

Էրիկ Հոբսբաումը և կառուցուղական մոտեցման այլ կողմնակիցներ ազգայնականության մեջ տեսնում էին բացառապես կամ կառավարող խմբի, կամ էթնիկական էլիտայի դասային շահերի արտացոլումը: Ըստ այդ հիմնադրույթի, պրովինցիոնալ մտավորականները, որոնք ի վիճակի չեն հաջող մրցակցել աշխատանքի շուկայում գերիշխող խմբի ներկայացուցիչների հետ, հորինում են ազգայնականությունը, որպեսզի իրենց ցեղակիցների օգնությամբ ապահովեն իրենց համար հատուկ և հուսալի սոցիալական ծածկոց: Այս տեսակետը ավելի հստակ է ձևակերպել ամերիկացի քաղաքագետ Պոլ Բրեսը. «Էթնիկականությունը և ազգայնականությունը «տրվածություն» չեն, այլ սոցիալական և քաղաքական կառույցներ են,– գրում է նա,– նրանք ստեղծվել են Էլիտաների կողմից, որոնք օգտագործում, աղավաղում և երբեմն էլ կեղծում են այն խմբերի մշակութային նյութերը, որոնց նրանք ձգտում են ներկայացնել, որպեսզի պաշտպանեն նրանց բարեկեցությունը կամ գոյությունը, կամ էլ հասնեն քաղաքական ու տնտեսական առավելությունների իրենց ու իրենց խմբի համար»[160]:

Ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ գոյություն ունի ազգայնականության առավել տարածված երեք մոտեցում. 1) այն դիտվում է որպես ռոմանտիկական շարժում, 2) որպես պատասխան ռեակցիա գաղութատիրությանը և 3) որպես կապիտալիզմի անհամաչափ զարգացման արդյունք, որը ծնում է խոր հակասություններ առանձին տարածաշրջանների միջև:

Հասարակագետների մեծ մասը գտնում են, որ նացիոնալիզմը, իր բոլոր կիրառական բարդություններով հանդերձ, ունի հետևյալ ընդհանուր հատկանիշները.

1) հիմնված է այն պահանջի վրա, որ կառավարվողները և կառավարողները պետք է ունենան մշակութային նույնականություն,

2) մշակութային ազգայնականությունը ձգտում է պահպանել կամ վերականգնել ազգային ժառանգությունը և հող նախապատրաստել քաղաքական ազգայնականության համար, որը ձգտում է ինքնության:

3) ազգայնական գաղափարախոսությունը շատ հրապուրիչ է ճնշված խավերի համար,

---

[160] **Brass P.**, Etnicity and Nationalism. Theory and Comparision, New Delhi Newbury Park /Cal.//, 1991, էջ 18:

4) XX դարում ազգայնականությունը զուգորդվում էր երրորդ աշխարհի հասարակությունների ապագաղութացման և տնտեսական զարգացման հետ, ինչպես նաև կապիտալիստական հասարակություններում տարածաշրջանային հավասարության համար մղվող պայքարի հետ[161]:

Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ ազգայնականությունը նվիրվածություն և լոյալություն է դեպի իր ազգը[162], ոմանք էլ գտնում են թե այն մտածելակերպ է, գաղափար է, որը մարդկանց մղում է կազմակերպված գործողությունների[163]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց ազգային գաղափարախոսությունը որպես համակարգված դոկտրինա և աշխարհայացք, որի շրջանակներում տիրապետողը ազգային արժեքների բացարձակ գիտակցումն է, մինչև Բաղրամյանը իր ամբողջական սահմանումը չուներ: Բայց դա ամենևին չի նշանակում, թե հայ իրականությունը մինչ այդ անգաղափար ու աննպատակ զանգված էր, զուրկ համաժողովրդական իդեալներից: Այստեղ ցանկանում ենք ընդգծել, որ ինչպես ազգն է երկարատև զարգացման բարդ գործընթացի արդյունք, այնպես էլ ազգային գաղափարախոսությունը՝ նույն գործընթացի հետևանք: Վերջինս համընդհանուր ճանաչում ստացած երևույթ դարձավ բուրժուական հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, XVIII դարում:

Հայտնի է, որ մարդկային հասարակության բոլոր հանրույթների սահմանազատված մակարդակներում տիրապետող է եղել որոշակի գաղափարախոսություն: Տոհմատիրական հասարակարգից սկսած մինչև ժամանակակից ազգերի ձևավորումն ընկած ճանապարհի բոլոր որակական փուլերը՝ տոհմը, ցեղը, ժողովուրդը և ազգը միմյանցից տարբերվել են ինչպես իրենց տնտեսությամբ, սոցիալական կառուցվածքով ու քաղաքական համակարգով, այնպես էլ գաղափարախոսությամբ: Այսինքն, մարդկանց հանրույթների բոլոր փուլերում մարդիկ համախմբվել են նաև առանձնահատուկ, ընդհանուր

---

[161] **Abercrombie N.**, **Hill S., Turner B. S.,** The Penguin Dictionary of Social Sciences, London, 1988, էջ՝ 162-163:

[162] **Havens T. R. H.**, Nationalism /Kondasha Encyclopediaof Japan/, 1983, Vol.5, էջ 342:

[163] **Kohn, Hans**, The Idea of Nationalism. Macmillan, New York, 1945, էջք 18-20:

գաղափարների շուրջ: Հայկական լեռնաշխարհի բնիկները դեռևս տոհմատիրական հասարակարգում ունեցել են իրենց գաղափարախոսության նախնական տեսակները՝ տոտեմիզմի տեսքով: Նախնադարյան մարդու գիտակցության մեջ առաջ էին եկել այն պարզունակ գաղափարները, թե տոհմը սերել է որևէ կենդանուց կամ բույսից, որն էլ դարձել է տվյալ տոհմին աշխարհ բերող նախասկիզբը և դարձել ընդհանուր ծագում և ընդհանուր տնտեսություն ունեցող մի խումբ մարդկանց միևնույն գաղափարի շուրջ համախմբող գործոն: Տոհմը կոչվել է պաշտվող տոտեմի անունով: Այսպիսով տոտեմիզմը դարձել է յուրաքանչյուր տոհմի հավաքական աշխարհընկալումը, որին պաշտում ու պահպանում էին բոլոր տոհամկիցները: Տոտեմիզմը, սակայն որպես քարեդարյան երևույթ, վերարտադրող տնտեսակարգում, ձևավորվող ցեղային հանրույթի միջավայրում կորցնում է իր հասարակական ուժը: Երկրագործության ու անասնապահության զարգացման վրա ձևավորված նոր հանրույթը՝ ցեղը, ձեռք է բերում նոր աշխարհընկալում: Տարերքի խուլ ուժերի դեմ անօգնական մարդը անխուսափելի փորձանքները բացատրելու և կանխելու համար բնությունը լցնում է սեփական երևակայությամբ ստեղծված գերբնական ոգիներով: Այդ գաղափարները պարզունակ, նախատրամաբանական մտածողության արդյունք էին, որոնցով էլ ցեղային հանրույթը ձգտում էր համախմբել ցեղակիցներին, բացատրել իրենց շրջապատող բնական և հասարակական երևույթները[164]:

Անցումը նախնադարից՝ ցեղային միություններից ժողովուրդների կազմավորմանը, ուղեկցվում է դիցաբանական մտածողությունից փիլիսոփայական և կրոնական մտածողության անցումով: Մարդիկ այդ նոր գաղափարների առկայությունը սկսում են ծառայեցնել ձևավորվող ժողովուրդների նպատակների իրականացմանը: Նոյ Նահապետ, Հայկ և Բել, Տիգրան և Աժդահակ և այլ առասպելները դառնում են կազմավորվող հայ ժողովրդին համախմբող գաղափարներ: Փաստորեն, կազմավորվող հայ ժողովրդի ձևավորվող գաղափարախոսության հիմքում, այդ առասպելներով դրվում են երեք ելակետային գաղափարներ.

- զտարյուն, արարչի կողմից արարված ժողովուրդ լինելու գաղափարը,
- տեղաբնիկ լինելու, աստծու կողմից դրախտի վերածված Հա-

[164] Տես **Խ. Սամուելյան**, Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1931, էջ 275:

յաստանի, հայրենի հողի ու ջրի տերը լինելու գաղափարը,

- ազգային պետականության, պետական մտածողության ու ազգային բարձր արժանապատվության գաղափարը[165]:

Պարզվում է որ հայ ժողովուրդը, դեռ շատ վաղ ժամանակներում ստեղծել է ոչ միայն գաղափարախոսական որոշ համակարգ, որն իր ակունքներում մեսիական բնույթ ուներ, այլև այդ համակարգն արտահայտող տերմինաբանություն:

Ագրարային հարաբերությունների զարգացման որոշակի փուլում, որպես հայ ժողովրդին համախմբող գաղափարախոսություն շատ է կարևորվում քրիստոնեությունը:

Հայտնի է, որ համաշխարհային քրիստոնեությունը առաջինը պետական գաղափարախոսություն դարձավ Հայաստանում: Դրա հիմնական պատճառն այն էր, որ հայ ժողովրդի գոյությանը մեծ վտանգ սպառնացող Պարսկաստանում, Սասանյանների կողմից պաշտվող հեթանոսական կրոնը՝ զրադաշտականությունը, քիչ էր տարբերվում հայկական հեթանոսական կրոնից: Հայոց ընտրանին զգալով, որ հայկական հեթանոսական գաղափարախոսությունն անզոր էր պատնեշ կանգնել զրադաշտականության դեմ, քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն որպես հայ ժողովրդի էթնոպաշտպան գաղափարախոսություն: Սակայն, երբ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց հունա-հռոմեական աշխարհում, և հիմա էլ սրանք էին քաղաքականապես նվաճված Հայաստանում ձուլողական քաղաքականություն վարում, քրիստոնեությունը հայ ժողովրդի համար կորցնում է համահայախմբման գործառույթը: Ահա այս նոր պայմաններում էր, որ անհրաժեշտություն զգացվեց ստեղծել Արևմուտքի ոտնձգությունները կասեցնող գաղափարախոսություն: Այս կարևոր խնդրի լուծման հիմքում դրվեց համաշխարհային քրիստոնեության ազգայնացման և արևմտյանից դրա տարանջատման գաղափարը: Հայ ժողովուրդը 506 թվականին, Դվինի ժողովում, երբ ավելի էր սաստկանում արևմուտքի ճնշումը, մերժում է նրանց կողմից ընդունված Քաղկեդոնի ժողովի դոգմաները և ընդունում Քրիստոսի միաբնակության դոգման: Երկաբնակության մերժումով հայ ժողովուրդը փաստորեն ազգայնացրեց քրիստոնեությունը, և վերա-

[165] Տե՛ս **Հ. Մանուչարյան**, Հայության գոյապահպանության գաղափարախոսությունը, Եր., 1994, էջ 34:

կանգնեց նրա հայ ժողովրդին համախմբող գաղափարախոսության գործառույթը:

Տեսական-դավանաբանական պայքարին զուգընթաց մշակվեց նաև ազգային ծիսական արարողությունների համակարգ:

Գաղափարախոսության այս դրսևորումները տիպիկ միջնադարյան երևույթներ էին, բնորոշ ագրարային հարաբերություններով ապրող ժողովուրդներին:

Հայ իրականության մեջ նույնպես ագրարային հարաբերություններից արդյունաբերականին անցման շրջանում սկսում են ձևավորվել նոր հանրույթին՝ ազգին, անցման և նրա գլխավոր հատկանիշներից մեկի՝ ազգային գաղափարախոսության ձևավորման գործընթաց: Ահա այս մեծ գործի, հայոց ազգային գաղափարախոսության հիմնադիրն էր Մովսես Բաղրամյանը:

Ազգային գաղափարախոսությունը տեսական համակարգ է, հիմնախնդիրների, հայացքների ամբողջություն, որն արտահայտում է ազգի, նրա սոցիալական առանձին խավերի շահերը, նրա վերաբերմունքը տարբեր քաղաքական ուժերի ու արտաքին աշխարհի նկատմամբ: Ազգային գաղափարախոսությունը ազգի քաղաքական գործունեության հոգևոր և ինտելեկտուալ հիմքն է, որի նպատակն է առաջադրել վեհ գաղափարներ, արմատավորել դրանք ազգի գիտակցության մեջ և կազմակերպել դրանց իրականացման գործընթացը: Ազգային գաղափարախոսությունը մտածելակերպ է, գաղափար, որը մարդու ուղեղը և սիրտը լցնում է կենսունակ մտքերով ու զգացումներով, դրդում մարդուն կազմակերպված գործողություններ[166], տիրապետելով զանգվածներին դառնում հզոր նյութական ուժ:

Ազգային գաղափարախոսությունը համընդհանուր ճանաչում ստացած երևույթ դարձավ XVIII դարում բուրժուական հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց:

Նվաճված ու ճնշված ազգերն աշխատել են իրենց գաղափարախոսությամբ հիմնավորել իրենց գոյության ու ազատության իրավունքները, այդ իսկ պատճառով նրանք հանդես են եկել որպես ազգայնական գոյապահպանության գաղափարախոսություն, իսկ «ազգայնականությունը,– գրում է Անտոնի Դ. Սմիթը,– գաղափարական շարժում է՝ նպատակամղված ազգի ինքնիշխանության, միաս-

[166] **Kohn, Hans.** The idea of nationalism, Macmillan: New York 1945, էջք 18-20:

նության և ինքնության պահպանմանը»[167]:

Ինչպես տեսնում ենք անցումը էթնիկական-ժողովրդական զգացումներից ազգայինի տեղի ունեցավ հայկական սփյուռքում:

Հայոց ազգայնականությունը այս փուլում դրսևորվեց մշակութային ոլորտում, իսկ մշակութային ազգայնականությունը ձգտում է պահպանել ու վերականգնել ազգային արժեքները, հող նախապատրաստել *քաղաքական ազգայնականության* համար, որը հետամուտ էր համազգային ինքնաճանաչման, ինքնահամախմբման և ինքնազատագրման իրականացմանը: Բաղրամյանը հայոց ազգային գաղափարախոսության հիմքում դնում է հենց այս երեք հիմնարար գաղափարները՝ *ինքնություն* (*ինքնաճանաչում*), *ինքնահամախմբում* (ազգային միասնություն) *և ինքնազարգացում* (ազգային ազատագրություն):

Ինքնությունը, Բարրի Բյուզանի բնորոշմամբ, «այն է, որի հիման վրա մարդկանց խումբն իրեն վկայակոչում է որպես ամբողջություն, այսինքն՝ որպես «մենք»: Հասարակության ցանկությունը և կարողությունը՝ պահպանել լեզվի, մշակույթի, միասնականության, կրոնի և ազգային ինքնության ու սովորույթների ավանդական ազգային նմուշները»[168]:

Ազգային ինքնությունը ենթադրում է ազգային մտածողություն, ինքնատիրապետություն, ինքնաճանաչում:

XVIII դարի հայությունը արդյոք ճանաչու՞մ է ինքն իրեն, գիտե՞, թե ով է ինքը, որտեղից է գալիս և ու՞ր է գնում, արդյոք հայությու՞նը ինքնաճանաչ է՝ հարցին Մովսես Բաղրամյանը բացասական պատասխան է տալիս՝ գտնելով, որ ինքն իրեն ճանաչելու համար ազգը պետք է որոշակի գիտելիքներ ունենա իր մասին, այլապես.

«Այսպես հավետ ու հարատև վտանգվելով՝ հալածանքի
Ու փորձության մեջ կմնանք,
Մինչև որ մեր թշվառությունը, ավերվելն ու տառապանքը
Գիտակցել կարողանանք»[169]:

Այդ վիճակից դուրս գալու համար է, որ Բաղրամյանը հորդորում է հայ ծնողներին, կրթեն ու մարզեն իրենց որդիներին, հետամուտ

---

[167] **Անտոնի Դ. Սմիթ**, Ազգային ինքնություն, Նևադա, 1991, էջ 74:

[168] Միջազգային հարաբերությունների արդի տեսությունը, Եր., 2001, էջ 245:

[169] Նոր տետրակ..., էջ 16:

լինեն գիտության և իմացության.

«Եվ մանավանդ թող արվեստին ազատական տիրապետել
Միշտ ցանկանան,
Որովհետև օտարների լծից նրանք ի վիճակի են ազատվել
այդ միջոցով,
…Ազատական արվեստն այն է, որ հարատև ունենում ես
համակ եռանդ արիության»[170]:

Բաղրամյանի ազատական արվեստը ռազմահայրենասիրական համակարգված կրթությունն է: Նրա հորդորների հասցեատերը հայ պատանին է, հայոց կորովամիտ ու դեռափթիթ մանուկը, որի մեջ հավատ ու արժանապատվություն սերմանելու համար նա դիմում է հայոց պատմության փառահեղ դրվագների օգնությանը: Անցյալի իմաստավորումը սակայն, զուտ ճանաչողական փաստ չէ: Պատմական հիշողությունն ընդունում և պահում է իր մեջ այն, ինչի համար ազգային ինքնագիտակցությունն իր վրա պատասխանատվություն է վերցնում: Ազգային ինքնությունը Բաղրամյանի կարծիքով, հայ ազգի հազարամյակներով կուտակված ազգային ոգու ինքնագիտակցումն է:

Բաղրամյանը քաջ գիտակցում է, որ պարսկա-թուրքական լծից Հայաստանի ազատագրումը և անկախ պետություն ստեղծելու կարևորագույն պայմանը նախ հայրենիքի գոյի գիտակցումն է, որից հետո նրա իրական տերերի մարդկային, նյութական ու ոգեղեն ներուժի բացահայտումն ու համախմբումն է: Տրամաբանորեն առաջադրվում է ազգային գոյապահպանության երկրորդ գործոնը՝ ինքնահամախմբումը: Ինքնահամախմբման բնատուր ընդունակությունից է կախված յուրաքանչյուր ազգի կենսունակությունն ու հարատևությունը: Ինքնահամախմբման բնազդով է կենդանական աշխարհից տարանջատվել մարդը և ապրել յուրայինի հետ: Մարդիկ համախմբվում են մեկ ընդհանուր գաղափարի՝ ընդհանուր ծագման, ընդհանուր հայրենիքի, ընդհանուր լեզվի և հոգեկերտվածքի ընդհանրության շուրջ: Հենց այս գիտակցումով ավարտելով հայոց պետականության պատմությունը, Բաղրամյանը ներկայացնում է հայոց դրախտային հայրենիքը, համայն հայության հայրենիքը, կից տարածքներով: Ազգի ներքին տրոհվածությունը առանձին սոցիալա-

[170] Նոր տետրակ…, էջ 45:

կան խմբերի, տարբեր պետությունների, քաղաքակրթությունների, գաղթաշխարհի կրկնակի խնդիր է դնում Բաղրամյանի առաջ:

«Միասնություն հասկացությունը,– նշում է Անտոնի Դ. Սմիթը,– ունի նաև պարզ և ավելի քողարկված ազգայնական նշանակություն: Պարզագույն մակարդակում դա նշանակում է ազգային տարածքի կամ հայրենիքի միացում, եթե նա բաժանված է, և բոլոր ազգակիցներին հավաքում նույն տարածքում: Նույնիսկ այստեղ ազգականները փիլիսոփայական գաղափար են ներկայացնում: Հայրենիքից դուրս ապրող ազգակիցները համարվում են «կորած» ու այն հողերը, որտեղ նրանք են բնակվում, հատկապես հայրենիքին սահմանակիցները, համարվում են «չվերադարձված» և պետք է դրանք վերադարձնել ու «փրկել»: Սա ծնում է ազգայնական այնպիսի շարժում, ինչպիսին է «իռենդենտիզմը»[171], այսինքն՝ ազգային շարժում, որի նպատակն է տարանջատված ժողովուրդների ու ազգերի միավորում, նախկինում կորցրած տարածքների վերամիավորում:

Պարզ է, որ թվապես, տեխնիկապես, նյութապես հայ ժողովուրդը չի կարող ուժեղ լինել իր հակառակորդ հարևաններից: Սակայն ուժը միայն նյութական ազդակները չեն: Այստեղ կարևորվում է ինքնահամախմբման գործոնը: Ինքնահամախմբման կարողությունն ու բարոյական ուժն է գոտեպնդում փոքրաթիվ ժողովուրդներին ինքնազատագրման մեծ պայքարում: «Ինչպես որ միատեղ հավաքված հարյուր կամ հիսուն տղամարդու մեջ ավելի զորություն և ուժ է լինում,– գրում է Բաղրամյանը,– քան հազարների մեջ, որոնք միմյանցից հեռու են ու անջատ, նույնպես և սովորաբար միշտ էլ ավելի հզոր է որևէ փոքրիկ ազգ կամ ցեղ, որ միաբան է, քան թե անսեր ու անմիաբան մեծ ազգը»[172]:

Բաղրամյանի կարծիքով, չկան ուժեղ ու թույլ ազգեր: Կան ինքնաճանաչ ու համախմբված ազգեր, որոնք անկախ են ու ինքնիշխան, և կան անգիտակից ու անմիաբան ազգեր՝ գերեվարված ու վտանգված:

Ինքնաճանաչողությունը և ինքնահամախմբումը պայմանավորում են ազգի ինքնազատագրումը:

Ինքնազատագրումն է միակ ելքը,– ընդգծում է Բաղրամյանը,–

---

[171] Անտոնի Դ. Սմիթ…, էջ 76:

[172] Նոր տետրակ…, էջ 104:

դրսի հույսերը ապարդյուն են: «Ու ահա մոտ չորս հարյուր տարի է, որի ընթացքում թեպետ մեր նախնիներն ու առաջնորդները մերթ ընդ մերթ դիմեցին քրիստոնյա հզոր դրացիներից շատերին՝ մեր տառապանքներին հարեհաս լինելու համար, սակայն մինչև օրս ոչ ոք մեզ սատար չեղավ ու ձեռք չմեկնեց, օգնության չհասավ...»[173]:

Մեծ արհավիրքների ենթարկված ժողովրդից բազմակի ջանքեր են պահանջվում վերականգնելու հոգու կորովը: Նա սխալ ըմբռնում ունի պատերազմի և խաղաղության մասին:

«Գուցե իրենց հայրենիքի համար մեռնելն համարում
են տարապարտու՞ց,
Եվ կարծում են, թե բոլորը զոհվելու են,
ով պատերազմ գնա և մա՛ռտ տա թշնամուն,
Չեն հասկանում, որ թիվ չկա, ոչ էլ հաշիվ նրանց, որոնց
առանց կռվի անագորույն մեր ոսոխները դարձրին սրի ճարակ,
Մինչ կոտորված մարդկանց մի մասն էլ բավական էր ոչ միայն
իրենց, այլև երկիրը մեր ազատելու:
Արդ, ավելի լավ կլիներ, եթե, ուրեմն, ազգի մի մասը
հանուն իր ազգի տար, –
Որով և ազգը ամենայն, փարթամացած ու ճոխացած,
կարողանար ըստ փափագի ազատ-արձակ պայծառանալ»[174]:

Ինքնազատագրման գաղափարը, այսպիսով, Բաղրամյանը հանգեցնում է ընդհուպ ինքնազոհության գաղափարին:

Ահա Բաղրամյանի առաջադրած այս երեք կարևոր հիմնադրույթները՝ ազգային ինքնության-ինքնաճանաչման, ինքնահամախմբման ընդունակության և ինքնազատագրման կարողության գաղափարները դարձան հայոց ազգային գաղափարախոսության կարևորագույն անկյունաքարերը, որոնց վրա բարձրացավ ու ամբողջացավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման տաճարը XIX–XX դարերում:

[173] Նոր տետրակ..., էջ 164:

[174] Նոր տետրակ..., էջ 36:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ

4.1. Հայաստանի ազատագրության հիմնախնդիրը XVIII դարում

Իր ցեղի ազատագրության համար պայքարը սկզբնավորվել է մարդկային հասարակության առաջացման արշալույսին: Պատմության վաղ շրջանում թույլ էթնոսները հեռանում էին ներազդման աղբյուրներից՝ ավելի հզոր հարևաններից: Հետագայում, երկրագնդի բնակեցման խտացմանը զուգընթաց, նման լուծումները դառնում էին անհնարին: Դա ստիպում էր գտնել ներազդմանը հակադրվող կենսական նոր միջոցներ: Այդպիսի միջոցներից էին. ազգային լեզուն, գիրն ու գրականությունը, կրթությունը, ազգապահպան գաղափարախոսությունը և հատկապես՝ ազգային հուսալի ինքնապաշտպանության համակարգված մեխանիզմների ստեղծումը: Բազում հազարամյակներում ժողովուրդների մղած անթիվ ու անհամար պատերազմների զարդն ու գոհարները ոչ թե վաչկատուն ցեղերի աշխարհակործան ասպատակություններն են եղել, այլ փոքրաթիվ ժողովուրդների մղած ազատագրական անհավասար պատերազմները:

Ազատագրության համար մղած հավերժական պատերազմները, որպես երկարատև, մասշտաբային ու փոխակերպող գործընթացներ, որակական նոր փուլ են թևակոխում XVII–XVIII դարերում, ժամանակակից ազգերի ձևավորման և բուրժուական մեծ հեղափոխությունների դարաշրջանում: Դրանք իրենց արտացոլումը գտան եվրոպական լուսավորական, կրթական, պատմամշակութային, իրավական, գաղափարախոսական տեսությունների ու պրակտիկ գործունեության մեջ:

Նվաճված ու ճնշված ժողովուրդները ազգային-ազատագրության անհավասար պայքարին նախապատրաստվում են երկար ժամանակ, մշակում ազատագրության տեսություն, ռազմավարություն ու մարտավարություն:

Հասարակական գիտակցություն թափանցած սեփական ազգի իրավունքների պաշտպանության գաղափարն, այս դարաշրջանում իշխող է դառնում հանրային կյանքի բոլոր ոլորտներում:

Հայոց ազգային ազատագրական պայքարի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն ծավալվում է ոչ թե մեկուսի, լոկալ միջավայրում, այլ այնպիսի տարածաշրջանում, որտեղ խաչաձևվում են մի քանի գերտերությունների շահերը, որով նրա միջազգայնացումը դառնում է անխուսափելի: Խաղի մեջ մտած տերությունները բացահայտ կամ քողարկված ձգտում են հակամարտությունների ընթացքը դիմորոշել իրենց օգտին:

XVIII դարում հայ ժողովուրդը գտնվում էր ոչ միայն երկու տերությունների՝ Թուրքիայի ու Պարսկաստանի ծանր լծի տակ, այլև հայտնվում հզորացող Ռուսաստանի և Եվրոպական տերությունների հակամարտությունների ոլորտում:

Աշխարհաքաղաքական նման աննախադեպ զարգացումները ստիպում են, որ ազգային-ազատագրական պայքարի քաղաքականության կերտման ժամանակ հաշվի առնվեն ոչ միայն համաշխարհային ուժային բևեռների, այլև շահագրգիռ բոլոր երկրների շահերն ու դիրքորոշումները, ում հետ դաշնակցելու, որ ճամբարին հարելու, ինչպիսի փոխհարաբերություններ հաստատելու դաշնակիցների ու մրցակիցների հետ հիմնախնդիրները: Արտաքին տարաբնույթ վտանգներից հայ ժողովրդի կենսական շահերի պաշտպանության ուղիների որոնումը այս հախուռն տեղաշարժերի դարաշրջանում առաջին պլան է մղվում: Այն վեր է ածվում համակարգային հասկացության, հիմնված ազգային կյանքի կայունության պահպանման, ինքնակազմակերպման, ինքնահամախմբման սկզբունքների վրա, և միտված է առաջին հերթին պաշտպանել հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու հոգևոր հիմքերը և, ի վերջո ազատագրել հայրենիքն ու ստեղծել ինքնիշխան պետություն:

Որքան բարդանում են հայրենիքում ստրկացված ու աշխարհով մեկ սփռված հայության ազատագրական շարժման ուղիները մշակող գործիչների առջև ծառացած խնդիրները, այնքան տարաբնույթ ու երբեմն էլ, իրարամերժ են դառնում ազատագրական շարժման առաջարկվող ծրագրերը: Տարբեր ժամանակահատվածներում ու տարբեր վայրերում ապրող, տարբեր քաղաքական ուժերը ներկայացնող գործիչները տարբեր ձևով էին ընկալում իրավճակը և առա-

ջադրում տարբեր ծրագրեր:

Այդ ծրագրերի, ամենից գնահատելի կողմը թերևս այն է, որ նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր հայտնագործել դեռևս անհայտ մի ուղի, վերլուծել բոլոր հնարավոր տարբերակները և առաջադրել ազգին ծանրագույն իրավիճակից դուրս բերելու և դեպի փրկություն տանելու ուղիներ: Այլ կերպ ասած, որքան էլ տարաբնույթ լինեին այդ մոտեցումները, այնուամենայնիվ նրանք լրացնում էին միմյանց և կազմում ամբողջական ազգային ազատագրության համընդհանուր գաղափարաբանություն: Այստեղ թեև մեր խնդիրն է քննարկել Մ. Բաղրամյանի մշակած ծրագիրը, սակայն հարկ ենք համարում համառոտ ներկայացնել XVIII դարում տարբեր քաղաքական ուժերի ու գործիչների առաջադրած ծրագրերը, որոնց բաղդատական վերլուծությամբ էլ վերհանել Բաղրամյան մտածողի ծրագրի առանձնահատկություններն ու առավելությունները:

Դեռևս 1645–1669 թվականներին Կրետե կղզում մղվող պատերազմը Վենետիկյան հանրապետության և Օսմանյան կայսրության միջև նոր հույսեր ներշնչեց թուրքահպատակ քրիստոնյաներին՝ թոթափելու օսմանյան լուծը:

Վենետիկը, պապական Հռոմը և Ֆրանսիան ձգտում էին այդ պատերազմին տալ համաքրիստոնեական խաչակրաց արշավանքի տեսք, ներգրավելով նաև Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին, մասնավորապես թուրքահպատակ հույներին, հայերին ու ասորիներին[175]: Արձագանքելով այս իրողությանը, 1663 թվականին Սսի Խաչատուր Գաղատացի կաթողիկոսը Լյուդովիկոս XIV թագավորին կոչ էր անում իր ձեռքը վերցնել քրիստոնյաներին ազատագրելու գործը: Իսկ Բաղիշեցի առևտրական Խոջա Մուրատը Լյուդովիկոս XIV-ին հավաստիացնում էր, թե հայերը և հույները պատրաստ են միացյալ ուժերով ապստամբելու և Ֆրանսիայի կողմից նախընտրած անձնավորությանը գահակալ հռչակելու: Այս փուլում Հայաստանի ազատագրության հույսը կապվում էր նվաճողական նպատակներ հետապնդող եվրոպական պետությունների հաջողությունների հետ:

Հռոմի և եվրոպական մյուս պետությունների միջամտությամբ Հայաստանը ազատագրելու միտքը ոգևորել էր նաև Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին, որը 1677 թվականին Էջմիածնում հրավիր-

[175] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 4-րդ, Եր., 1972, էջ 122:

ված ժողովում որոշել էր պատվիրակություն ուղարկել Հռոմ և հնազանդություն հայտնելու պայմանով օգնություն խնդրել նրանցից:

Իսկ երբ Թուրքիայի նվաճողական ձգտումներին դիմակայելու համար 1684 թվականին Ավստրիան, Լեհաստանն ու Վենետիկը կազմակերպեցին հակաթուրքական «Սրբազան» լիգան, Արևելքում գործող իրենց միսիոներների միջոցով սկսեցին քարոզել, թե իբր նրանք նպատակ ունեն օգնելու հայերին և վրացիներին՝ ազատագրվելու թուրքական լծից: Հայ քաղաքական շրջանները, հավատ ընծայելով արևմտաեվրոպական երկրների այս հավաստիացումներին, ակտիվ բանակցությունների մեջ մտան նրանց հետ: Ահա համաշխարհային պատմության այս բեկումնային պահին էր, որ ասպարեզ իջավ հայ ազգային-ազատագրական շարժման խոշորագույն գործիչներից մեկը՝ Իսրայել Օրին:

Եվրոպայում կազմավորված հակաթուրքական դաշնությունը և դրա մեծ հաջողությունները՝ թուրքական զորքերի ջախջախումը Յան Սոբեսկու, Պետրոս Մեծի և Եվգենի Սավոյացու կողմից, փաստորեն դրեցին համաշխարհային պատմության այն դարաշրջանի հիմքերը, որոնք նպատակամղված էին մասնատել Թուրքիան, որը հետագայում կոչվելու էր Արևելյան հարց, արմատական մի հարց, որի շուրջը պտտվելու էր համաշխարհային պատմությանը հաջորդող մի քանի հարյուրամյակներում, իր շրջապտույտի մեջ առնելով նաև հայ ժողովրդի ճակատագիրը:

Նոր պատմության այս ընթացքը կերտողների՝ Հռոմի պապի, Պետրոս Մեծի, Ավստրիայի Լեոպոլդ կայսրի և այլ հզորների հետ էր անմիջականորեն առնչվում Իսրայել Օրին Հայաստանի ազատագրության իր ծրագիրը մշակելիս: Նախադեպը չունեցող մի հանդուգն ու խոհեմ քայլ էր այս, որով Հայաստանը փրկելու աղերսանքները Օրին դարձրեց համաշխարհային ներհակ ուժերը Հայաստանի ազատագրության գործին ծառայեցնելու գիտականորեն մշակված ու դիվանագիտորեն հիմնավորված ծրագիր: 1699 թվականին Իսրայել Օրին մշակում և 1700 թվականին Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին է ներկայացնում Հայաստանի ազատագրության ծրագիրը, որը հայտնի է «Պֆալցյան ծրագիր» անունով[176]: Այն բաղ-

[176] Բնագիրը տես **Լեո**, Երկեր. հ. 3, էջ 48-63: Հմմ. **Эзов Г. А.**, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898:

կացած է 36 կետից, որով ծրագրվում էր կազմակերպել եռյակ դաշինք Ավստրիայի, Պֆալցի և Տոսկանիայի մասնակցությամբ և Հռոմի պապի աջակցությամբ; Արևմտաեվրոպական խաչակրության բնույթ ունեցող այս արշավանքին Կյուրֆուրստը պետք է տրամադրեր 1000 հեծյալ զինվոր, 1000 դրագոններ, որոշ քանակությամբ այլ անհրաժեշտ զորատեսակներ ու զինամթերք:

Ծրագրվող արշավանքը պետք է սկսվեր 1700 թվականի մայիսին: Մշակվում է արշավանքի երթուղին, հաշվարկվում ծախսերը, հստակեցվում հայերի ցույց տրվելիք օգնության չափը, հիմնավորվում համաքրիստոնեական միասնական ճակատի ստեղծման գաղափարն ու անհրաժեշտությունը: Իսրայել Օրու մշակած այս ծրագիրը նմանը չունի հայոց ազգային-ազատագրական շարժումների նախորդ հազարամյակներում: Նրա հիմնական խնդիրն էր եվրոպական մի իշխանի համոզել, որ Հայաստանի թագը ձեռք բերելը այնքան էլ դժվար չէ, այն ընդամենը 20–25 օրվա գործ է: Բանակցություններ սկսելով Հովհան Վիլհելմի հետ, Օրին համոզված էր, որ թուրքերի դեմ ծավալված ռազմական հաջողությունները, նրանց կրած 1683 և 1697 թվականների ծանր պարտությունները կարող են նպաստել իր հակաթուրքական ծրագրի իրականացմանը: Սակայն շուտով Օրին զգաց, որ ավստրիացիների թուրքերին տված ջարդը որքան նպաստեց եվրոպացիների ոգևորությանը, այնքան նրա արդյունքը՝ 1699 թվականի Կարլովիցի պայմանագիրը, որով թուրքերը վտարվեցին Եվրոպայից, խանգարեց այդ ծրագրի իրագործմանը, որովհետև այդ դեպքերից հետո եվրոպական երկրները այլևս կարիք չունեին արևելքի քրիստոնյա ժողովուրդների աջակցությանը: Ինչպես նշում է Ա. Հովհաննիսյանը, «Որչափ Հաբսբուրգյան քաղաքականության խնդիրների միջից հանվում էր «Թուրքական վտանգի» մտահոգությունը, գերմանական կայսրի համար Հայաստանի ազատագրման խնդիրը պիտի կորցներ իր նշանակությունն ու այժմեականությունը»[177]:

Հայ ժողովրդի ազատագրության հույսը մնում է Ռուսաստանը, որը նպատակ ուներ Թուրքիայի ու Պարսկաստանի հաշվին ընդար-

---

Տես, **Աշոտ Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Եր., 1959:

[177] **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ… հ. 2-րդ, էջ 411:

ձակել իր հարավային սահմանները: Այս իրավիճակը ըմբռնելով, մեծ դիվանագետ-քաղաքագետ Իսրայել Օրին 1701 թվականին ուղևորվեց Ռուսաստան: Ժամանելու նպատակն էր խնդրել ցարին, որ իր ձեռքը վերցնի Հայաստանի ազատագրության գործը: Կազմվեց մի նոր ծրագիր, որը հայտնի է «Մոսկովյան ծրագիր» անունով: Եթե Պֆալցյան ծրագրի իրականացման համար չկար եվրոպական որևէ կոնկրետ երկրի շահագրգռությունը, այստեղ ակնբախ է Հայաստանի և Ռուսաստանի քաղաքական շահերի համընկնման փաստը: Այս ծրագրում ակնկալվում էր Ռուսաստանի աջակցությունը, առաջին պլան է մղվում Իսրայել Օրին՝ որպես այդ գործի կազմակերպիչ ու առաջնորդ: Ռուսաստանի օգնության դիմաց Սյունիքի հայ մելիքները խոստանում են հնազանդություն, այնպես, ինչպես ռուսահպատակ մյուս իշխանները: Ռուսաստանը պետք է տրամադրեր 25 հազարանոց բանակ, որին միանալու էին հայ և վրաց ապստամբները: Համատեղ ուժերով ազատագրելու էին Արևելյան Հայաստանը: Հայ-ռուսական համագործակցության Օրու ծրագրում այնուհետև նշվում է ռուսական բանակին հայերի ցույց տրվելիք ռազմական ու տնտեսական օգնության մասին:

Թեև Օրին գծագրեց Հայաստանի ազատագրության իրական այն նախաշավիղը, որով քայլելու էր հայ ժողովուրդը մի ամբողջ հարյուրամյակ, մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, սակայն կյանքը ցույց տվեց, որ հայ ժողովուրդը այդ ծրագրով ոչ թե իսկական ազատություն է ձեռք բերելու, այլ միայն տիրապետող լուծն է փոխվելու:

XVIII դարում Հայաստանի ազատագրության մի նոր ծրագիր մշակեց և դրա իրագործմանը իր կյանքը նվիրեց Հովսեփ Էմինը: Առաջնորդվելով այն սկզբունքով, որ հայ ժողովուրդը ոչ միայն գայթակղիչ գաղափարների ու ծրագրերի, այլև այն իրագործող կազմակերպված ու վարժված բանակի կարիք ունի:

Մոտիկից ծանոթանալով հայ ժողովրդի կենցաղին՝ նա համոզվեց, որ խավարի ու տգիտության մեջ խարխափող ժողովուրդը չի կարող ստեղծել վարժված, գրագետ ու մարտունակ բանակ: Այս անհրաժեշտությամբ հանգեց ազգը կրթելու և լուսավորելու գաղափարին, դրանով իսկ դառնալով նաև մեծ լուսավորիչ:

Էմինը ծրագրում էր հայերից ու վրացիներից ստեղծել եվրոպական տիպի բանակ և նրա միջոցով ու Ռուսաստանի օգնությամբ,

ազատագրել հայերին ու վրացիներին և ստեղծել հայ-վրացական միասնական պետություն:

Բնական է, որ այս պայմաններում տիրապետող քաղաքական իրավիճակն է Հայաստանի ազատագրության ծրագիր կազմող Էմինի ուշադրության կիզակետ բերում Վրաստանին: «Պարսից թույլ քայքայվող պետության մեջ,– նշում է Լեոն,– Հերակլը երևան է գալիս իբրև քաջ պատերազմող և մի բախտավոր շրջան է բերում իր բազմատանջ հայրենիքի համար…

Հերակլը՝ քրիստոնեության պաշտպան, ամբողջ մահմեդական արևելքում միակ ուժեղ և ընդունակ քրիստոնյա վեհապետն էր»[178]: Բացի դրանից, վրաց թագավորության գերակայությունը ճանաչում էին Երևանի, Ղարաբաղի, Նախիջևանի, և Գյանջայի Պարսկական խանությունները, որոնց բնակչությունը գերազանցապես հայեր էին: Հայ-վրացական հարաբերությունները XVIII դարում ձևավորվում էին ինչպես բուն Վրաստանում՝ ժողովուրդների բազմաբնույթ հարաբերությունների հիմքի վրա, այնպես էլ բուն Հայաստանում ու տարածաշրջանում՝ վրաց իշխանների ունեցած առնչությունների ոլորտում: Հայազգի գործիչները, և հատկապես Հովսեփ Էմինը հաճախ ընդգրկվում էին Վրաստանի արտաքին հարաբերությունների ձևավորման ոլորտ և իրականացնում վրաց արքունիքի դիվանագիտական բանակցությունների վարումը այլ պետությունների, և հատկապես՝ Ռուսաստանի հետ:

Միանգամայն ակներև է, որ XVIII դարի II կեսի հայ-վրացական պետության ստեղծման հնարավորության հարցը և վրաց Բագրատունիներին հայոց թագավոր ճանաչելու ձգտումները հայ-վրացական երկարատև հարաբերություններին ուղեկցող գաղափարի արդյունք էր: Ռուսաստանը ինչպես XVIII դարի առաջին քառորդում, այնպես էլ դարի վերջին քառորդին հմտորեն օգտագործում էր մահմեդական լծի դեմ հայ-վրացական համագործակցության հնարավորության հիմնահարցը և անկախություն ձեռք բերելու երազանքը: XVIII դարի II կեսի առանձնահատկությունն այն էր, որ Ռուսաստանի կողմից Վրացիների նկրտումներին Հայաստանի տարածքի նկատմամբ բավարարում տալու միջոցով շահելու վրացի և հայ գործիչների օժանդակությունը՝ Հարավային Կովկասում իր տիրապետությունը հաստատելն էր:

---

[178] **Լեո**, երկեր, հ. 5, էջ 533:

Հայ-վրացական համագործակցությամբ զինված պայքարով Հայաստանի ազատագրության Էմինի ծրագիրը նույնպես չիրականացավ, որովհետև ուժերը խիստ անհավասար էին: Հերակլը չէր կարող մեծ ռիսկի դիմել ու անհավասար պայքարի մեջ մտնել Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ, իսկ Ռուսաստանը դեռևս սպասում էր հարմար պահի:

Ազգային-ազատագրական պայքարի ծրագրի մշակման, ազգապահպան գաղափարների ստեղծման և նրանց կյանքի կոչման համար ծավալած պրակտիկ գործունեության ասպարեզում, XVIII դարում մեծ ավանդ է ներդնում նաև Շահամիր Շահամիրյանը: Նրա երկու մեծարժեք աշխատություններում[179], հայ-ռուսական դաշնագրերի երկու նախագծերում[180], ժամանակի աչքի ընկնող հայ և օտարազգի գործիչներին հղած նամակներում[181] արծարծվում են Հայաստանի ազատագրության բազում հիմնախնդիրներ, ինչպես նաև մշակվում ազատագրվելիք Հայաստանի ժողովրդավարական հանրապետական կարգերի հաստատման սահմանադրության նախագիծ:

Թուրք-պարսկական լծից Հայաստանի ազատագրության հարցը Շ. Շահամիրյանը ներկայացնում է առավել ամբողջական հնարավորությունների հաշվարկով: Հիմնախնդիրը Հ. Էմինի նման կապում է մի կողմից Վրաստանի հետ համագործակցության, մյուս կողմից Ռուսաստանի աջակցության հետ: Բացի դրանից, նա ձգտում էր Հայաստանի ազատագրության խնդիրը դարձնել համազգային գործ, ազգային-ազատագրական պայքարին մասնակից դարձնել ժողովրդական զանգվածներին: Ազգի համախմբման գործում Շահամիրյանը կարևորում է արտերկրի հայության դերը, որը պետք է նաև իր կապիտալը տեղափոխեր մայր հայրենիք: Որպես հայրենիք վերադարձող արտերկրի հայության ժամանակավոր հանգրվան և ուժերը շտապ համախմբելու վայր, Շահամիրյանը մատնացույց է անում Հայաստանին մոտիկ Ղզլարը:

Ազգային ներուժի հաջորդ կարևորագույն օղակը Շահամիրյանը համարում է Արցախի մելիքություններին: Նրանք պետք է վերա-

---

[179] Տես Որոգայթ փառաց, Եր., 2002: Նշաւակ, Մադրաս, 1783:

[180] Տես Նշաւակ և Դիվան հայոց պատմության, գիրք Դ:

[181] Տես **Պ. Չոբանյան**, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Եր., 1981: Դիվան հայոց պատմության, գիրք Ը, մաս երկրորդ, Թիֆլիս, 1908:

կանգնեին հայոց պետականությունը, որի տնտեսական ու ռազմական հզորությունը պետք է օգտագործվեր բովանդակ Հայաստանի ազատագրության համար:

Չբավականանալով միայն ազատագրության ծրագիր մշակելով, Շահամիրյանն ուղղակի բանակցություններ է սկսում վրաց թագավորի հետ և խորհուրդ է տալիս նրան՝ օգտվել Պարսկաստանում տիրող քաղաքական անկայուն իրավիճակից, համախմբել հայ-վրացական ուժերը և ազատագրել նախ Արևելյան Հայաստանը, ապա՝ Արևմտյանը:

Հայ-վրացական համագործակցությունը գործնական հիմքի վրա դնելու նպատակով Հերակլ 2-րդին նվեր է ուղարկում ոսկե շքանշան զարդարված թանկարժեք քարերով: Իսկ Հերակլը 1768 թվականին վրաց իշխանի տիտղոս է շնորհում Շահամիրյանին, այնուհետև որպես ժառանգական կալվածք՝ նվիրում Լոռին:

Հովսեփ Էմինը իր հուշերում նշում է, որ Շահամիրյանի նախաձեռնությամբ միավորվում են Մադրասի մյուս հայ մեծահարուստ վաճառականները և որոշում Էմինին հատկացնել տարեկան 12 հազար ռուպի, Հայաստանում մի քանի զորախումբ պահելու համար[182]:

Այսպիսով, Ըստ Շ. Շահամիրյանի, Հայաստանը պետք է ազատագրվեր հայ-վրացական փոխշահավետ դաշնակցության և Ռուսական օժանդակության ճանապարհով: Ազատագրվելուց հետո հայ ժողովուրդը միշտ պետք է երախտագիտությամբ հատուցեր Ռուսաստանի փրկարար օգնության դիմաց:

Հայաստանի ազատագրության հաջորդ, որոշ հետաքրքրություն ներկայացնող ծրագիրը մշակեց ռուսահայ առևտրական Մովսես Սարաֆյանը[183]: Ըստ այս նախագծի՝ վրացական թագավորներ Հերակլը և Սողոմոնը պետք է Ռուսական բանակային կորպուսի օժանդակությամբ պայքարեին թուրքերի դեմ: Միաժամանակ, Ռուսաստանում ազդեցիկ հայերից մեկի գլխավորությամբ պետք է կազմակերպվեր զինվորական խումբ, բաղկացած վրացիներից և հայերից, և ռուսական կորպուսի հետ ուղևորվի Վրաստան: Այնուհետև Ղարաբաղի Մելիքների աջակցությամբ պետք է գրավեին Երևանը, որից հետո կպայքարեին Իրանի ու Թուրքիայի դեմ, տեղի հայերի աջակցու-

---

[182] Տե՛ս Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, Պեյրութ, 1958, էջ 455:

[183] Տե՛ս **Иоаннисян А.**, Иосиф Эмин, Ер., 1945, էջք 269-274:

թյամբ: Ինչպես տեսնում ենք, Սարաֆյանը և նրա համախոհները Հայաստանի ազատագրության գործում նույնպես կարևորում էին Ռուսաստանի և Վրաստանի օգնության պարագան:

Բնական է, որ թուրք-պարսկական դաժան լծի տակ հեծող հայ ժողովուրդը այլ հույսեր ունենալ չէր կարող: Այդ օգնությունը հայ գործիչները դիտում էին որպես կարևոր միջոց հայ ժողովրդին հույս ներշնչելու և ազատագրական պայքարի դուրս բերելու համար: Այսուհանդերձ, ակնհայտ է, որ հայ գործիչների մշակած այս հայտնի միջոցներին ու ազատագրության ծրագրերին Ռուսաստանը ուշադրություն էր դարձնում հայերին ռազմական տեսակետից օգտագործելու նպատակով: Դրա համար էլ նրանք խուսափում էին պարզ պատասխաններից՝ տալով ընդհանուր, սպասողական ու անորոշ խոստումներ միայն: Նրանց աղոտ ակնարկները հայերի համար «իշխանություն ինչ» նորոգելու մասին, կամ Հայաստանի անկախության երազանքների հանդեպ տված լակոնական «կարելի է» պատասխանը, – ինչպես իրավացիորեն նկատում է Թ. Ավդալբեգյանը, լցնում էր ժամանակակից հայերի սիրտը խնդությամբ ու մեծ հույսերով, հոգեկան ու քաղաքական եռուզեռի մեջ ձգելով նրանց Հնդկաստանից մինչև Սյունիք ու Վաղարշապատի մենաստանից մինչև հյուսիսի մայրաքաղաքը:

Հոգեբանական տեսակետից շատ ուսանելի է,– շարունակում է անվանի հետազոտողը,– որ ոչ միայն այն ժամանակվա հայերը, այլև նույնիսկ 100 տարի հետո հայոց պատմությունն ուսումնասիրողը (պրոֆ. Լեոն – Մ.Դ.) անգամ կարդալով Արղությանի «Օրագրության» համապատասխան տողերը՝ պատրանքի մեջ է ընկնում, որոշ ու պարզ խոստում տեսնում այնտեղ, որտեղ միայն մշուշապատ արտահայտություններ կան արձանագրված[184]:

Ահա այս համատարած մոլոր մտայնության միջավայրում է, որ ասպարեզ է իջնում Մովսես Բաղրամյանը իր ազգային-ազատագրության հիրավի հեղափոխական ծրագրով:

---

[184] Տես **Թ. Ավդալբեգյան**, Հայ ազատագրական շարժման երկու հոսանք XVIII դարի վերջում, «Հայագիտական հետազոտություններ», Եր., 1969, էջ 215:

4.2. Հայաստանի ազատագրության Մովսես Բաղրամյանի ծրագիրը

Հայ ազգային-ազատագրական շարժման տեսաբաններից առաջինը Մովսես Բաղրամյանն էր, որ հերքեց դրսի անշահախնդիր օգնության գաղափարը և հիմնավորեց, որ յուրաքանչյուր նվաճված ժողովուրդ ինքը պետք է իր որդիների արյան գնով ազատագրի հայրենիքը, ինքը պետք է ջանքեր թափի, միջնադարյան թմրության քնից զարթնեցնի և լուսավորության ու կրթության միջոցով ստեղծի քաղաքացիական ազգ, աճեցնի ազգին համախմբող ու պայքարի տանող ընտրանի, ստեղծի ազատագրության տնտեսական հիմք, մշակի ազատագրական պայքարի գիտականորեն հիմնավորված ռազմավարություն ու մարտավարություն:

Բաղրամյանը նաև այն նշանավոր գործիչն էր, որ ազգային-ազատագրության խնդիրը կապեց սոցիալական վերափոխումների խնդրի հետ, ցույց տվեց, որ քաղաքական անկախությունը անհրաժեշտ նախադրյալ է ստեղծում համազգային կենսական խնդիրների լուծման, հանուն սոցիալական առաջադիմության պայքարի համար: Նա նոր ուղիներ է բացում հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական հետամնացության վերացման, ժողովրդի մարդկային ու նյութական վիթխարի ռեսուրսների օգտագործման, ժողովրդին սովից ու աղքատությունից փրկելու համար:

Հայ ժողովրդին, որին թուրքերն ու պարսիկները պահում էին պատմության ետնաբեմում, Բաղրամյանը տեսականորեն դարձրեց քաղաքական հզոր ուժ:

Բաղրամյանը առաջինը նկատեց, որ ստրկացված հայ ժողովրդի ազատագրումը սերտորեն կապված է բուրժուական հասարակական հարաբերությունների հաստատման հետ, հարաբերություններ, որոնց արդյունքում ձևավորվեց հենց ինքը, մարդկային էթնիկական հանրույթի բարձրագույն տեսակը՝ ազգը:

Ազգային-ազատագրական համաեվրոպական շարժումը նույնպես բուրժուական հարաբերությունների առաջացման արդյունք էր: Հայտնի է, որ նվաճված ժողովուրդների ազատագրելու և ինքնուրույն պետություն ստեղծելու իրավունքի գաղափարը առաջնային դարձավ XVIII դարի լուսավորական գաղափարախոսության մեջ և

մարմնավորվեց Հյուսիսային Ամերիկայի անկախության պատերազմում և ֆրանսիական մեծ հեղափոխությամբ:

Արևմուտքում այդ շարժումը ուղեկցվում էր ցնծությամբ: Օրինակ, երբ Հյուսիսային Ամերիկայի անգլիացիները ապստամբություն սկսեցին՝ մայր հայրենիքից անջատվելու և անկախություն ստանալու համար, Անգլիայում ազատասիրությունը թևակոխեց մի նոր աստիճան, որի կենտրոնում կանգնած էին պետական հայտնի գործիչներ, գրողներ, որոնք ոչ թե դատապարտում էին ապստամբներին, այլ պաշտպանում էին նրանց՝ հանուն մարդկային ազատության գաղափարի: Ըստ Առնոլդ Թոյնբիի, Արևմուտքում ազգայնական շարժումը մեղմ էր ընթանում այն պատճառով, որ այդ երկրներում ազգայնական շարժումներն ուղեկցվում էին քաղաքական սահմանաբաժանման հստակ վիճակով, այսինքն, XVIII դարի վերջին նրանք կազմում էին տարածքային միասեռ զանգվածներ, որոնք էլ դառնում էին կազմավորվող ազգային պետություններ:

Բայց երբ «ազգայնականության մոլուցքը» շարժվեց դեպի արևելք, ապա ի հայտ եկավ, որ ազգայնական իդեալը տարբերվում է «Ժամանակակից քարտեզագրական փաստերից»: Եվ սա էր, որ աղետներ բերեց, ասում է Թոյնբին և դիմում հայերի օրինակին[185]:

Իակ արևելքում ինչպես նշում է Բաղրամյանը, – արդեն մոտ 400 տարի է, ինչ գերության դատապարտված հայ ժողովուրդը անորոշ դեգերում է և նույնիսկ ազատություն չի փափագում: Նույնիսկ այդ վիճակը բնական համարելով, իր սրտում ցավ չի զգում, կտտանքներից ու տանջանքներից վիատված: Իրենց ծուլության ու հուսահատության պատճառով շատ խոշտանգումներ են տանում, կարծելով թե դրանով հնազանդության աստվածային պատվիրաններն են կատարում, գտնելով որ իրենց չարչարանքների պատճառը իրենց կատարած մեղքերն են[186]:

Ահա այսպիսի կարգավիճակ և տրամադրություն ունեցող ժողովրդին է ձգտում ոտքի հանել Բաղրամյանը: Բնականաբար նրանից պահանջվում է ուժերի բարձրագույն լարում, տիրապետող իրականության գիտական ու հիմնավոր բացահայտում, ազատագրու-

---

[185] Տես **Հ. Գևորգյան**, Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Եր., 2005, էջ 395:

[186] Տես **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 30:

թյան պայքարի ձեռնոց նետող ժողովրդի ուժերի գերագույն ակտիվացում և շարժման ընդհանուր վերելքի ոգու ապահովում:

Մարդկության պատմությունը հարուստ է բազում ազգերի ազատագրության օրինակներով: Եթե մենք էլ նրանց հետևենք,– գրում է մեծ հայրենասերը,– մեզ համար էլ դժվար չի լինի ազատագրվել օտարների լծից, ուստի, հարգարժան հայեր, այդ ամենը տեսնելով ձեր որդիներին ու դուստրերին սովորեցրեք, որ հեռու մնան տաղտկալի կյանքից և ինչ հնար ունեն որոնեն ազատության ուղիները: Հենց մեր ժամանակներում, մեր աչքի առաջ համախմբվեցին ու փրկվեցին շատ ազգեր, ինչպես, օրինակ՝ իսպանացիներն ու պորտուգալացիները: Իսկ ռուսները անհայտությունից բարձրացան և աշխարհակալ տերություն դարձան:

«Ու ոչ թե ինչ-որ հրաշքով ու սքանչումով կամ այլոց
աջակցությամբ ու օգնությամբ,
Այլ շնորհիվ վերնախնամ նրանք իրենք արիացան,
մարտնչեցին և փրկվեցին (տիրողներից)»[187]:

Ուրեմն,– շարունակում է Բաղրամյանը,– եկեք մենք էլ նրանց նման մի կամք դարձած, պայքարենք մեր կեղեքիչների դեմ, մեր հույսը մեր և մեր աստծո վրա դնելով:

Բաղրամյանը քաջ գիտակցում է, որ նման իրավիճակում գտնվող ժողովուրդները հեշտությամբ չեն ձեռք բերում ազատություն: Ազատության համար մղվող անհավասար պայքարը համեմատում է երկունքի մեջ գտնվող կնոջ ցավերին ու տառապանքներին ու եզրակացնում, թե այդ անհուն ցավերից հետո մանկանը տեսնելով ինչպես մայրն է բերկրանք ապրում, այնպես էլ ազգը կապրի իր ազատությունը տեսնելով[188]:

Ահա թե ինչու են քաջամարտիկ ու աննկուն տղամարդիկ նախընտրում մինագամից զոհվել որպես նահատակներ, քան ամեն օր, հազար անգամ բաց աչքերով մահը տեսնել: Որովհետև նրանք մտածում են, որ սովորական մահկանացուներ են, և ավելի լավ է քաջի մահով մեռնել, քան ստրուկի պես ապրել:

---

[187] **Մ. Բաղրամյան**, նշվ աշխ., էջ 31:

[188] Տես **Հ. Մանուչարյան**, Հայկական լիբերալիզմի սկզբնավորումը և պահպանողականությունը, «Քաղաքագիտության հարցեր», Եր., «Մանկավարժ» հրատ., 2011, էջ 148-152:

Երանի թե, – փափագում է մեծ հայրենասերը, – մեր ազգն էլ մի օր անձը հայրենիքին նվիրաբերող նահատակի մնան խորհեր: Գուցե իրենց հայրենիքի համար զոհվելը անիմաստ են համարում, կարծելով թե բոլորը զոհվելու են անհավասար կռվում: Նրանք չեն հասկանում, որ թիվ ու հաշիվ չկա նրանց, որոնք թաքստոցներում ու փախուստի ճանապարհին սրի ճարակ են դառնում: Մինչդեռ նրանց մի մասն էլ բավական էր, որ իր արժանապատիվ մահով կարողանար ազատագրել իր հայրենիքը:

«Արդ, ավելի լավ կլինի, եթե, ուրեմն, ազգի մի մասը
կյանքը հանուն իր ազգի տար,
Որով և ազգը ամենայն, փարթամացած ու ճոխացած,
կարողանար ըստ փափագի ազատ-արձակ պայծառանալ»[189]:

Ոչ մի ազգ,– հավաստիացնում է Բաղրամյանը,– ազատության համար մղված պայքարում չի սպառվել կամ նվազել:

Արդ ուրեմն, եկեք մենք էլ ոտքի ելնենք, սթափեցնենք մեզ ծուլության թմբիրից, որպեսզի մենք կենդանի, բայց չննջենք մեռելի պես, առաջ նետվենք և համախոհ ու միաբան պայքարենք հանուն մեր ազգի ու հայրենիքի ազատագրության[190]:

«Այսպես հավետ ու հարատև վտանգվելով՝ հալածանքի
փորձության մեջ կմնանք
Մինչև որ մեր թշվառությունը, ավերվելն ու տառապանքը
գիտակցել կարողանանք»[191],– եզրակացնում է Բաղրամյանը:

Այդ թշվառությունները հասկանալու և այդ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է, որ հայ ծնողները իրենց որդիներին կրթված ու մարզված վիճակում պահեն, նույնիսկ զբոսանքի ժամանակ զինավարժությամբ զբաղվեն:

Համազգային կրթության միջոցով ազգը լուսավորելու գաղափարը նույնպես նոր երևույթ է հայ իրականության մեջ՝ նույնպես կապված բուրժուական հարաբերությունների սաղմնավորման հետ: Ըստ Է. Գելների, գրագիտության մակարդակը կապված է մարդկային պատմության երեք մեծ շրջափուլերի հետ: Դրանցից առաջինը վաղ պետությունների ու պետական հարաբերությունների առաջացման

---

189 **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 36:

190 Նշվ աշխ., էջ 38:

191 **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 16:

շրջանն է, միջինում՝ կամ հողագործականում գրագիտությունը դառնում է մի քանիսի արտոնությունը, բայց մշակութային ու ճանաչողական արժեքները կուտակելու և կենտրոնացնելու բեղուն հնարավորություն է տալիս: Սակայն դրանց հեղինակներն ու կրողները կղերականներն էին: Համատարած գրագիտության անհրաժեշտությունը առաջանում է արդյունաբերական համակարգում: Սրա անդամները պետք է ունենային ընդհանուր կրթություն, ինչը հնարավորություն կտար նրանց յուրացնելու ուսումնական ձեռնարկներն ու հրահանգները՝ նոր գործին կամ զբաղմունքին անցնելիս: Իրենց գործունեության ընթացքում սրանք պետք է անընդհատ հաղորդակցվեն մեծ քանակով այնպիսի մարդկանց հետ, որոնց հետ առաջ չեն էլ շփվել: Պետք է ունակ լինեն հաղորդակցվելու՝ գրավոր, անձնական այնպիսի ուղերձներով, որոնք հասցեագրված լինեն որևէ դասի: Ուստի նման հաղորդակցությունը պետք է լիներ ընդհանուր ու ստանդարտ լեզվական միջոցներով ու սխեմաներով: Սոցիալական այս կարգն ապահովող կրթական համակարգը դառնում է ծավալուն ու անխուսափելի: Կրթական այս համակարգին սպասարկողները համապատասխան են ողջ հասարակությանը, ու սրանց փոխարինելիության աստիճանն առնվազն այնքան է, որքան հասարակության մյուս հատվածներում: Մարդու աշխատանք գտնելու հնարավորությունը, արժանապատվությունը, ապահովությունն ու ինքնահարգանքը, կախված է նրա կրթությունից: Այն փաստի գիտակցումը, որ ոչ թե բանավոր-ժողովրդական, այլ դպրոցով փոխանցվող կրթությունն է, որ արդյունաբերական շրջանի մարդուն շնորհում է դրա պետականությունը, արժանապատվությունն ու ինքնահարգանքը, հույժ կարևոր ու կենտրոնական է, քանի որ ոչ մի ուրիշ բան ունակ չէ դրան փոխարինելու[192]:

Բնական է, որ Բաղրամյանի ժամանակ լեռների ծերպերին պատսպարված վանքերի խցերում մի կերպ գոյատևող կրթական հաստատությունները, նոր ժամանակներում առաջադրվող մեծագույն խնդիրները՝ հայ ժողովրդին միջնադարյան թմրության քնից հանելու, կազմակերպելու, համախմբելու, ազգ կերտելու և նրան ազգային ազատագրական պայքարի դուրս բերելու խնդիրները լուծել չէին կարող: Այս գիտակցումով է Մ. Բաղրամյանը ազգային բյուրե-

[192] Տես **Է. Գելներ**, Ազգերը և ազգայնականությունը, Եր., 2003, էջ 50:

ղացման ու նրա ազատագրության պայքարի դուրս բերելու հիմքում դնում նոր, համաեվրոպական չափանիշ ունեցող աշխարհիկ դպրոցական կրթության խնդիրը: Այդ կրթությամբ էր, որ պետք է ազգը զարթոնք ապրեր, ձևավորվեր ազգի էլիտան (ընտրանին), որի տեղն ու դերը շատ էր կարևորում մեծ լուսավորիչը: Սա մի նոր երևույթ էր հայ իրականության մեջ, որին առաջինը համակարգված լուծում տվեց Բաղրամյանը: Մինչև այսօր,– տրտնջում է Բաղրամյանը,– ոչ ոք մեր մեջ չգտնվեց, որ ցույց տար ազգային համախմբման ուղին:

«Ինչպես մարմին մի անգլուխ, որ փռվել է գետնի վրա
դիաթավալ ու դիտապաստ,
Այդպես էլ ազգը մեր որքան ժամանակներ
մնացել է երեսնիվայր ու անտրտունջ»[193]:

Հայտնի է, որ միջնադարյան հայ ընտրանին՝ ազնվականությունը, ազատագրական պայքարի երկչոտ փորձերից հետո կամ դավանափոխ է եղել, կամ դուրս մղվել հայոց պատմության թատերաբեմից: Հայաստանի լեռնային մի քանի շրջաններում՝ Սյունիքում, Արցախում, Սասունում էին միայն պահպանվել նրանց փոքրաթիվ շառավիղները, որոնց ջանքերով էլ մարմրին էին տալիս ազգային ազատագրական շարժման առանձին առկայծումները: XVIII դարում քչերին էր հայտնի, որ հայերը սերում էին մի մշակույթից, որ ծնել են հերոսներ:

Չպահպանվեցին ոչ իմաստունների գրքերը և ոչ էլ մեր նախնիների կամ հների պատմագրքերը,– գրում է Բաղրամյանը,– որոնք ընթերցելով՝ իմանայինք զորավոր կտրիճների ու արիների վարքը և դրանց միջոցով հասու դառնալով նրանց գործերին, մենք էլ հետևեինք մեր նախնիների քաջագործություններին: Այդ պատճառով էլ շատերը չեն լսել մեր նախնիների ու թագավորների քաջագործությունները: Այսպես է կործանվում ամեն մի իշխանություն,– եզրակացնում է Բաղրամյանը,– ով չունի ընտրյալ այրեր, ընտրանի, որի շնորհիվ ազգը կարողանա ոտքի կանգնել, նա ապագա չունի: Իրոք, հայ ազնվականության ոչնչացման հետևանքով է հայ ազգը կազմալուծվել, փոշիացել ու ստրկացվել:

Հայաստանի քաղաքական վերածնունդը կարող է տեղի ունենալ ազգային ընտրանու միջոցով, որը կարող է ծնվել միմիայն

[193] **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 15:

կրթության միջոցով: Այդ նպատակով, հայացնելով, ազգայնացնելով լուսավորական դարաշրջանի Արևմտաեվրոպական հսկա միտքը, Բաղրամյանը ձգտում էր նոր կրթության ու մշակույթի միջոցով ստեղծել ազգին համախմբող ու ազատագրության առաջնորդող նոր ընտրանի: Հենց նաև այս իմաստով է Բաղրամյանը դարի ամենից նկատելի ու ինքնատիպ մտավորականը, որը մարմնավորում է իր ժողովրդի ազգային ու հասարակական իղձերն ու ձգտումները:

Ազգի քաղաքական կյանքի կազմակերպման առումով ամենօրյա մասնակցություն ունեցող ընտրանին, ըստ Բաղրամյանի, ինչպիսի որակական հատկանիշներ պետք է ունենա: Հայտնի է, որ ազգային շարժումը քառսից դեպի կանոնակարգվածությունը ենթադրում է, որ ազգի սոցիալական բուրգի գագաթին գտնվող մարդկանց խումբը բանիմաց, նվիրված, հայրենասեր, բարոյական և այլ համամարդկային արժեքներով օժտված լինի: Նա պետք է իր գործունեության ոլորտում բարձրագույն չափանիշի կրողը լինի, քաղաքականապես առավել գործունյա սուբյեկտ, բացառիկ մտավոր կարողություններով օժտված: Ընտրանին մտածողների, կառավարողների և հասարակական արժեքները համախմբողների խավ է: Դեռ Կոնֆուցիոսն էր նշում, որ «Կառավարիչը պետք է լինի կառավարիչ, ծառան՝ ծառա, հայրը՝ հայր, որդին՝ որդի»[194]:

Բաղրամյանի համար ևս կարևորվում են հասարակական արդար հարաբերությունները, ընտրանու տեղը և դերը ազգային կյանքում, գտնելով, որ ժողովուրդը պետք է հանդես բերի խոնարհություն, հնազանդություն, հարգանք, յուրաքանչյուրին գնահատի ազգային կյանքում ցուցաբերած իր արժանիքներին համապատասխան:

«Որ ապիկարն ու փոքրն իրենց փոքրիկությամբ հաշվի առնեն
մեծավորին ու արժանուն
Որ չլինի, թե չիմանան և նվաստին չտարբերեն մեծից,
ժպրհեն, հետամտեն հանդգնության:
Պարտավոր ենք նաև ամենքըս հանապազ մեր դիրքի չափն
ու աստիճանը ճանաչել,
Մեր անելիքը զանց չառնել և տալ հարգս հարգավորաց
ու պատիվս՝ պատվավորաց

[194] Տես **Конфуций**, Лунь 1-ой, Антология мировой политической мысли, М., 1997, т.1, էջ 49:

Եվ տերերին ծառա լինել, հպատակվել, հնազանդվել
իշխաններին ու ամենայն մեր մեծերին,
Լսել խոսքը իմաստունի և գիտունի, ունկնդրել
խրատներին վարդապետի և ուսուցչի:
Պատիվ տալ միշտ և մեծ սիրով մեծարանքի
արժանացնել հանճարավոր և իմաստուն մարդկանց ամեն
Եվ կաթոգին խանդաղատել ու տագնապել՝ ձեռք բերելու
հարմար ուսում և գիտություն»[195]:

Համազգային արդար կյանքը պահանջում է ոչ միայն կառավարող ու մտավոր ընտրանուն գնահատել, այլ նաև ըստ արժանվույն գնահատել արհեստավոր վարպետներին, խիզախ ու քաջամարտիկ զինվորներին, հատկապես, հայրենիքի համար զոհված նահատակներին: Միայն այս ճանապարհով կարող է ազգը ոտքի կանգնել, հզորանալ ու ազատագրվել:

«Եվ այդպիսով, երբ կատարենք դրանք, ընդմիշտ
ի վիճակի կլինենք դառնալ հզոր ու լուսավոր՝
Իբրև տիպար ու օրինակ ունենալով մեզ շատերին,
որոնց պետք է մենք ճանաչենք
Եվ շարունակ պետք է ջանանք նմանվելու
մենք ազգերին մեծահարուստ, ուսյալ ու կիրթ»[196]:

Ահա այսպես է Բաղրամյանը կաղապարում հայոց ազգային ընտրանու գաղափարը, որպես համակարգված սոցիալական ամբողջություն:

Մ. Բաղրամյանի այս բացառիկ աշխատությունը պետք է լուսաբանել գաղափարական նոր կողմնորոշման լույսի տակ: Ինչպես Բաղրամյանը, այնպես էլ հայ ազգային ազատագրական շարժման հնդկահայ մյուս գործիչները, կարևորելով նոր հասարակական հարաբերությունների խնդիրը, նույնիսկ ճորտատիրական Ռուսաստանի տարածքում ապրող հայերի համար տնտեսական ազատություն էին պահանջում. «Ի յազգէ մերմէ մի լինցի ծառայ, այլ միաբան ազատ»,– սրանք այնպիսի հեղաշրջող գաղափարներ են,– նշում է Թադ. Ավդալբեգյանը, որոնք ոչ միայն հայ, այլև օտար գրականու-

[195] **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 40:

[196] **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 41:

թյան մեջ անգամ նշանավոր կդարձնեին այս գաղափարները ստեղծագործողներին[197]:

Մ. Բաղրամյանը անդրադառնում է նաև ազգային-ազատագրական շարժման տնտեսական հիմքի հիմնախնդրին: Թուրք-պարսկական մերժվող ռազմա-ֆեոդալական հարաբերություններին փոխարինելու է գալիս ազատագրված հայրենիքի և արդյունաբերական հասարակության անցման արժեքային համակարգը:

Քաղաքական անկախության ձգտող ժողովրդի ազգային-ազատագրական պատերազմը պետք է ունենա տնտեսական հզոր հիմք, որի վրա խարսխվի ազգային պետությունը և որը պետք է որոշի հասարակության զարգացման ուղղությունը: Նվաճված քաղաքական ազատությունը և պահպանված տնտեսական կախվածությունը միշտ էլ ստրկացված կպահի հասարակությանը: Ազատագրվող երկրի ինքնիշխանության վերականգնման գլխավոր պայմանը, իր բնական հարստության նկատմամբ տնտեսական անկախության նվաճումն է: Իսկ տնտեսական ինքնուրույնություն նվաճելու արմատական միջոցը սեփականության ազգայնացումն է: Նրա վերածումը էկոնոմիկայի գերակշռող գործոնի՝ տնտեսական անկախության նվաճման և սոցիալական առաջադիմության կարևորագույն միջոցն է: Բաղրամյանի համոզմամբ, եթե Հայաստանի բնական ռեսուրսները ենթարկվեն համազգային շահերին, ապա նա կդառնա սոցիալ-տնտեսական և քաղաքական հզոր գործոն, օտարի լծի թոթափման համար մղվող պայքարում: Հայ ազգաբնակչությունից միայն գլխահարկ ստացող թուրք-պարսկական ֆեոդալների խավը յուրացնում և վատնում է հայ ժողովրդի վիթխարի հարստությունը: Ինչպես նախընթաց շարադրանքում տեսանք, այս կապակցությամբ Բաղրամյանը մի ինքնատիպ հաշվարկ է կատարում: Պատմական Հայաստանի 20 նահանգներում ապրող հայերի թիվը հասցնում է 13 միլիոն 932 հազար բնակչի, որոնցից, մոտավոր հաշվարկներով 5 միլիոն 224 հազար 500 շունչը պարսիկներին ու թուրքերին վճարում են 20 միլիոն 898 հազար ոսկի: «Ահա տեսեք,– ցավով նշում է Բաղրամյանը,– թե կամավոր կերպով ինչքան անբավ ու անքանակ դրամ ենք վճարում այլազգիներին՝ այդ ոչինչ համարելով մեր աչքում, դեռ չհաշված մյուս վճարները...: Եթե ամբողջն ընդգրկելու

[197] Տե՛ս **Թադ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջ 271-272:

լինեինք՝ նկատի ունենալով, թե որքան հարստություն՝ ոսկի, արծաթ, զարդեղեն և ուրիշ բաներ են այլազգիները շարունակ մեզնից քաշում, ապա անզոր կլինենք դրանց թիվն ու հաշիվը գրի առնել… Նրանք մեր հավատքը հայհոյելով, մեր պատիվն անարգելով ու արհամարհելով… ավելին են ստանում մեզնից»[198]:

Ազգային-ազատագրական պայքարի տնտեսական հիմքի ստեղծման մի այլ ուշագրավ աղբյուր էլ է հայտնագործում Բաղրամյանը՝ դա յուրատեսակ *համազգային հիմնադրամի ստեղծման գաղափարն* է: Նրա կարծիքով, աշխարհով մեկ սփռված հայությունը նույնպես կարող էր մեծ միջոցներ տրամադրել Հայաստանի ազատագրության գործին: Եկեք ուրեմն,– կոչ է անում մեծ հայրենասերը,– «Սեր արթնացնենք մեր սրտերում, գուցե սիրո արծարծումով ու բորբոքմամբ խղճանք ընկած ու տառապած մեր մայր Հայաստանին և ողորմություն տանք նրան՝ որպես կարեկցանքի արժանի մեկին: Իսկ եթե ցանկանանք, տիրոջ կամքով ողորմելը դժվար չէ, այլ, ինչպես ստորև կտեսնենք, դյուրին է: Այն ողորմությունը, որը մեզնից է ելնելու, ..բնավ էլ չի պակասեցնի մեր ինչքը…որովհետև մեր օգուտի համար ենք կատարում: Չէ որ ողորմության արժանին մեր սեփական Հայաստանն է, իսկ ողորմություն տվողը՝ հայոց օրհնյալ ազգը: Բայց երբ այդ ողորմությունը մուտք գործի մեր հայրենիք, ապա կարող է լիուլի սնել մարտիկներին՝ դառնալով նրանց ռոճկավարձ, Աստծով ոտքի հանել մեր ընկած ազգը, մեզնից վերցնել նախատինքը և մեզ ազատագրել նրանցից, որոնց ձեռքին հանապազ տանջվում ենք»[199]:

Եթե որևէ մեկը հայ ժողովրդի ազատագրության պայքարի գլուխ կանգնի, թող բոլորն ընդառաջ գնան նրան, նրա շուրջը համախըմբվեն,– կոչ է անում Բաղրամյանը, այդ դեպքում արդյունքը ակնառու կլինի: Կարևորելով ազգային միասնության գաղափարը, Բաղրամյանը նշում է,– որ մեր թշնամիները աղոթում են ու խնդրում Աստծոն, որ քրիստոնյաները չմիաբանվեն, քանի որ լավ գիտեն, որ մի հայ երիտասարդը կարող է հաղթել քսանապատիկ ավելի այլազգիների:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ» անմահ ստեղծագործությունը տալիս է Հայաստանի

---

[198] **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 162:

[199] **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 165:

բաղձալի ազատագրության նաև տնտեսական հիմնավորումը, որը նույնքան կուռ ու ամբողջական է, որքան պատմական, քաղաքական ու փիլիսոփայական հիմնավորումները:

Ռազմատենչ հարևանների հետ խաղաղ հարաբերությունների պահպանման հարցը նույնպես շատ ուշագրավ տեղ է գրավում Մովսես Բաղրամյանի քաղաքական հայացքներում: «Սակայն իմացեք նաև հետևյալը,– ազատագրական պայքարի կոչ անելուց հետո գրում է Բաղրամյանը,– ինչ որ ասացինք, այդ ամենից բնավ էլ մի ենթադրեք, թե մենք ունեցել ենք այս նպատակը, որ, իբր, դրանով մենք ցանկացել ենք, որ հայ ազգն ապստամբի այլազգիների կամ իր կառավարիչների դեմ և աչք դնի նրանց ունեցվածքի վրա կամ թե նրանց որևէ վնաս պատճառի: Քավ լիցի, դա քրիստոնյաներին պատշաճ բան չէ»[200]: Պարզապես անտեղի բախումներից ու աղետներից խուսափելով, Բաղրամյանը խորհուրդ է տալիս զգույշ լինել ու լավ նախապատրաստվել: Նա հստակորեն սահմանազատում է ազատագրության համար մղվող արդարացի պատերազմը զավթողական նպատակներ հետապնդող անարդարացի պատերազմներից: Մ. Բաղրամյանը քաջ գիտակցում է, որ պատերազմները հսկայական զոհեր ու նյութական վնասներ են պատճառում մարդկանց, բայց դրանցից՝ ազգային-ազատագրականը անխուսափելի է և արդարացված: Նա ծրագրում էր օտար բռնակալության և ֆեոդալիզմի օրորոցում նիրհած հայ ժողովրդին ազատագրել և օտար զավթիչների լծից և միջնադարյան ավատատիրական կապանքներից, դրանով իսկ դառնալով թե ազգային ազատագրության առաջնորդ, թե սոցիալական ազատագրության քարոզիչ: «Երբ դուք ձեռք բերեք մեր այս հորդորական գրքույկը,– իր ընթերցողներին է դիմում Բաղրամյանը,– մի կարծեք թե ինչ-որ նոր բան ենք կամենում կատարել, կամ այլոց իշխանությունը հափշտակելու ակնկալություն ունենք: Քավ լիցի: Մենք ոչ այլ ինչ ենք ցանկանում, այն էլ հոգու չափ, եթե ոչ միայն ետ ստանալ մեր սեփական և արդար ժառանգությունը, որ կորցրել ենք մեր անկարգության ու ծուլության պատճառով»[201]:

Բաղրամյանը առաջադրում է ազգային-ազատագրական շարժման մի նոր ու կարևոր գաղափար: Ազատագրության դրոշ բարձ-

---

[200] **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 165:

[201] Նշվ. աշխ., էջ 55:

ռացնելու համար խորհուրդ է տալիս լարել բոլոր ուժերը, այն պետք է ստեղծի համազգային շարժման խմորման նպաստող իրադրություն, ակտիվ պայքարի հանի ժողովրդական ամենալայն զանգվածներին: «Մենք կամենում ենք ասել հետևյալը,– գրում է նա,– եթե ոտքի ելնեն Հայաստան աշխարհում եղած հայ իշխանները, կամ էլ եթե որևէ մեկը ջանք թափի հայ ժողովրդի ազատագրության համար, ապա թող բոլորն ընդառաջ գնան և մեկը մյուսից ավելի թող օգնեն նրան՝ ընդորում, ինչպես վերևում ասացինք, ոչ թե ինչ-որ մեծ դժկամությամբ, այլ հաճությամբ»[202]:

Շարժման վերելքի այդպիսի պահեր ստեղծվում են ոչ թե միշտ, այլ միայն պատմական որոշակի ակնթարթում: Նրա ստեղծման ժամանակը, զարգացման ձևերն ու տեմպերը կապված են իրադրությունը վերահսկելու ազատագրության պայքարը գլխավորողների ունակություններից, պայքարող ժողովրդի ուժից, երկրի սոցիալ-քաղաքական իրավիճակից: Այս բոլորի գիտակցումով, Բաղրամյանը մեծագույն հայտնագործություն է կատարում նաև ազգային-ազատագրական պայքարի դրոշը բարձրացնելու պահի ճիշտ ընտրության ռազմավարության ասպարեզում:

«Ուստի և մենք եկեք, եկեք ոտքի ելնենք
ու այլևս քնով տարված՝ չմրափենք,
Արթնանալով թմրությունից ծուլության՝ մեզ արիաբար
սթափեցնենք, զգաստանանք
Եվ, աչալուրջ ուշք դնելով, մենք խելամիտ
նայենք ժամ ու ժամանակին,
Որ չլինի. թե հարմար պահն ու առիթը չգիտակցենք
և կորցնենք, երբ որ նրանք մեր ձեռքն ընկնեն:
Ահա անցավ այնքան թխպոտ, խավարամած աղջամուղջը
գիշերային,
Եվ ծագումը արեգական վրա հասավ ու մերձեցավ,
որ լույս բացվի մեր աշխարհին...»[203]:

Մ. Բաղրամյանը հայ երիտասարդներից պահանջում է զինված, վարժված, կազմ ու պատրաստ սպասել, մինչև հարմար պահը գա: Ազատության պայքարի դրոշը պետք է բարձրացնել ճիշտ ժամանա-

[202] Նշվ. աշխ., էջ 165:

[203] **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 41:

կին: Բնականաբար, այդ պահը օբյեկտիվ իրողությունների միագումար է, որն ունի որոշակի հատկանիշներ: Դրանք են.

Նախ, տիրապետող հզոր պետության համար պետք է անհրաժեշտ, ճգնաժամային իրավիճակ ստեղծվի:

Երկրորդ, տիրապետող ազգի և ճնշված ազգի միջև սոցիալական հակամարտությունները պետք է առավել սրվեն, կապված տնտեսական աղետների, պատերազմների և այլ արտակարգ դեպքերի հետ:

Երրորդ, ճնշված ազգի զանգվածների քաղաքական ակտիվությունը պետք է բարձր լինի, զերծ անպատասխանատվությունից ու անտարբերությունից:

Չորրորդ, ազատագրական շարժման հաջողությունների վրա նշանակալի ազդեցություն է թողնում նաև միջազգային իրավիճակը:

Բացի այս օբյեկտիվ պայմաններից, Բաղրամյանը ի հայտ է բերում նաև սուբյեկտիվ գործոնի գաղափարը: Ինչպես տեսանք, սուբյեկտիվ գործոնի կարևորագույն բաղադրամասը լայն զանգվածներին իր ետևից տանելու ընդունակ ազգային մտավորականությունն ու քաղաքական ընտրանին է: Բաղրամյանը համոզված էր, որ եթե սուբյեկիվ գործոնը զարգացում չստանա, ապա ազգային ազատագրական պայքարը կամ բոլորովին չի ծավալվի, կամ պարտություն կկրի:

Մովսես Բաղրամյանը հայտնագործում է նաև ազգային-ազատագրական պայքարի շարժիչ ուժի գաղափարը: Այդ ուժը հայ կորովամիտ երիտասարդությունն է: Շարժման վերելքի պահին նա է, որ պետք է դառնա հզոր հասարակական- քաղաքական ուժ: Հայտնի է, որ ամեն մի պատմական դարաշրջան ծնում է անհատի որոշակի սոցիալական նոր տեսակ:

Բաղրամյանի «Նոր տետրակը» ինքնին ստեղծում է սոցիալական մի թարմ ու առողջ հոգևոր միջավայր, որի բովում պետք է փոխվի նաև ինքը՝ մարդը: Փոխվում է հասարակության մեջ ունեցած նրա տեղն ու դերը: Այդ նոր երիտասարդները ազատությունը մեկնաբանում են ոչ միայն հայրենիքի, այլև ոգու ազատության, կամքի ազատության, արտաքին հանգամանքներից բխող պայմաններին համապատասխան գործելու ազատություն: Ահա նաև դրանում է կայանում Մովսես Բաղրամյանի այս ստեղծագործության համամարդկային անանց արժեքը:

ԱՄՓՈՓՈՒՄ

– XVIII դարի նշանավոր հրապարակախոս և հասարակական գործիչ Մովսես Բաղրամյանի գրական ժառանգությունը քիչ է ուսումնասիրվել, իսկ քաղաքական հրապարակախոսության պատմության տեսանկյունից գրեթե չի ուսումնասիրվել:

– Նախընթաց թռուցիկ ուսումնասիրություններում ընդգծվել է այն տեսակետը, թե Բաղրամյանը կրել է Հ. Էմինի, իսկ Շ. Շահամիրյանը Մ. Բաղրամյանի ազդեցությունը: Ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունքում ճշտել ենք այդ ազդեցությունների չափերն ու շրջանակները:

Բաղրամյանի հնարավոր ազդեցությունը Անգլիայում կրթություն ստացած Հ. Էմինից կարող էր լինել հնգամյա այն դեգերումների ժամանակ, որ 1762–1767 թթ. իրականացնում էին նրանք Հայաստանում և հարակից երկրներում: Այդ համագործակցությունը, առաջին հերթին, այդ գործիչների գաղափարական համերաշխության հետևանքն էր: Շրջագայության ընթացքում Բաղրամյանը բնականաբար հաղորդակցվեց ոչ միայն Հ. Էմինի գաղափարներին, այլև, հըսկայական փաստական նյութ հավաքեց հայ իրականության մասին, որոնց հիման վրա էլ կատարեց կարևոր ընդհանրացումներ XVIII դարի տիրապետող իրականության, հայոց պատմության, պատմության, փիլիսոփայության, Հայաստանի քաղաքական ու տնտեսական աշխարհագրության և Հայաստանի ազատագրության տեսության մշակման ասպարեզում:

Այս երախտավորների որդեգրած Հայաստանի ազատագրության ռազմավարության հարցում նրանք նույնիսկ տարբեր կարծիքներ ունեին: Էմինը մի առիթով նշում է, որ Մցխեթում՝ 1767 թվականին Մ. Բաղրամյանը հեռացավ, որովհետև Վրաստանի հետ համագործակցման հարցում համաձայն չէր իր հետ, հնգամյա փորձով Բաղրամյանը համոզվել էր, որ Վրաստանը տվյալ պահին Հայաստանին ոչնչով օգնել չի կարող: Եվ Էմինը խոստովանում է, որ «Նա ավելի լավ էր հասկանում, քան Էմինը, թե անիմաստ է հետևել Հերակլին…»[204]:

Այս կապակցությամբ ճշմարիտը թերևս այն է, որ Մ. Բաղրամյա-

[204] **Հ. Էմին**, նշվ. աշխ., էջ 406:

նը, ապրելով պատմական նույն ժամանակահատվածում, երբ արևմուտքը վերափոխվում էր հսկայական քայլերով, ինչպես աշխարհի առաջավոր մտածողների, այնպես էլ Էմինի, Բաղրամյանի, Շահամիրյանի և մյուսների առջև նույն խնդիրն է դրել, բացատրել այդ նոր երևույթները և դրա օգնությամբ ճանապարհ հարթել ի նպաստ հայ ժողովրդի բարօրության: Ահա համաեվրոպական այդ մեծ տեղաշարժերի, և ոչ թե առանձին անհատների, ազդեցության ֆոնի վրա պետք է լուսաբանել Մովսես Բաղրամյանի, և նրա զինակիցների, որպես իր դարի նոր մտածողության եվրոպական չափանիշները կրողների ու կերտողների քաղաքական հայացքները:

– Հնդկահայ համայնքը այն միջավայրն էր, որում առաջինը ճեղքվածքներ տվեցին միջնադարյան ավատատիրական հարաբերությունները, և այնտեղից ազգային կյանք թափանցեցին արևմտյան բուրժուական լուսավորության կենարար շողերը: Այս նոր մթնոլորտում գաղութահայ հասարակությունը քաղաքականապես հասունացավ և ծնունդ տվեց նախադեպը չունեցող մի երևույթի՝ Մադրասի քաղաքական խմբակին, որին բախտ էր վիճակվել դիմորոշել հայ ժողովրդին և հայտնագործել Հայաստանի ազատագրության այն նախաշավիղը, որով քայլելու էր հայ ժողովուրդը հաջորդ մեկ ու կես դարում:

– Մադրասի քաղաքական խմբակի ծնունդը նախ և առաջ պայմանավորված էր մադրասահայ համայնքի քաղաքական հասունությամբ: Այդ բարձր մակարդակը ձեռք էր բերվել տարածաշրջանում արևմտաեվրոպական բուրժուական հարաբերությունների առկայության շնորհիվ: Այս խմբակի, նրա տպարանի և «Ազդարար» ամսագրի ստեղծագործական կոլեկտիվի հայրենանվեր գործունեության շնորհիվ Մադրասը դարձավ հայ հասարակական մտքի և լուսավորական շարժման համազգային կենտրոնը: Այս խմբակի գործունեությամբ հայ իրականության մեջ սկզբնավորվեցին լիբերալ-բուրժուական հոսանքի սաղմերը, ազգային պետականության վերակերտման XIV դարից մոռացված գաղափարը, ինչպես նաև՝ հայոց ազգային գաղափարախոսության՝ «ազգայնականության» հիմնադրույթները: Նրա գործունեությամբ լույս աշխարհ եկավ հայոց առաջին պարբերականը՝ «Ազդարարը»:

– Անտրամաբանական ու սխալ է այն կարծիքը, թե իբր Մադրասում գոյություն են ունեցել մի քանի տպարաններ, գաղափարական

ու քաղաքական տարբեր հոսանքներ, թե իբր Հ. Շմավոնյանի պարբերականը չի հետևել Մ. Բաղրամյանի ու Շ. Շահամիրյանի ուղեգծին և այլն: Մադրասի հայ համայնքի նշանավոր գործիչները միևնույն նպատակն են հետապնդել, ստեղծագործական նույն ընտանիքի անդամներն են հանդիսացել: Ավելին, Հ. Շմավոնյանի պարբերականի միջոցով Շ. Շահամիրյանի, Մ. Բաղրամյանի և մյուսների աշխատություններում առաջադրված գաղափարները ավելի առարկայական են դարձել, գիտական նեղ շրջանակներից դուրս են եկել և դարձել ընթերցող լայն զանգվածների սեփականությունը:

– Անդրադառնալով «Ազդարարի» էջերում գրական ծածկանունով հանդես եկող հրապարակախոսներին՝ «Հայի որդի Հային» և «Ազգակցին» տեսնում ենք, որ «Հայի որդի Հայը» Մովսես Բաղրամյանն է, իսկ «Ազգակիցը» Թ. Սոգինյանը, ով հանդես է եկել նաև «Ուրախակից», «Ուրախակից բարեկամ» ծածկանուններով:

– Հայ պարբերական մամուլը ասպարեզ բերելու գործում Մադրասը առաջ անցավ ոչ միայն արևելյան շատ ազգերից, այլև հայ մշակույթի այնպիսի խոշոր կենտրոններից, ինչպիսիք էին Վենետիկն ու Վիեննան, Կ. Պոլիսն ու Թիֆլիսը:

– Ատենախոսության երկրորդ գլխի առաջին պարագրաֆում, անդրադառնալով հրապարակախոսության տեսության հիմնահարցին, ռուսական և եվրոպական հետազոտողների այդ խնդրին վերաբերող նյութերի ուսումնասիրությամբ տեսական հող ենք նախապատրաստել հրապարակախոսության ժանրի ստեղծագործությունները հայ իրականություն տեղափոխելու և քաղաքագիտական դաշտ դուրս բերելու համար: Բաղրամյան-հրապարակախոսի քաղաքական հայացքները պարզաբանելու նպատակով ենք անդրադարձել քաղաքական հրապարակախոսության առարկայի, մեթոդի, գործառույթների, նպատակների, ժանրերի խնդիրներին և հիմնավորել, որ Բաղրամյան-հրապարակախոսը հանդես է եկել որպես հետազոտող, որը հրապարակախոսության մեթոդներով է ստեղծել համոզիչ գիտելիքներ արդիականության և իր հետապնդած նպատակների մասին:

– Մ. Բաղրամյանի օրինակով հիմնավորել, որ հայ իրականության մեջ քաղաքական հրապարակախոսությունը ձևավորվել և նոր որակ է ձեռք բերել XVIII դարում:

– «Նոր տետրակի»-ի առաջին չորս գլուխների բովանդակությու-

նը նման է Մովսես Խերենացու «Ողբից» մինչև Խաչատուր Աբովյանի «Ողբ Հայրենասերի» վեպը ձգվող «Ողբերին», սակայն Բաղրամյանի «ողբը» ճգնավորական, հուսահատական, սովորական ողբերգություն չէ: Նրա համոզմամբ կորովն ու կամքը և նպատակամղված պայքարը կարող են բարեհաջող ելքի հասցնել հայ ժողովրդին: Այնտեղ արտացոլվել են հայ ժողովրդի հայրենասիրական, քաղաքական ու քաղաքացիական տրամադրությունները:

– Մովսես Բաղրամյանի հրապարակախոսական գործունեությունը ամբողջացնելու նպատակով անդրադարձել ենք նրա այլ ստեղծագործություններին ևս, և նոր նյութերի հիման վրա ցույց տվել, որ նա ոչ միայն «Նոր տետրակի» հեղինակն է, այլ նաև, այլ աշխատությունների, որոնցից «Ազդարարում» հրատարակված երկու աշխատությունները առաջին բանավիճային հրապարակախոսական ստեղծագործություններն են մեզանում:

– Քննարկման հարց դարձնելով Բաղրամյանի հրապարակախոսության մեթոդի ու գործառույթների հիմնախնդիրները, եկանք այն եզրակացության, որ Բաղրամյանը կիրառել է հրապարակախոսության մեջ տարածված պոստուլացման մեթոդը: Նրա համար պոստուլատ-կանխադրույթները, որպես անառարկելի ճշմարտություններ հիմնավոր փաստարկներ են աստվածաշնչային ասույթները և հայոց պատմության հանրաճանաչ ընդհանրացումները: «Նոր տետրակը» կատարում է հասարակական-ուսուցողական ճանաչողության և հրապարակախոսությանը բնորոշ այլ գործառույթներ: Հրապարակախոսությանը բնորոշ մեթոդներով է Բաղրամյանը ստեղծել հստակ գիտելիք արդիականության մասին: Կատարելով հասարակական դաստիարակ-մանկավարժի դեր, ձգտել է հայ հասարակությանը դաստիարակել ազգային արժանապատվության ոգով:

– Շատ ուշագրավ է, որ ազգային դաստիարակության մասին բերած օրինակներում ոչ մի բացասական կերպար չի անձնավորում, նույնիսկ Արցախի ինքնիշխանությունը խաթարող գլխավոր մեղավորը չի անձնավորվում: Դրա փոխարեն նա մեծ ոգևորությամբ անձնավորում, մարմնավորում ու անմահացնում է հայրենիքի նվիրյալներ՝ Արտաշեսին, Տիգրանին, Արամին, ձգտում է հայրենասեր գործիչների անհատական վարքագծի վրա հենվելով, ստեղծել ազգային համոզմունք: Այսինքն, Բաղրամյանը ոչ թե ազգի խամրած հատվածից է փորձում անհատականություն ստեղծել, այլ անհատա-

կանությունից՝ ազգային համոզմունք: Ուշագրավ է, որ Բաղրամյանը համոզմունքը և հասարակական կարծիքը չի դիտում որպես ճանաչված ու գնահատված իրողությունների անկառույց միագումար: Նա ստեղծում է գիտականորեն մշակված գաղափարախոսություն, մշակում միջնադարյան ցաք ու ցրիվ հայ զանգվածից քաղաքական ազգ կերտելու հստակ ծրագիր: Անդրադառնալով հայ ազգի ձևավորման գործընթացի օբյեկտիվ ընթացքի և դրանում հայ մտավորականության բերած նպաստի խնդիրներին, եկանք այն եզրակացության, որ հայ ազգային կոնսոլիդացիայի գործընթացը և այն առաջ մղող հայ մտավորականության գործունեությունը ընթացել է երեք փուլով:

– Առաջին փուլը համընկնում է Մխիթարյանների գործունեության հետ, որում մայրենի լեզվի, մշակույթի, ազգային պատմության ու էթնիկական գծերի հետազոտությունների միջոցով նրանք ոչ միայն ինքնաճանաչ դարձան, այլև աշխարհին ներկայացրին հայ ժողովրդին:

Երկրորդ փուլը համընկնում է Մադրասի քաղաքական խմբակի գործունեության հետ, որում լայնամասշտաբ գիտա-քարոզչության հետևանքով նոր աստիճանի բարձրացավ հայոց ազգային ինքնագիտակցությունը: *Հ. Էմինը ծրագրում էր XVIII դարի հայից հայրենիքն ազատագրելու ընդունակ զինվոր պատրաստել, Մ. Բաղրամյանը՝ թմրության քնի մեջ նիրհող միջնադարյան հայից քաղաքական ազգի համար պիտանի նոր հայ դաստիարակել, Շ. Շահամիրյանը ձգտում էր ազգային պետություն կերտել:* Փաստորեն, նրանք մի նոր աստիճանով բարձրացրին Մխիթարյանների սկսած գործը և այն տեղափոխեցին պրակտիկ պայքարի դաշտ:

Այս հաստատուն հիմքի վրա, համազգային այս մեծ գործընթացը ավարտին հասցրին երրորդ փուլի ներկայացուցիչները՝ XIX դարի հայ հասարակական-քաղաքական հոսանքները, քաղաքական կուսակցությունները, Խ. Աբովյանը, Ռ. Պատկանյանը, Ռաֆֆին և հայոց ազգը քաղաքակիրթ ազգերի շարքը տանող մյուս մեծերը:

– Մ. Բաղրամյանը առաջինն է նկատում և ձգտում բացատրել ժողովրդից ազգ տանող ճանապարհին հասարակության տնտեսական կյանքում, սոցիալական կառուցվածքում և գաղափարախոսության մեջ ծլարձակվող տեղաշարժերը:

Ազգային զարթոնքի այս փուլում նա կարևորում է ազգային-էթնիկական արժեքների՝ պատմական հայրենիքի, միասնական ծագ-

ման, համազգային լեզվի և ազգային հոգեկերտվածքի հիմնախնդիրները:

– XVIII դարում թուրքական ու պարսկական կայսրությունների մեջ տարալուծված Հայաստանը աշխարհի քաղաքական քարտեզի վրայից ջնջվել էր:

Մայր հայրենիքի գաղափարը խամրել էր նաև հայ ժողովրդի հոգում: Ահա այս պայմաններում էր Հայաստանի գաղափարը պատմական հայրենիքի մեծ գաղափար դարձնում Բաղրամյանը:

– Բաղրամյանը քարոզում է նաև հայ ժողովրդի ծագման ընդհանրության, մի նախահորից, անմիջապես արարչի կողմից արարված ազգ լինելու գաղափարը: Կապելով հայ ազգի սկզբնավորումը Սուրբ Գրքի հետ, Բաղրամյանը XVIII դարի հայի համար ստեղծում է մի մտայնություն, որ նախնադարի, միջնադարի և XVIII դարի հայը մի միասնական պատմական ամբողջություն է, օժտված միասնական նպատակներով ու իղձերով: Մ Բաղրամյանը ազգային հոգեկերտվածքը դիտելով որպես ազգի կայացման ու զարգացման կարևոր հատկանիշ, ցույց է տալիս կոնկրետ հանգամանքների, մասնավորապես բնական միջավայրի և պատմական ճակատագրի գործոնների դերն այս ասպարեզում: Նա բացահայտեց հայ ազգի զարթոնքի իրատեսական հնարավորությունները, հայ երիտասարդությանը կրթելու ու լուսավորելու միջոցով նոր որակի ազգային հոգեկերտվածք ստեղծելու ուղիները: Բաղրամյանը իր քարոզներով նախապատրաստեց հայ կյանքի ազգային զարթոնքը:

Անդրադառնալով ազգային գաղափարախոսության հիմնադրույթներին, հիմնավորել ենք, որ այն սկզբնավորվել է որպես մշակութային երևույթ, որի խնդիրն էր վերականգնել ու պահպանել մշակութային արժեքները և հող նախապատրաստել քաղաքական ազգայնականության համար: Մովսես Բաղրամյանը նաև հայոց գաղափարախոսության՝ ազգայնականության հիմքերը դնող մեծ մտավորական էր:

Հայտնի է, որ ազգային գաղափարախոսությունը արևմուտքում ընդհանուր ճանաչում ստացած իրողություն էր դարձել բուրժուական հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, XVII–XVIII դարերում: Հզոր ազգերը ձգտել են տեսականորեն հիմնավորել իրենց գերիշխանության իրավունքը, ճնշված ազգերը՝ հիմնավորել են իրենց գոյապահպանության իրավունքը: Փաստորեն

«*Նոր տետրակը*» *հանդիսանում է հայոց ազգային գաղափարախոսության առաջին մանիֆեստը,* այն պարզ պատճառով, որ այնտեղ առաջին անգամ մշակվում են ազգային գաղափարախոսության այնպիսի հիմնադրույթներ, ինչպիսիք են ազգային *ինքնության, ինքնահամախմբման, և ինքնազատագրման* գաղափարները:

– Ազգային ինքնությունը Բաղրամյանի համար հայ ազգի հազարամյակներով կուտակված ազգային ոգու ինքնագիտակցումն է: Ինքնահամախմբումը այն բնատուր ընդունակությունն է, որով յուրաքանչյուր հանրույթի միասնության ու հզորության մակարդակն է որոշվում:

Ինքնահամախմբման գործոնը Բաղրամյանի համար կարևորվում է հատկապես այն պատճառով, որ հայ ժողովուրդը ոչ միայն ներքին տրոհվածություն ուներ, բաժանված էր Պարսկաստանի և Թուրքիայի միջև, այլև սփռված էր աշխարհով մեկ: Հենց ինքնահամախմբման կարողությունն է բարոյական ու նյութական ուժ տալիս փոքրաթիվ ու տարանջատ ժողովրդին ինքնազատագրման մեծ պայքարում:

Բաղրամյանի կարծիքով չկան ուժեղ ու թույլ ազգեր: Կան ինքնաճանաչ ու համախմբված ազգեր, որոնք անկախ են ու ինքնիշխան, և կան անգիտակից ու անմիաբան ազգեր՝ վտանգված ու գերեվարված: Ինքնազատագրման գաղափարը Բաղրամյանը հանգեցնում է ընդհուպ ինքնազոհության գաղափարին:

– Ազգային-ազատագրական հավերժական պատերազմները, որպես երկարատև, գործընթացներ, իրենց որակական նոր փուլը թևակոխեցին XVII–XVIII դարերում, ժամանակակից ազգերի ձևավորման և բուրժուական մեծ հեղափոխությունների դարաշրջանում: Հասարակական գիտակցություն թափանցած սեփական ազգի իրավունքների պաշտպանության գաղափարը, այս փուլում, իշխող է դառնում նաև հայ իրականության մեջ: Մեր հետազոտությունները այս հիմնախնդրի շուրջ բերեցին այն եզրակացության, որ հայ ազգային ազատագրական շարժումները ծավալվում էին ոչ թե մեկուսի, նպաստավոր միջավայրում, այլ այնպիսի բարդ տարածաշրջանում, որտեղ խաչաձևվում էին մի քանի գերտերությունների, քաղաքակրթությունների ու քաղաքական խմբավորումների արմատական շահերը: Խաղի մեջ մտած տերությունները, բացահայտ կամ քողարկված ձգտում էին փոքրաթիվ ու վտանգված ժողովուրդների

շահերն անտեսելով իրադարձությունների ընթացքը զարգացնել իրենց օգտին: Այս անելանելի պայմաններից դուրս գալու տարբեր ուղիներ են առաջարկվում: Սակայն, միայն Մ. Բաղրամյանն էր, որ հայ ժողովրդի ազատագրության հույսը կապեց հենց հայ ժողովրդի հետ, մերժելով դրսի անշահախնդիր օգնության գաղափարը: Նա միաժամանակ մշակեց հայ ազգի տնտեսական ազատագրության ծրագիրը, ցույց տվեց դրա իրականացման ուղիներն ու միջոցները, հիմնավորեց այն գաղափարը, որ հայ ազգը քաղաքական ազատությունը և ինքնիշխան պետության ստեղծումը չեն կարող իրականանալ, առանց նրա տնտեսական ազատագրության:

Թուրք-պարսկական ռազմա-ֆեոդալական հարաբերությունների փոխարեն առաջադրում է ազատագրված հայրենիքում ազատական տնտեսության անցնելու ծրագիր, մշակելով նաև ազգային-ազատագրական շարժման տնտեսական հիմքի ատեղծման գաղափարը:

«Նոր տետրակում» մշակվել և տեսականորեն հիմնավորվել են ազգային-ազատագրական պայքարի ռազմավարության և մարտավարության հարցերը, պայքարի դրոշ բարձրացնելու ճիշտ պահի ընտրության և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների դերն ու նշանակությունը, ճիշտ են գնահատվել սոցիալ-քաղաքական ուժերի հարաբերակցության իրատեսական արժևորման հարցերը: Հայոց ազգային ազատագրման սուբյեկտիվ գործոնի շարքում նա հատկապես կարևորում է ժողովրդին իր ետևից տանելու, նրան համախմբելու, կազմակերպելու, ոգևորելու ընդունակ ընտրանու դերը: Հենց այդ անհրաժեշտության գիտակցումով է առաջ քաշում եվրոպական չափանիշներով համազգային աշխարհիկ կրթության իրականացման գաղափարը: Իսկ ազգային-ազատագրությունը իրականացնող շարժիչ ուժը հայ երիտասարդությունն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....3

Գլուխ առաջին.
ՄԱԴՐԱՍԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1.1. Մադրասի քաղաքական խմբակը 23
1.2. «Ազդարարի» ծնունդը 31

Գլուխ երկրորդ
«ՆՈՐ ՏԵՏՐԱԿԸ» ԵՎ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ
2.1. Քաղաքական հրապարակախոսության էությունը 43
2.2. Հայ քաղաքական հրապարակախոսության առաջնեկի՝ «Նոր տետրակի» կառուցվածքն ու բովանդակությունը.....54

Գլուխ երրորդ
ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ԱԶԳԱԿԵՐՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
3.1. Ազգի ֆենոմենը 76
3.2. Մովսես Բաղրամյանի ազգակերտման հիմնադրույթները 84

Գլուխ չորրորդ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ
4.1. Հայաստանի ազատագրության հիմնախնդիրը XVIII դարում.....104
4.2. Հայաստանի ազատագրության Մովսես Բաղրամյանի ծրագիրը.....114

ԱՄՓՈՓՈՒՄ.....127

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մ. ԴԱՎԹՅԱՆ, Հ . ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյան

Տպագրված է «Վարդան Մկրտչյան» ԱՁ տպագրատանը:
Երվանդ Քոչար 7-62

Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 8.5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2015